# ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**79**-րդ տարի) **Թիվ-4** (1698) Ապրիլ 2025

# Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

**1- Առաջնորդող**

*Խոհեր՝ ցեղասպանության 110-րդ տարելիցի առիթով (էջ 1-3)*

**2- Հայ դատ**

***Արմեն Կարապետյան***
*Հայոց ցեղասպանության դատապարտումն աշխարհի և մարդկության պարտականությունն է ու իրավասությունը… (էջ 4-7)*

***Անի Մելքոնյան***
*«Սովորական» ցեղասպանություն (էջ 8-11)*

**3- Պատմության լուսարձակ**

***Հայկազուն Ալվրցյան***
*Պարտությունից դեպի նոր պատերազմ (մաս չորրորդ և վերջին) (էջ 12-19)*

***Դերենիկ Մելիքեան***
*Առաջին աշխարհամարտը, թուրք-օսմանցիների ներխուժումը Ատրպատական, հայկական կոտորածները եւ հայութեան բռնագաղթը (Ցեղասպանութիւն, որն սկսուել է պարսկահայերի ջարդերով) (էջ 20-27)*

**4- Ընթերցումներ**

***Մարգարիտա Խաչատրյան***
*Ցավի մորմոքը և ուրացության մեղքը (էջ 28-31)*

**5- Դեմքեր և դեպքեր**

***Մովսէս Ծիրանի***
*Ոգեպաշտը...*
*(Արշիլ Կորքիի Ոստանիկ Ադոյեանի ծննդեան 120-ամեակի առիթով) (էջ 32-38)*

**6- Հասարակություն**

***Մանվել Մկրտչյան***
*Ինքնամերժման խորքային վտանգները (էջ 39-41)*

**6- Հայ կյանք**

***Արմեն Կարապետյան***
*Հայոց ցեղասպանության հուշահամալիրի կառուցումը սերունդների ծանր պայքարի արդյունքն էր… (էջ 42-43)*

**8- Ընկերական զրույցներ**

***Վրէժ-Արմէն***
*Մեզի համար՝ Հայաստան մի՛շտ ամեն բանէ վեր (էջ 44)*

# Խոհեր՝ ցեղասպանության 110-րդ տարելիցի առիթով

Ստամբուլի քաղաքապետ Էքրեմ Իմամօղլուի ձերբակալությունից հետո Թուրքիայում սկսվեցին լայնածավալ հանրահավաքներ: Այդ հանրահավաքների ժամանակ ցուցարարների վեր պարզած պաստառների շարքում էին Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներ Թալեաթի, Ջեմալի, Էնվերի լուսանկարները: Ակնհայտ է, որ թուրք հասարակության համար այսօր էլ երիտթուրք առաջնորդները կենդանի կուռքեր են, ինչն էլ նշանակում է, որ այդ հասարակության համար դրական օրինակներ են նրանց կատարած գործերը, այդ թվում՝ հայ ժողովրդի դեմ իրականացվածը: Հետադարձ հայացք նետելով մինչև 1915 թվական և դրանից էլ առաջ՝ Համիդյան արյունալի ժամանակներ՝ տեսնում ենք, որ կայսրությանը մաս կազմած ժողովուրդների նկատմամբ թուրքական պետական քաղաքականությունը և հասարակական տրամադրությունները հաջորդող տասնամյակների ընթացքում չեն փոխվել: Չնայած 1923 թ. Լոզանի պայմանագրով ազգային փոքրամասնությունների համար Թուրքիայի ստանձնած պարտավորություններին, այս երկիրը չի հեռացել իր ֆաշիստական էությունից, այսօր էլ այնտեղ փոքրամասնությունների համար վտանգավոր են էթնիկական ինքնության զանազան դրսևորումները՝ 1915 -23 թվականներից հետո էլ, տարբեր ժամանակներում դրանց հետևել են հալածանքները, բանտարկությունները, սպանությունները, էթնիկական խմբերի զանգվածային տեղահանումներն ու տեղափոխությունն այլ բնակավայրեր, ինչպես և սահմանափակ տարածքներում իրականացված ջարդերը: Նույն ժամանակ հետևողականորեն շարունակվել է ոչ թուրք ժողովուրդների մշակութային ու հոգևոր արժեքների և սրբավայրերի ոչնչացումն ու թուրքացումը:

Հայ խմբագիր և հասարակական գործիչ Հրանտ Դինքը 2007 թվականին թուրք ազգայնամոլի կրակոցից օրը ցերեկով սպանվեց Ստամբուլի կենտրոնում այն պատճառով, որ բարձրաձայնում էր Հայոց ցեղասպանության մասին: Հրանտ Դինքին չփրկեց այն հանգամանքը, որ Թուրքիայի օրինապաշտ քաղաքացի էր և հավատում էր, թե ժողովրդավարացման ճանապարհով Թուրքիան կվերափոխվի: Նույն կերպ Թուրքիայում հալածվում են նաև այն հատուկենտ թուրք մտավորականները, ովքեր փորձում են անցյալի մասին ճշմարտություններ ասել իրենց ժողովրդին: Իրենց կյանքի դեմ ֆիզիկական սպառնալիք զգալով՝ Թուրքիայից փախուստ են տվել պատմաբան Թաներ Աքչամը, հասարակական գործիչ, հրատարակիչ Ռագըփ Զարաքոլուն, գրող Օրհան Փամուկը և ուրիշներ: Պետական մակարդակով թուրքական պատմագրությունը մշտապես խեղաթյուրել ու գլխիվայր է շուռ տվել պատմական իրողությունները:

Վերջին տասնամյակներին, կարծես գնահատելով իրենց թույլ տեղը, Թուրքիան, ու նրա հետ նաև Ադրբեջանը, պետական քաղաքականության մաս

են դարձրել Հայ դատի ուղղությամբ աշխատանքների դեմ լայնածավալ պայքարի կազմակերպումը արտերկրում: Չեն խնայվում միջոցներ գնելու համար քաղաքական գործիչների, պատմաբանների ու լրագրողների, Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, հայ ժողովրդի իրավունքների վերականգնման համար պայքարի դեմ կազմակերպվում են սադրանքներ, ավերվում և պղծվում են հուշարձաններ և այլն: Արցախյան շարժմանը նախորդող տասնամյակներում էլ թուրք, ինչպես և ադրբեջանական քարոզչամեքենան չի դադարել սեփական հասարակություններին սնելը հակահայկականության թույնով և ատելությամբ: Մի՞թե դրա դրսևորումները չեն եղել Նախիջևանի և Դաշտային Ղարաբաղի հայաթափումը, հուշարձանների ոչնչացումը, հալածանքների ու սպանությունների բազմաթիվ փաստերը, և իհարկե, նույնը տեղի է ունեցել Թուրքիայում: Իսկ երբ որևէ հասարակության համար գաղափարախոսությունը վերածվում է հավատո հանգանակի, ապա այդ հանրույթը մշտապես ծնելու է համապատասխան իշխանություն: Էրդոդանի իշխանության գալով՝ Թուրքիան որդեգրեց Օսմանյան կայսրության վերածնության՝ Նեոօսմանիզմի գաղափարախոսությունը: Դրան հետևեց թուրքական ակտիվ գործունությունը Ղրիմում, Կենտրոնական Ասիայում, Սիրիայում, Լիբանանում, Լիբիայում և առհասարակ Աֆրիկյան մայրցամաքում ու Բալկաններում: Թուրքիան այսօրվա դրությամբ հաջողել է Ռուսաստանի ազդեցության դաշտից պոկել և իր ազդեցությանը ենթարկել Ադրբեջանը: Նույն քաղաքականության դրսևորումն էր Արցախի ցեղասպանության հարցում Թուրքիայի ունեցած կարևորագույն դերակատարությունը: Հետևելով պանթուրքիզմի ու պանթուրանիզմի իդեալներին՝ այսօրվա թուրքական իշխանությունների գլխավոր խնդիրներից մեկն է «Զանգեզուրյան միջանցքին» տիրելը, և առհասարակ հայկական գործոնի ոչնչացումը: Պետք չէ զարմանալ, որ այլ տարածաշրջաններում հաճախ շատ ագրեսիվ Թուրքիան Զանգեզուրին ու ողջ Հայաստանին վերաբերող իր ծրագրերի հարցում զգուշավոր է, չի դրսևորում Հայաստա-

*Հրանտ Դինք*

նի իշխանությունների հետ ունեցած իր պայմանավորվածությունները և գերադասում է դրանք առաջ մղել Ադրբեջանի, որպես թե Հայաստանի կողմից ագրեսիայի ենթարկված պետության անունից: Պատճառն այն է, որ, ի տարբերություն Հայաստանի տգետ ղեկավարության, թուրքերը հասկանում են, որ Ռուսաստանն այդպես հեշտորեն չի հրաժարվելու իր երկուհարյուրամյա ազդեցության գոտուց: Թուրքերն, իհարկե, Ադրբեջանի հրապարակային և իրենց կուլիսային ջանքերով կշարունակեն Հայաստանի իշխանությանը վերջնական կապիտուլյացիա պարտադրող ճնշումը: Միաժամանակ, չի բացառվում, որ Արցախի կամ Սիրիայի օրինակով տարածաշրջանային կամ աշխարհաքաղաքական նպաստավոր պահը ճիշտ գնահատելով՝ անակնկալ հարվածով լուծեն իրենց հետապնդած հիմնական խնդիրները:

Թուրքերն իրենց նվաճողական քաղաքականության գործիքակազմում հաճախ հենվել են հակառակորդի ամբողջականությունը պառակտելու, նրա ներսում իրենց հինգերորդ շարասյունը ստեղծելու գործելակերպին: Անգամ Բյուզանդական կայսրությունը չփլուզվեց առանց իր ներսում եղած թուրքամետ հոսանքի դերակատարության:

Հայ ժողովրդին վերջին հարյուր տարում ոչինչ այնպես չէր միավորել, ինչպես ցեղասպանության և հսկայական տարածքային կորուստների հետևանքով ձևավորված հակաթուրքականության գաղափարը: Այդ գաղափարը հայրենիքում կենդանի էր անգամ խորհրդային վերազգային, ամբողջատիրական գաղափարախոսության շրջանում, երբ Հայ դատի ուղղությամբ գործունեությունը, անգամ որևէ հրապարակային խոսք կենթարկվեին հետապնդումների:

Հայաստանի անկախացումն ու Արցախի ազատագրումն ավելի ինքնավստահ դարձրին հայությանը, միավորեցին հայրենիքն ու Սփյուռքը՝ ազգային ինքնության և ընդհանուր հեռանկարի շուրջ, Հայ դատի գաղափարախոսությունը դարձավ ազգային ռազմավարության կարևոր բաղկացուցիչներից մեկը: Հայությունը թվում էր միասնական և ամուր ամբողջություն և համարժեք սթափություն չդրսևորվեց ներս թափանցող զանազան հոսանքների, արտաքին ֆինանսավորմամբ Հայաստանում գործունեություն ծավալող բազմազան հասարակական կազմակերպությունների, ինչպես և այն երիտասարդության նկատմամբ, որը երկրից դուրս էր գալիս տարբեր հաստատություններում կրթվելու, դասընթացների կամ այլ միջոցառումների մասնակցելու նպատակով:

Կարելի է պարզապես հիշել Հայաստանում ներքին դժգոհությունների գեներացման և իշխանափոխության հարցում բոլոր այդ կազմակերպությունների ու անհատների ունեցած դերակատարության մասին, որոնք բոլորը հետո տեղ ունեցան նոր իշխանության մեջ, և Հայաստանում արդեն յոթ տարի ոչ ոք չի լսում այդ իրավապաշտպանների, բնապահպանների ձայները: Այնքան աներևակայելի էր տեղի ունեցածը, որ հայ հասարակությունը երկար ժամանակ չէր կարողանում հավատալ, թե Հայաստանում իշխանության է եկել թուրքական շահերին ծառայող քաղաքական հոսանքը:

Թուրք-արևմտյան շահառուների և ՀՀԾ-ական նախորդների սնուցած գաղափարախոսության համաձայն թուրքամետների այս խմբակը համոզված էր, թե հայ -ադրբեջանաթուրքական թշնամանքի պատճառն Արցախի ազատագրումն է, հայության պատմական հիշողությունն ու Հայ դատի գաղափարախոսությունը և, իհարկե, ռուսների ներկայությունը տարածաշրջանում: Ըստ վերջինի, ռուսներն են հայերի մեջ բորբոքել հակաթրքականությունը, նրանք են մղել թշնամանքի, ինչի հետևանքն էլ եղել է ցեղասպանությունը: Հայոց պատմական հիշողության ու պահանջների հրահրողն էլ նույն ռուսներն են (դեպի այս գաղափարախոսական ծուղակն է ցանկանում հայությանը մղել Նիկոլ Փաշինյանը, երբ ակնարկում է ցեղասպանության և դրա իրականացման ու հետևանքների ճանաչման պայքարի պատճառները փնտրելու անհրաժեշտության մասին): Իրականացնելով գաղափարաքաղաքական ծրագիրը՝ Հայաստանի իշխանությունը զիջեց Արցախը, հրաժարվեց պատմական հայրենիքից և նրա դատից՝ ճանաչելով հայրենիքը Հայաստանի Հանրապետության սահմաններում, թուրքական տեսության համաձայն վերանայում է հայոց պատմությունն ու պատմագրությունը, առհասարակ ոչնչացման է տանում ավանդական հայագիտությունը, որդեգրել է հակառուսական քաղաքականություն, կապերը խզել է ՀԱՊԿ ռազմական դաշինքի հետ և պատրաստվում է ռուսական ռազմական սահմանափակ ուժերը դուրս բերել Հայաստանից, սակայն իր բոլոր զիջումների դիմաց ադրբեջանաթուրքական կողմը չի կատարում նրա միակ խնդրանքը՝ չի համաձայնում կնքելու «Խաղաղության պայմանագիր»:

Նիկոլ Փաշինյանը և նրա քիչ թե շատ մտածելու ունակ թիմակիցներն արդեն հասկացել են, որ ամբողջովին ձախողվել են՝ հայտնվելով գաղափարաքաղաքական փակուղում: Արցախի հանձնումը ոչ թե բերեց Ադրբեջանի հետ հաշտության, այլ ավելի ագրեսիվ դարձրեց վերջինին: «Զանգեզուրի միջանցքի» պահանջի հետ Ադրբեջանը ողջ Հա-

յաստանի Հանրապետությունն է այսօր անվանում Արևմտյան Ադրբեջան, ռազմականորեն ամրապնդում է Հայաստանից գրաված տարածքները, պահանջում է ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման նախաձեռնությամբ վերջնականապես խաչ քաշել Արցախի հարցի վրա, Հայաստան վերադարձնել 300.000 փախստական ադրբեջանցիների և այլ պահանջներ է ներկայացնում, որոնց ցանկը գնալով ավելի է ընդլայնվում: Հայաստանի իշխանությունը տեսնում է նաև, որ իր բոլոր զիջումների դիմաց ոչ մի դրական տեղաշարժ չկա հայ-թուրքական հարաբերություններում:

Մեծ գումարներ ծախսելով՝ Փաշինյանը Երևան հրավիրեց թուրք լրագրողների, որպեսզի նրանց միջոցով Թուրքիա հատուկ ուղերձ ուղարկեր այն մասին, որ Հայոց ցեղասպանության հարց իր համար գոյություն չունի, այնինչ թուրքերը դուրս եկան նրա մոտից և հայտարարեցին, թե Երևանը թուրքական քաղաք է, իրենց ռեպորտաժներում հեգնեցին Հայաստանի ղեկավարին: Հայաստանի ղեկավարն իր արևմտյան հովանավորների միջնորդությունն է խնդրում՝ կորզելու «Խաղաղության պայմանագիր» կոչված թղթի կտորը, ինչը կդարձնի իր գլխավոր խաղաքարտը գալիք ընտրություններում, այնինչ Արևմուտքը տեր չէ ոչ՝ իր պարտադրած գաղափարաքաղաքական ծրագրին, ոչ՝ հաշտության հասնելու երաշխավորությանը: Արևմուտքը շարունակում է ողջունել Հայաստանի, այսպես կոչված, խաղաղասիրական ջանքերը և չնկատելու է տալիս թուրքադրբեջանական ծավալվող ագրեսիվությունն ու անվերջանալի պահանջները: Նիկոլ Փաշինյանը տեսնում է, թե ինչպես է հավաքական արևմուտքն օգտագործված իրի պես պատրաստվում հրաժարվել Ջելենսկուց և հասկանում է, որ իր բախտակցի ճակատագիրը սպասում է իրեն: Իսկ ամենագլխավորն այն է, որ կատարյալ ձախողման մատնվեց թուրքամետության գաղափարախոսությունը՝ իր հետ կործանման սպառնալիքի առջև կանգնեցնելով Հայաստան պետությունը:

Հայոց ցեղասպանությունից մեկ դար անց հայությունը, և ոչ միայն նա, ականատես եղան ինչպես արևմտաթուրքական ազդեցության ուժը հայաստանում հրաժարվեց հայության ազգային-պետական ավանդական ռազմավարությունից և, գաղափարաքաղաքական շրջադարձ կատարելով, փորձեց հայության ու հայոց պետության համար բացել բարիդրացիության նոր ռազմավարական հեռանկար: Անփորձ և արտաքին թելադրանքի ենթակա քաղաքական ուժն իր տնային հաշվարկներով ուզեց համաշխարհային շուկայում առևտուր անել և կորցրեց ամեն ինչ, ընդհուպ՝ իր հեղինակության հետ պետության վարկը և անվտանգության երաշխիքները:

Կյանքը ևս մեկ անգամ փաստեց, որ ազգերն ու պետությունները կարող են ունենալ մարտավարական վրիպումներ, բայց ոչ դարերով կրկնվող ռազմավարական ձախողումներ: Հետևաբար, նոր բան անելուց առաջ, ինչպես ամեն ասպարեզում, նախ անհրաժեշտ է յուրացնել այն, ինչ եղել է քեզնից առաջ: Առավել ևս պատմական մեծագույն պա-

տասխանատվության գիտակցություն է պահանջվում մի ղեկավարությունից, որը ցանկանում է հարաբերությունների շրջադարձի հասնել իր ժողովրդին ցեղասպանած և ցեղասպանությունների գաղափարաքաղաքական գործելակերպից չհրաժարված հարևանների հետ: Այսօր ոչ միայն հայերը, այլև շատ օտարներ են խոսում այն մասին, որ Նիկոլ Փաշինյանը Հայաստանը հասցրել է կործանման եզրին: Մեր ասելիքն ավարտենք, որպես օրինակ ներկայացնելով Իսրայելի հետախուզական ծառայություններից մեկի նախկին ղեկավար Յակով Քեդմիի կարծիքը: Ձերծ մնալով որևէ մեկնաբանությունից՝ ասենք պարզապես, որ ավելորդ է Յակով Քեդմիին կասկածելը հայամետության կամ հայկական որևէ ուժի նկատմամբ կանխակալ վերաբերմունքի մեջ:

«Նիկոլ Փաշինյանն իշխանության գալով ամենաուժեղ հարվածը հասցրեց հայերի ազգային ինքնագիտակցությանը: Նույնիսկ պատերազմից հետո շարունակում է այդ հարվածները և պնդում, թե առևտուրը, բաց սահմանները խաղաղություն կբերեն: Հայաստանը տարիներ շարունակ ունեցել է ազգային նպատակներ, իսկ հիմա հայերին ձեռք են առնում, ծաղրում են՝ ազգային նպատակները բերելմտցնելով առևտրի տիրույթ: Իսկ մեկը հարցրե՞լ է Փաշինյանին՝ Թուրքիան և Ադրբեջանը ցանկանո՞ւմ են խաղաղություն: Ինչպե՞ս է Ադրբեջանը ցանկանում խաղաղություն, երբ նույնիսկ ձեր պնդմամբ՝ ձեր իսկ ռազմագերիներին չի վերադարձնում: Ինչպե՞ս է ցանկանում խաղաղություն, երբ Հայաստանի տարածքները հռչակում է իր պատմական տարածքներ: Կամ Ադրբեջանն այդ ամենը ասում և անում է առանց Թուրքիայի համաձայնությա՞ն: Նիկոլ Փաշինյանի պրմիտիվ պատկերացումները բնութագրում են իր թշվառ քաղաքականությունը»:

Ակնհայտ է, որ թե՛ ռազմական, թե՛ քաղաքական ասպարեզներում լիովին ձախողված իշխանությունը սեփական անվտանգությունն ապահովելու ինքնանպատակ քայլերով միայն ողբերգություններ է բերելու հայության գլխին, և ազգային գաղափարախոսությամբ առաջնորդվող ուժերի կողմից հայոց ընկղմվող նավի կառավարումը ստանձնելը փրկության միակ երաշխիքն է: Այս մասին է մեզ հուշում նաև 110 ամյա փորձության ճանապարհին բյուրեղացած ցեղասպանության հիշողության խորհուրդը:

# Հայոց ցեղասպանության դատապարտումն աշխարհի և մարդկության պարտականությունն է ու իրավասությունը...

**Արմեն Կարապետյան**
**Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հրապարակագիր**

### Հայոց ցեղասպանության իրողության վիճարկումն անմիտ և անիմաստ զբաղմունք է

Թուրքական գաղափարախոսական մեքենան արդեն բավական երկար ժամանակ է, ինչ քարոզչական բազմազան (երբեմն իրար հակասող) հնարքներով փորձում է կեղծել ու ժխտել Հայոց ցեղասպանության իրողությունը: Այդ նպատակով տարբեր տասնամյակներում տարբեր մեթոդներ են կիրառվել:

1960-70-ական թթ. թուրք քարոզիչները, օրինակ, պնդում էին, որ հայերի մասին իրենք առաջին անգամ են լսում և հայերի հետ թուրքերը երբևէ շփումներ ու հարաբերություններ չեն ունեցել:

Սակայն այդ թեզը շատ պարզունակ էր ու խոցելի, ուստի հետագայում նոր մարտավարություն որդեգրեցին Հայոց ցեղասպանությունը ժխտելու և հերքելու գործընթացում:

Հայոց ցեղասպանությունից անցել է արդեն 110 տարի, և այդ ժամանակահատվածում էականորեն որևէ բան չի փոխվել վերոնշյալ հիմնահարցի նկատմամբ թուրքական պետության և թուրք հասարակության վերաբերմունքի հարցում: Նրանք շարունակում են կուրորեն ու մոլեգին կերպով ժխտել Հայոց ցեղասպանության փաստը: Սակայն դա անօգուտ և անմիտ զբաղմունք է, քանզի այդ հիմնահարցը չի վերաբերվում լոկ հայերին ու թուրքերին: Հայոց ցեղասպանության վճռական փուլը տեղի է ունեցել 1914-1915 թվականներին, երբ աշխարհում մոլեգնում էր համաշխարհային պատերազմը, այնուամենայնիվ, այն աննկատ ու գաղտագողի չէր կարող իրականացվել, քանզի երևույթը վերաբերում էր պատմական հայրենիքից մի ողջ ժողովրդի տեղահանմանն ու ոչնչացմանը: Այդ մասշտաբային ոճրագործությունը չէր կարող դուրս մնալ մարդկության ուշադրությունից ու հիշողությունից:

Բացի այդ, Հայոց ցեղասպանության իրագործմանը մասնակից (ոչ միայն ականատես) է եղել երրորդ կողմը՝ քրդերը: Այժմ, երբ թուրք-քրդական հարաբերությունները հասել են բավական բարձր լարվածության և նույնիսկ չհայտարարված (կամ ոչ պաշտոնական) զինյալ բախման, քուրդ հանրության ներկայացուցիչները հաճախ են վկայում պատմական ճշմարտության մասին: Այդպես պատահեց, օրինակ, Շվեդիայում, երբ այդ երկրի խորհրդարանում քննարկվում էր Հայոց ցեղասպանության ընդունման փաստը: Շվեդիայի պառլամենտի ազգությամբ քուրդ պատգամավորները կողմ քվեարկեցին բանաձևին, հայտարարելով, որ իրենց պապերն ականատես և մասնակից են եղել այդ իրադարձություններին:

### Պատմության անողոք տրամաբանությունը

Թուրքերի ժխտողական կեցվածքը փշրվում և ջախջախվում է պատմության անողոք՝ կուռ և համոզիչ տրամաբանությամբ: Մինչև ցեղասպանության իրագործումը, Արևմտյան Հայաստանը և տեղի հայությունը դարձել են միջազգային կարևոր իրադարձությունների օբյեկտներ ու սուբյեկտներ, որոնցից ամենակարևորները վերաբերվում են 19-րդ դարի երկրորդ կեսին: Խոսքը 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի և նրա արդյունքում ծնված Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի մասին է, ըստ որոնց իրավական վավերացում է ստացել Հայկական հարցը կամ հայկական պահանջատիրությունը:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածներով միջազգային երաշխավորություններ էին ստանում իրենց պատմական հայրենիքում ապրելու և արարելու արևմտահայության իրավունքները: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով հետևյալն էր արձանագրվում. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից բխող բարելավումներ ու բարենորոգումներ, և զերծ պահել

հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:

Պայմանագրի 25-րդ հոդվածով նախատեսվում էր ռուսական զորքերն Արևմտահայաստանից դուրս բերել վեց ամսվա ընթացքում: Սակայն բարենորոգումների չկատարման դեպքում զորքերի դուրսբերման ժամկետը ձգձգվելու էր: Փաստացի Ռուսաստանը ճանաչվում էր Հայկական հարցի լուծման երաշխավոր: Սույն պայմանագրով Օսմանյան Թուրքիան ճանաչեց իր սահմանների ներսում Հայաստան երկրի գոյությունը: Նոր ժամանակներում առաջին անգամ Հայկական հարցը վերածվեց քաղաքական գործոնի, տեղ գտավ միջազգային պայմանագրում: Սակայն եվրոպական տերությունների՝ գլխավորապես Անգլիայի և Գերմանիայի ճնշման ներքո, Սան-Ստեֆանոյում կնքված պայմանագիրը վերանայվեց 1878 թ. հունիսին հրավիրված միջազգային կոնգրեսում: Հայ պատվիրակներին թույլ չտվեցին մասնակցելու նրա աշխատանքներին: Կոնգրեսում տնօրինող ու թելադրող էին անգլիական դիվանագետները, և նրանց ջանքերով էլ փոխվեց նախորդ պայմանագրի 16-րդ հոդվածի բովանդակությունը: Նոր դաշնագրի 61-րդ հոդվածով ևս նախատեսված էր հայաբնակ մարզերում բարենորոգումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Սակայն բարենորոգումների վերահսկողությունն այլևս պայմանավորված չէր ռուսական զորքերի ներկայությամբ, որոնք անմիջապես դուրս էին բերվելու գրավված տարածքներից: Այսինքն, Ռուսաստանն այլևս պատասխանատու չէր բարենորոգումների կիրառման համար: Ռուսաստանի վերահսկողությունը փոխարինվել էր վեց եվրոպական երկրների կոլեկտիվ պատասխանատվությամբ, որն առաջ էր բերելու շատ անորոշ ու անդեմ իրավիճակ: Եվրոպական երկրների միջև մշտապես առկա էր շահերի բախում, որից լավագույնս օգտվեց թուրքական իշխանությունը: Շուրջ երեսուն տարիների ընթացքում թուրքերը ոչ միայն որևէ բարենորոգում չկատարեցին Արևմտյան Հայաստանի տարածքում, այլև առավել դժոխային իրավիճակ ստեղծեցին հայության համար: Հայության դանդաղ բնաջնջումը սկսվեց Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո, երբ թուրքական իշխանությունները համոզվեցին, որ Հայկական հարցը դամոկլյան սրի նման կախված է իրենց գլխին, ուստի որոշեցին ոչնչացնել և բնաջնջել այդ հարցի բուն առանցքը հանդիսացող հայ ժողովրդին: Եվրոպական դիվանագիտությունը, փաստորեն, մերժելով Բեռլինի կոնգրեսում հայկական հարցի նպաստավոր լուծման իրական ուղին և հնարավորությունը, կամա թե ակամա, նպաստեց սուլթան Համիդի հայաջինջ ծրագրերի իրագործմանը: Հայ և օտարազգի գրեթե բոլոր ուսումնասիրողները համակարծիք են այն բանում, որ արյունարբու սուլթանը հայության բնաջնջման ծրագիրն ու որոշումն ընդունեց Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո և հետևողական կերպով սկսեց այն իրագործել:

Ուրեմն, հայոց ցեղասպանության իրագործման հարցում մեղսակցության որոշակի բաժին ունեն եվրոպական դիվանագետներն ու այն ներկայացնող տերությունները:

Le Petit Journal

SUPPLÉMENT ILLUSTRÉ

*Ժամանակի մամուլը համիդյան ջարդերի մասին*

### Եվրոպական տերությունների ուղղակի և անուղղակի մեղսակցությունը

Ամենամեղմ գնահատմամբ, եվրոպական երկու տերություններ՝ Անգլիան և Գերմանիան, անուղղակի և ուղղակի կերպով մեղսակցություն ունեն Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում: Անգլիան՝ իր պետական ու պաշտոնական դիվանագիտությամբ, մշտապես Հայկական հարցն օգտագործել է որպես գործիք իր երկրի շահերն առաջ մղելու և սպասարկելու համար: Դեռևս Բեռլինի կոնգրեսում անգլիական դիվանագիտությունը, վարպետորեն մանևրելով Հայկական հարցի շուրջ, կարողացավ թուրքերից խլել Կիպրոս կղզին: Անգլիական դիվանագետներն իրենց ամենացասկոտ ու թունոտ հակառուսական ճառերն արտասանել են վերոնշյալ կոնգրեսում այն պահին ու այն ժամանակ, երբ քննարկվում էին գրված տարածքներից ռուսական զորքերի դուրսբերման և օսմանյան տերության տարածքային ամբողջականության պահպանման խնդիրները: Անգլիայի պաշտոնական այրերն ամեն ինչ արեցին, որպեսզի արևմտահայկական նահանգները վերադարձվեն Թուրքիայի տիրապետության ներքո:

*Բեռլինի կոնգրեսը*

Թուրքական իշխանությունները այդ տարիներին հասկացան և համոզվեցին, որ եվրոպական տերություններն իրականում ոչինչ չեն ձեռնարկելու հայկական բարենորոգումներն իրագործելու ուղղությամբ:

Եվ այդ ամենը եվրոպական մեծամեծերը չէին էլ թաքցնում: Այսպես, երբ իրավիճակը նորից բավական սրվել էր ու բարդացել, 1881 թվականին Գերմանիայի վարչապետ Բիսմարկը լկտիաբար հետևյալն ազդարարեց. «Հայկական հարցը հրահրելը կապված է լուրջ անհարմարությունների հետ, դրա համար էլ անհրաժեշտ է, որ պետությունները, որոնք հայերի հանդեպ իրենց վրա վերցրած որոշ պարտավորություններ ունեն, առհավետ մոռանան դրանք»:

Թուրքիայի հանդեպ եվրոպական երկրների թողտվության և հանդուրժողականության քաղաքականությունը, ի վերջո, հանգեցրեց 1915 թվականի հայոց զանգվածային բնաջնջմանը և Արևմտյան Հայաստանի լիակատար հայաթափմանը: Իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո եվրոպական տերությունները և, առաջին հերթին, Անգլիան, շարունակեցին իրենց պրոթուրքական քաղաքականությունը և բառացիորեն ոչինչ չձեռնարկեցին, երբ քեմալական Թուրքիան 1920 թվականի աշնանը հարձակվեց Անտանտի դաշնակից հանդիսացող Հայաստանի վրա:

Այս ամենը, ի վերջո, խոստովանել են Անգլիայի պետական այրերը: Այսպես, հանրահայտ պետական գործիչ Լլոյդ Ջորջը (1916-1922 թթ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ) պատերազմից հետո խոստովանանքի պես հնչեցրել է հետևյալը. «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 և 1909 թվականների սոսկալի սպանդին և 1915 թ. զարհուրելի կոտորածին: ***Հայաստանը զոհաբերվեց մեր կողմից բարձրացված հաղթանակի զոհասեղանին»*** (ընդգծումը մերն է- Ա. Կ.):

Հայ ժողովրդի հույսերն ի դերև եղան՝ կապված արևմտաեվրոպական դիվանագիտության միջամտության հետ, քանզի Եվրոպան, փաստորեն, տեղից չշարժվեց և երբեք վճռական գործողությունների չդիմեց, որովհետև իր շահերն ուղղակիորեն վտանգված չէին:

Իսկ Գերմանիան ուղղակի մեղսակցություն ունի Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում: Գերմանական տերությունն իր ձեռքում ուներ ռազմաքաղաքական և ֆինանսատնտեսական հզոր լծակներ, կարող էր ազդել իր դաշնակցի վրա՝ կանխելու Հայոց ցեղասպանությունը, սակայն դա չարեց: Ավելին, գերմանական զինվորականները հաճախ են օգնել թուրքերին, երբ պաշարված հայոց քաղաքներն ու բերդերը կատաղի դիմադրություն էին ցույց տալիս: Որոշ դեպքերում գերմանացի սպաներն անձամբ են վարել կրակը և ղեկավարել թուրք ցեղասպանների գործողությունները:

Պատմական բազմաթիվ փաստերի ու վերլուծությունների կուռ տրամաբանությունն ու համադրումը հանգեցնում են այն անողոք եզրակացությանը, որ Գերմանիային կարելի է համարել հայոց Մեծ եղեռնի համահեղինակ: Այս տերությունը, դեռևս 19-րդ դարավերջից որդեգրել էր ցայտուն արտահայտված պրոթուրքական կողմնորոշում: Գերմանական ռազմական հրամանատարության, բարձրաստիճան սպաների մասնակցությամբ ու ղեկավարությամբ տեղի էր ունենում Թուրքիայի զինված ուժերի վերակառուցումն ու արդիականացումը: Գերմանա-թուրքական մերձեցման և սերտացման խորհրդանիշը դարձավ Գերմանիայի զինված ուժերի բարձրակարգ գեներալ (հետագայում՝ գեներալ-ֆելդմարշալ) Կոլմար Ֆոն Դեր Հոլցի ռազմաքաղաքական առաքելությունը Թուրքիայում 1883-1896 թվականներին:

1909 թ. նա նորից հրավիրվեց Թուրքիա և մինչև կյանքի ավարտը մնաց այնտեղ՝ խորին պատկառան-

քով ծառայելով թուրքերին ամենաբարձր պաշտոններում (Թուրքիայի բարձրագույն ռազմական խորհրդի փոխնախագահ, թուրքական առաջին բանակի հրամանատար, Միջագետքի ռազմաճակատի հրամանատար): Թուրք-գերմանական ռազմական դաշինքն առավել ամրապնդվեց Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 1913 թ. դեկտեմբերին, երբ Կ. Պոլիս հրավիրվեց գերմանական նոր ռազմական առաքելությունը՝ գեներալ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ: Առաքելության անդամների թիվը սկզբում 42 էր, հետագայում այն հասավ 1000-ի: Թուրքական բանակը սկսեց զինվել գերմանական առաջնակարգ սպառազինությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմը եղավ այն բարենպաստ առիթն ու հնարավորությունը, որն ազատ արձակեց թուրքական իշխանությունների ձեռքերը՝ իրագործելու վաղուց պլանավորված հայոց բնաջնջումը: Այդ պատերազմում ոչ մի ժողովուրդ, բնակչության տեսակարար կշռի տեսանկյունից, չկրեց այնպիսի խոշոր, ահռելի կորուստներ, որպիսիք հայ ժողովուրդը: Նա ենթարկվեց աշխարհի առաջին կանխամտածված գենոցիդին: 1915-1916 թթ. ընթացքում ամենանվազ հաշվումներով զոհվել է շուրջ մեկուկես միլիոն հայ: Բացի մարդկային կորուստներից, ահռելի գումարներ կազմեցին նյութական կորուստները՝ 15 միլիարդ ֆրանկ, ավերվեց 66 քաղաք, 2500-ից ավելի գյուղական բնակավայր, 2350 եկեղեցի, 15000 դպրոց: Թուրքիան արևմտահայության տեղահանումով և բնաջնջումով փորձեց մեկընդմիշտ լուծել Հայկական հարցը: Այսպիսով, ցեղասպանության միջոցով թուրքերը հասան հայ ժողովրդի պատմական հայրենիքի հայաթափմանը: Հայրենազրկվեց ու հայաթափվեց ողջ Արևմտյան Հայաստանը:

Կատարված բարբարոսությունների համար օսմանյան Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն բողոքեց Հայոց ցեղասպանության փաստացի կազմակերպիչ Թալեաթ փաշային, պնդելով, որ վերջինս պատասխան պիտի տա կատարվածի համար: Երիտթուրքերի պարագլուխը ցինիկաբար պատասխանել է, թե ու՞մ առջև, չէ՞ որ այլևս հայեր չկան, և որ ինքը երեք ամսում շատ ավելին է արել, քան սուլթան Համիդը՝ երեք տասնամյակում:

Այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության իրականացմամբ Թուրքիան չկարողացավ խույս տալ ոչ պատմության դատաստանից, և ոչ էլ Հայկական հարցի կամ Հայ դատի հետապնդումներից:

Ներկայումս աշխարհում շուրջ երեք տասնյակ պետություններ, այդ թվում՝ ԱՄՆ-ը և Ռուսաստանը, ընդունել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: Ընդ որում, Ռուսաստանի պետական դումայի՝ 1995 թվականին ընդունված հայտարարության մեջ շեշտադրվում է այն միտքը, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի բնաջնջումը նպատակ ուներ նախապայմաններ ստեղծել Ռուսաստանն ավերելու և կազմաքանդելու համար:

Հիրավի, պատմական ճշմարտությանը լիովին համապասխանող եզրահանգում...

Իսկ 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանի ընդունած բանաձևում շեշտադրվում էր, որ «... Թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը, որպես անհիմն և դրանով իսկ զրկում է հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից: Մինչև այժմ պատմականորեն ապացուցված հայկական ցեղասպանությունը չի ենթարկվել քաղաքական դատապարտման և չի ստացել իր համապատասխան հատուցումը»:

Բարեբախտաբար, հայ ժողովուրդը ապաքինվել է 1915 թ. ստացած մահացու վերքերից և իր հայրենիքի մի փոքրիկ հատվածի վրա ձևավորել իր նորոգ պետականությունը՝ հասնելով նշանակալից ու բարձր ձեռքբերումների ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում, գիտական, կրթական, մարզական ու մշակութային ոլորտներում:

Ամուր փարվելով իր անկորնչելի ինքնությանն ու պատմական հիշողությանը, հայ ժողովուրդը պատմական հայրենիքը պետք է պահի ու պահպանի իր հոգու բոլոր բջիջներով: ■

# «Սովորական» ցեղասպանություն

**Անի Մելքոնյան**
**Պատմաբան**

Ապրիլը հայոց պատմության մեջ նշանավորվում է հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը հարգելով ու պահանջատիրությունը ևս մեկ անգամ նորոգելով: Շատ է խոսվել Հայոց ցեղասպանության, դրա պատճառների, գաղափարական հիմքերի մասին, և թվում էր, որ հայությունը բավականաչափ դասեր քաղել է, որ թույլ չտա իր պատմության մեջ ևս մեկ ցեղասպանության կրկնություն, բայց այն, ինչ տեղի ունեցավ մեկ ու կես տարի առաջ Արցախի Հանրապետությունում, ցույց տվեց, որ հայությունը՝ ցավոք սրտի, դասեր չի քաղել 1915 թ. ապրիլի 24-ից:

Իսկ ի՞նչ էր 2023 թ. սեպտեմբերի 19-20-ին Արցախում տեղի ունեցածը, արդյո՞ք այն ցեղասպանություն էր, պարզելու համար՝ նախ հասկանանք թե ինչ է ցեղասպանությունը՝ ըստ միջազգային իրավունքի:

1933 թ. Մադրիդում գումարված կոնֆերանսում իրավաբան Ռաֆայել Լեմկինն առաջին անգամ առաջարկել է ստեղծել բազմակողմ կոնվենցիա և մարդկային խմբերի ոչնչացումը որակել որպես միջազգային հանցագործություն: Իր զեկույցում նա առանձնացնում էր նոր տեսակի հանցագործություններ՝ «բարբարոսություն» հանցագործությունը՝ որպես գործողություն, որը կատարվում է մարդու կյանքի դեմ՝ մտադրություն ունենալով ոչնչացնել որոշակի ազգային, կրոնական կամ սոցիալական խմբին, և «վանդալիզմը»՝ որպես արվեստի և մշակույթի գործերի ոչնչացում: Լեմկինի առաջարկների ներկայացման համար հիմք էր ծառայել Հայոց ցեղասպանության անարգել իրագործումը:

Եթե այն մի անգամ տեղի ունեցավ Օսմանյան կայսրությունում,- պնդում էր երիտասարդ իրավաբանը,- կարող է տեղի ունենալ նաև Եվրոպայում:

Չնայած որ Լեմկինի նախագիծը բացահայտորեն չմերժվեց, սակայն այն քննարկման հանձնվեց կոնֆերանսի հանձնաժողովներից մեկին և կրկին պաշտոնապես քննարկման չդրվեց: Լեմկինը խորապես հիասթափված էր: Լեմկինի՝ այս երկու հանցագործությունների վերաբերյալ առաջարկությունը շատ կարևոր պահ էր նրա գիտական գործունեության մեջ, քանի որ այս առաջարկության զարգացումը և արտացոլումը դրսևորվեց 10 տարի հետո նրա գրած «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» հիմնարար աշխատության մեջ, որում իրավաբանը ներկայացնում էր «Ցեղասպանություն» (Genocide) հանցագործության նկարագրությունը, այդ եզրը ստեղծելով հունական Genos (ռասա, ցեղ) և լատիներեն cide (սպանել) բառերից[1]:

1946 թ. դեկտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունում է թիվ 95 (1) բանաձևը, որով հաստատվում էին միջազգային իրավունքի այն սկզբունքները, որոնք ամրագրվել էին Նյուրնբերգի

միջազգային դատարանի կանոնադրությամբ: Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվում է նաև թիվ 96 բանաձևը, որի ընդունման համար նիստ էր հրավիրել ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը՝ կազմելու համար միջազգային պայմանագիր, որը կպարտադրեր պետություններին կանխել և պատժել ցեղասպանության հանցագործությունը: Բանաձևի համաձայն՝ Գլխավոր ասամբլեան հաստատում էր, որ ցեղասպանությունը միջազգային իրավական հանցագործություն է:

1947 թ. ապրիլ-մայիս ամիսներին Լեմկինը մշակում է Ցեղասպանության կոնվենցիայի դրույթները:

1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ը ընդունեց.

***ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ կոնվենցիան, որի երրորդ հոդվածով սահմանվում էր.***

***Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.***

*(ա) այդ խմբի անդամների սպանությունը,*

*(բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,*

*(գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,*

*(դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,*

*(ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:*

Ընդ, որում ցեղասպանություն է համարվում, ինչպես վերը նշված հինգ կետերը միասին կատարելը, այնպես էլ դրանցից որևէ մեկը՝ առանձին կատարելը:

Հիմա, քննարկենք այն, ինչ տեղի ունեցավ Արցախում մինչև 2023 թ. սեպտեմբերը և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին.

Այսպես՝ *որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը:*

Այս կետի տրամաբանության մեջ միանգամայն տեղավորվում է Ադրեջանի կողմից Արցախի լիակատար շրջափակումն ու հումանիտար բեռների մուտքն արգելելը, որը տեղի ունեցավ 2023 թ. հունիսին և հաջորդեց 2022 թ. դեկտեմբերի 22-ին Բերձորի միջանցքը ադրբեջանցի «բնապահպանների» կողմից փակելուն:

*«Արցախը լիակատար շրջափակման մեջ է. արդեն մեկ շաբաթից ավելի է, ինչ որևէ հումանիտար բեռ, որևէ մթերք, որևէ դեղամիջոց մեր 120 հազար հայրենակիցներին, այդ թվում՝ երեխաներին, ծերերին, հիվանդներին չի հասնում»[2]:*

*Ի՞նչ է սա, եթե ոչ ցեղասպանության կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ցեղասպանական գործողություն, որն ուղղված էր արցախցիների լրիվ կամ մասնակի բնաջնջմանը:*

Ադրբեջանը ձմռան ամիսներին խոչընդոտում էր նաև Արցախի գազամատակարարմանը, ինչը դարձյալ արվում էր արցախցիներին մասնակի կամ ամբողջությամբ բնաջնջելու նպատակով:

Ադրբեջանի այս գործողությունները ևս ամբողջությամբ տեղավորվում էին ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված «ցեղասպանություն» հասկացողության մեջ:

Սա, իհարկե, Ադրբեջանի կողմից իրականացված քայլերից միակը չէ, որ տեղավորվում է ցեղասպանության տրամաբանության մեջ:

ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի երկրորդ հոդվածի առաջին կետը սահմանում է, որ. «որևէ խմբի նկիատմամբ ցեղասպանություն է համարվում. *այդ խմբի անդամների սպանությունը»:* Այս տրամաբանության մեջ միանգամայն տեղավորվում է, այն, որ *ադրբեջանցիներն ավելի քան 9 ամիս շրջափակման մեջ գտնվող Արցախի նկատմամբ սեպտեմբերի 19-ին սանձազերծեցին ռազմական ագրեսիա՝ թիրախավորելով խաղաղ բնակիչներին, որոնց պարհանելու հնարավորություն ուղղակի չկար[3]*:

2022 թ. սեպտեմբերի 22-ին՝ «Եվրոպացիները հանուն Արցախի» նախաձեռնությունը Շառլ Միշելին ուղղված նամակում հատուկ շեշտել էր. Ադրբեջանի տարածքային ամբողջականության քարոզչությունը և, այսպես կոչված, ադրբեջանական տիրապետության տակ գտնվող Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ բնակչության վերաինտեգրումը նշանակում է էթնիկ զտում և ցեղասպանություն[4]:

*Ռաֆայել Լեմկին*

Այսինքն՝ Արցախում տեղի ունեցածը, ՄԱԿ-ի Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի առնվազն երկու կետերով՝ համարվում է ցեղասպանություն, եթե չհաշվենք նույնիսկ միջազգային օրենքների տեսակետից՝ պատերազմական հանցագործություն համարվող՝ **բռնի տեղահանության, քաղաքացիական ենթակառուցվածքների վրա կրակելու, արգելված՝ զանգվածային ոչնչացման զենքեր կիրառելու, էթնիկ ատելության, գերիների խոշտանգման** այն բոլոր գործողությունները, որոնք իրականացրել է Ադրբեջանը: Ամենևին էլ կարիք չկա կասկածելու՝ 2023 թ. Արցախում տեղի ունեցածը ցեղասպանություն անվանելիս, ոչ էլ պետք է այն «էթնիկ զտում» անվանել, որովհետև ցեղասպանությունը ոչ մի փոխարինող ու համարժեք բառ չի կարող ունենալ, իսկ ցեղասպանը, կարող է կոչվել միայն ցեղասպան: Ցեղասպանության մասին կոնվենցիայի համաձայն կարելի էր Ադրբեջանին պատասխանատվության կանչել, եթե, իհարկե, Հայաստանում լիներ մի իշխանություն, որը կցանկանար դա անել, մինչդեռ Արցախում տեղի ունեցած ցեղասպանության օրերին Հայաստանի վարչապետը, որն ի պաշտոնե (ՀՀ-ն Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավորն էր) պարտավոր էր ապահովել Արցախի Հանրապետության ու նրա ժողովրդի անվտանգությունը, ուղղակի հայտարարեց. «Այս պահին մեր գնահատականն այն է, որ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչությանն ուղիղ սպառնալիք չկա»[5]: Այլ կերպ ասած՝ Հայաստանի վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը, հայտնի Պիղատոսի նման, «ձեռքերը լվաց» ու մի կողմ քաշվեց, սեփական քաղաքացիների կյանքի նկատմամբ պատասխանատվություն չստանձնելով, ավելին, կանաչ լույս վառեց Ադրբեջանի առաջ, ցեղասպանական գործողությունները շարունակելու համար, և փաստացի Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիևը հանցակիցներ են արցախցիների ցեղասպանության գործում:

Նույնիսկ Արցախի բռնի հայաթափումից հետո Ալիևն ու Փաշինյանը չդադարեցրին արցախցիների նկատմամբ ցեղասպանական գործողությունները, որոնք դրսևորվում են Փաշինյանի կառավարության և

իշխող կուսակցության անդամների կողմից արցախցիների նկատմամբ ատելության և թշնամանքի հրահրման, նրանց *մարմնական լուրջ վնասվածքներ կամ մերավոր վնաս պատճառելու ձևով:* Փաշինյանական վարչախմբի կողմից ատելության ու թշնամանքի հրահրման մի քանի օրինակ.

Մարտի 29-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալը ֆեյսբուքյան գրառմամբ հանրահավաքին մասնակցած արցախցիներին անվանեց «մսացու»՝ պնդելով, որ նրանք օգտագործվում են ընդդիմության կողմից իշխանափոխության համար: «Շատ ավելի ուշագրավ է, որ իշխանափոխության պահանջ հնչեցնողների մեծամասնությունը անգամ ՀՀ քաղաքացի չէ, իսկ շատերը հայտարարում են, որ երբեք չեն դառնա ՀՀ քաղաքացի»,- գրեց նա[6]:

Այս գրառումը ոչ միայն հստակ ատելության խոսք է պարունակում, այլև ապատեղեկատվություն:

Ավելին, փախստականներին որպես «ռեսուրս» կամ «գործիք» ներկայացնելու միտումը գերիշխող է Հայաստանի հանրային խոսույթում 2023-ի բռնագաղթից հետո: Հատկանշական է, որ այդ գրառումների տակ արցախցիների նկատմամբ ատելություն և թշնամանք սերմանող բազմաթիվ մեկնաբանություններ են արվում, իշխանական ֆեյքերի ու համակիրների կողմից, բայց դրանց, Հայաստանի իշխանությունը չի անդրադառնում ու չի դատապարտում:

Վերջին օրերի ընթացքում իշխանական պաշտոնյաների կողմից հնչեցվող ատելության խոսքի ամենաակնառու դեպքը ՔՊ-ական պատգամավոր և խոշոր գործարար Խաչատուր Սուքիասյանի մեկնաբանություններն էին արցախցի փախստականների վերաբերյալ: Սուքիասյանը, պատասխանելով 24 News.am-ի լրագրողի հարցին, հայտարարել է. «Զոհ չեն ունեցել Ղարաբաղում 23 թվականին, 10 հոգի մարդ ա … եթե բենզինի տրաքելուց ա, դա ուրիշ բան ա, զոհ չեն ունեցել, էդ սկզբի մի կռիվն ա էղել, որ մի քանի հոգի մարդ ա զոհվել»[7]:

Սա ոչ միայն ատելության, անհանդուրժողականության ու թշնամանքի խոսք է, այլ ակնհայտ սուտ, որը միտված է ՔՊ-ի դաշնակից Ադրբեջանի թեզերի առաջմղմանն ու Հայաստանում արցախցիների նկատմամբ ատելության գեներացմանը, որն առանց այդ էլ հոգեբանական բարդ իրավիճակում գտնվող, ցեղասպանություն վերապրած արցախցիներին պատճառում է մտավոր և հոգեբանական վնաս:

Մինչդեռ իրականությունն այն է, որ Արցախում 2023-ի սեպտեմբերի ռազմական գործողությունների ընթացքում զոհվել է 265 զինծառայող, 21 խաղաղ բնակիչ, անհետ կորել է 14 քաղաքացի:

Ամիսներ առաջ էլ ԱԺ նախագահը հայտարարեց, որ արցախցիները 2023-ի սեպտեմբերին պետք է «մնային ու կռվեին»[8]: Այլ կերպ ասած, ըստ իշխող ՔՊ-ի, արցախցիները պետք է ցեղասպանվեին, և առանց դիմադրելու, որովհետև, եթե իշխող ՔՊ-ի նպատակը Ադրբեջանի հետ դաշնակցած արցախցիներին ցեղասպանելը չէր, ապա նրանք կռվող արցախցիներին միայնակ չէին թողնի, կկատարեին իրենց պարտականությունը, և ՀՀ զինված ուժերը կմտներ Արցախ, տեղի բնակիչներին պաշտպանելու: Նիկոլ Փաշինյանն էլ ոչ թե կհայտարարեր, թե քաղաքացիական բնակչությանն ուղղված սպառնալիք չկա, այլ ՄԱԿ-ի կոնվենցիայի հիման վրա կդիմեր նույն ՄԱԿ-ին՝ պահանջելով կանխել Արցախում Ադրբեջանի կողմից իրականացվող ցեղասպանությունը:

Մինչդեռ հակառակն է, Նիկոլ Փաշինյանն անգամ այսօր է աջակցում Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությանը, ասելով, որ «Հայաստանը Ադրբեջանի դեմ միջազգային հայցերը հետ կբերի»[9]:

Իսկ Բաքվում շարունակում, են խոշտանգել հայ ռազմաքաղաքական ղեկավարներին. *կան կադրեր, որտեղ Ռուբեն Վարդանյանն ակնհայտորեն խոշտանգված է, իսկ Բակո Սահակյանի դիմացի ատամները կիսով չափ չկան: Ինչպես նշված է ՀԿ-ների հայտարարության մեջ, Ռուբեն Վարդանյանի գլխին երկաթյա օղակ են տեղադրել և տանջել*[11]: Դարձյալ Հայաստանի ոչ բարով ղեկավարի համաձայնությամբ ու թողտվությամբ:

Ադրբեջանի պետական վարչակարգը շարունակում է ոչնչացնել բռնազավթված Արցախի քրիստոնեական ժառանգությունը[11], ինչը համարվում է մշակութային ցեղասպանություն:

Ըստ՝ «Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի ցանկացած գործողություն: Հաագայի 1954 թվականի առաջին արձանագրությունն արգելում է օկուպացված տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգևոր արժեքները»[12]:

Չբավարարվելով Բաքվի ցեղասպանական քաղաքականությանը հանցակցելով՝ Նիկոլ Փաշինյանը կասկածի տակ է դնում նաև 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, մի փաստ, որն աշխարհի շատ պետություններ ճանաչել ու դատապարտել են, մինչդեռ, ըստ նրա. «Մենք Հայոց ցեղասպանության պատմությանն էլ պետք է վերադառնանք, պետք է հասկանանք, լավ՝ ինչ է տեղի ունեցել և ինչու է տեղի ունեցել, և ինչպես ենք մենք դա ընկալել, ում միջոցով

ենք ընկալել, ոնց է, որ 1939 թվին Հայոց ցեղասպանության օրակարգ չի եղել, և ոնց է որ 1950-ին Հայոց ցեղասպանության օրակարգ հայտնվել է: Սա մենք պե՞տք է հասկանանք, թե՞ չպետք է հասկանանք»[13]:

Ի պատասխան սրա՝ ՀՅԴ Հայաստանի ԳՄ-ն իրավացիորեն արձագանքեց.

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմինը վերահաստատում է՝

- Հայոց ցեղասպանության ճանաչումը, մեր ժողովրդի իրավունքների վերատիրացումն անժամանցելի է, այն հիմնված է միջազգային իրավունքի, պատմական արդարության վերականգնման կենսական պահանջի վրա, բխում է Հայ ժողովրդի և Հայոց պետականության ռազմավարական շահերից,
- Ցեղասպանության դատապարտումը, հետևանքների վերացումը լրջագույն հիմք են՝ բացառելու և կանխելու մարդկության դեմ նման հանցագործությունները,
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման՝ ՀՀ Անկախության հռչակագրով արձանագրված պահանջից հրաժարումը չի չեզոքացնելու Հայաստանի Հանրապետության դեմ թշնամական, ծավալապաշտական նկրտումները, անվտանգության սպառնալիքները:

Արձանագրում ենք, որ թուրք-ադրբեջանական տանդեմի պահանջների և նախապայմանների անշրջահայաց սպասարկումը թշնամական քաղաքականություն է, որն ուղիղ մարտահրավեր է մեր ազգային անվտանգությանը, սպառնալիք մեր պետականության գոյությանն ու աշխարհասփյուռ հայության կենսական շահերին[15]:

Բայց, ի վերջո, ի՞նչ անել, 1915 թ. ցեղասպանության ուրացումը կանխելու, Արցախի ցեղասպանության հետևանքները վերացնելու և Հայաստանի գլխին կախված նոր ցեղասպանության վտանգը չեզոքացնելու համար:

Առաջնային և կարևոր գործը՝ Ալիևի դաշնակցին Հայաստանի վարչապետի պաշտոնից հեռացնելն է, հնարավորինս արագ, և ցանկացած միջոցով:

Ասել ենք ու կրկնում ենք, հայ ժողովուրդը ունի երկու ընտրություն՝ ***վահանով*** կամ ***վահանի վրա,*** այլ կերպ ասած, բոլոր մարտահրավերները հաղթահարել, ներքին ու արտաքին թշնամուն հաղթել և գալիք Միացյալ Հայաստանի հիմքերը դնել, կամ էլ հակառակը, վերջնականապես ցեղասպանվելով՝ պատմության ասպարեզը լքել՝ միանալով իրեն ժամանակակից, բայց շատ վաղուց պատմության ասպարեզից հեռացած ժողովուրդներին:

Համոզված ենք, որ հայ ժողովուրդն առաջին տարբերակը կընտրի, դրա համար անհրաժեշտ է ուղղակի չվախենալ և հիշել՝ սրանից ավելի ծանր պայմաններում հայ ժողովրդի համար «ապրել» վճիռը կայացրած Արամ Մանուկյանի պատգամը.

***«Մենակ ենք եւ պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու եւ թէ երկրի ներսը կարգ հաստատելու համար»:***

## Ծանոթագրություններ

1. http://www.genocide-museum.am/arm/08.12.2018-UNGC70.php
2. https://www.aravot.am/2023/06/22/1350101/
3. https://www.pastinfo.am/hy/news/2023/09/19/38t251zg0/1640014
4. https://armenpress.am/hy/article/1120280
5. https://www.aravot.am/2024/09/19/1444022/
6. https://www.civilnet.am/news/946369/%D5%B8%D5%BE%D6%84%D5%A5%D6%80-%D6%87-%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%A5%D5%B6-%D5%A9%D5%AB%D6%80%D5%A1%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D6%81%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-%D6%83%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D6%80-%D6%87-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. https://armlife.am/tesanyut%e2%80%a4-ayo-hayastany-adrbejani-dem-mijazgayin-haycery-het-kberi-verjin-chhamajaynecvac-hodvacneric-meky-sa-er/
10. https://www.panorama.am/am/news/2025/03/04/%D4%B1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%84%D4%BB%D5%8A-%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD-%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80/3121707
11. https://hayeli.am/?p=747943&l=am
12. Նույն տեղում:
13. https://www.azatutyun.am/a/pashinyani-hamozmamb-petk-e-has-kanal-inch-e-teghi-ounetsel/33288674.html
14. https://azg.am/news/%d5%a4%d5%ab%d5%b4%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a5%d5%b6%d6%84-%d5%b0%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a8%d5%9d-%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%b4-%d6%87/

## Օգտագործված նյութերի ցանկ


1. http://www.genocide-museum.am/arm/08.12.2018-UNGC70.php
2. https://www.aravot.am/2023/06/22/1350101/
3. https://www.pastinfo.am/hy/news/2023/09/19/38t251zg0/1640014
4. https://armenpress.am/hy/article/1120280
5. https://www.aravot.am/2024/09/19/1444022/
6. https://www.civilnet.am/news/946369/%D5%B8%D5%BE%D6%84%D5%A5%D6%80-%D6%87-%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%A5%D5%B6-%D5%A9%D5%AB%D6%80%D5%A1%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D6%81%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-%D6%83%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D6%80-%D6%87-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/
7. https://armlife.am/tesanyut%e2%80%a4-ayo-hayastany-adrbejani-dem-mijazgayin-haycery-het-kberi-verjin-chhamajaynecvac-hodvacneric-meky-sa-er/
8. https://www.panorama.am/am/news/2025/03/04/%D4%B1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%84%D4%BB%D5%8A-%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD-%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80/3121707
9. https://hayeli.am/?p=747943&l=am
https://www.azatutyun.am/a/pashinyani-hamozmamb-petk-e-has-kanal-inch-e-teghi-ounetsel/33288674.html
10. https://azg.am/news/%d5%a4%d5%ab%d5%b4%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a5%d5%b6%d6%84-%d5%b0%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a8%d5%9d-%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%b4-%d6%87/

# Պարտությունից դեպի նոր պատերազմ (մաս չորրորդ և վերջին)

**Հայկազուն Ալվրցյան**
**Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր**

Օսմանյան կայսրության պատմության մեջ 1918 թ. բախտորոշ ժամանակաշրջան էր. նա պարտվել էր Առաջին աշխարհամարտում և ստորագրել անվերապահ կապիտուլյացիայի պայմանագիր, որի պահանջով զինաթափում և կազմալուծում էր զինված ուժերը: Նրան սպառնում էր մասնատում դաշնակից պետությունների միջև:

Կայսրության համար այդ ծանրագույն շրջանում՝ 1919 թ. ապրիլի 30-ին, ռազմական նախարարը դիմում է սուլթանին՝ Մուստաֆա Քեմալին 9-րդ բանակի տեսուչ նշանակելու առաջարկով: Նույն օրը սուլթանը տալիս է հրամանը, որի համաձայն՝ Մուստաֆա Քեմալին, բացի 9-րդ բանակի տեսուչի լիազորություններից, տրվում են նաև այլ լիազորություններ, որոնց շնորհիվ նրա վերահսկողության տակ են անցնում «Տրապիզոնի, Կարինի (Էրզրումի), Սվազի (Սիվասի), Վանի *վիլայեթների* և Երզնկայի (Էրզինջանի) ու Ջանիկի առանձին *լիվաների* քաղաքացիական իշխանությունները: Փաստորեն նա դառնում էր Օսմանյան կայսրության արևելյան հատվածի տերն ու տիրակալը»[1]:

Այս լայն լիազորությունների հրամանը ձեռքին՝ նա 1919 թ. մայիսի 19-ին[2] Բանդրմա[3] նավով ժամանում է Սամսուն և նույն օրն էլ հայտարարում ընդհանուր զորահավաք: Հենց այդ օրն էլ Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ նշվում է որպես ազգային-ազատագրական պայքարի սկիզբ՝ երկիրը նվաճած պետությունների դեմ: Քեմալը հունիսի 22-ին Ամասիայում հրապարակում է շրջաբերական (Amasya Genelgesi), որով հայտարարում է, որ երկրի անկախությունը սպառնալիքի տակ է, և հրավիրում է պատգամավորների կոնգրես:

Ավելի քան մեկ տարի տևած խաղաղությունը խաթարվում է 1919 թ. աշնանը, երբ սկիզբ է առնում, այսպես կոչված, ազգային-ազատագրական պայքարը: Թեև այս պայքարի ընթացքում Քեմալը հրապարակային ելույթներում խուսափում էր Անտանտի կրտսեր դաշնակից Հայաստանի Հանրապետության և հայերի նկատմամբ բացահայտ թշնամական կեցվածք ցուցադրելուց, սակայն արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Քարաբեքիրին հղած գաղտնի նամակում գրում է. «...հայերին փոխանցվող զինադադարի հիմնադրույթները պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն և Եվրոպայի նկատմամբ խաղաղասեր երևալուն»[4]: Այնուհետև հանգամանալից կերպով բացատրելով Հայաստանի և հայերի գոյության աննպատակահարմարությունը Թուրքիայի շահերի տեսակետից՝ նա Քարաբեքիրին հրամայում է, որպեսզի «Հայաստանը քաղաքականապես և նյութապես մեջտեղից վերացվի»[5]:



### Ներումը և Օրդուի հայերը

1918 թ. օգոստոսին հայտարարված ներումից հետո բազմաթիվ խմբեր իջան լեռներից և անցան խաղաղ կյանքի: Ֆիդայիները հիմնականում գյուղացիներ էին, որոնք աստիճանաբար սկսեցին վերանորոգել կամ վերակառուցել իրենց ավերված կամ քանդված տները և մշակել այգիները:

Հ. Հովակիմյանի հայտնի գրքի 526-529 էջերում զետեղված են Օրդուի բնակիչ Պ. Անդրեասյանի հուշերը, որոնց համաձայն՝ շատերը չհավատացին իշխանություններին և լեռներից չիջան: Դրանցից էր հայտնի խմբապետ, բազմաթիվ կռիվներում կռփված Քյուչուկ Արթինը: Նա և նրա զինակիցները երբեք չհավատացին թուրքական իշխանություններին: Զինադադարի օրերին նրանք, զենքերը թաքցրած, երբեմն քաղաք (Օրդու) էին իջնում մթերք գնելու և աքսորից վերադարձած հայրենակիցներին հանդիպելու համար: Կառավարությունն ամեն խոստում տալիս էր՝ նրանց իրենց հողերի վրա տեղավորելու համար, բայց՝ ապարդյուն: Իսկ երբ քեմալական Թուրքիան ուժեղանում է, նրանք առագաստանավերով տեղափոխվում են Սուխում[6]:

Ցեղասպանության տարիներին մի կերպ փրկված և այստեղ-այնտեղ ապաստան գտած հայերը նույնպես զինադադարի շրջանում վերադառնում են հայրենի օջախներ: Ըստ Պ. Անդրեասյանի՝ 1918 թ. քաղաքում կային 16-17 տարեկան մոտ 80 պատանի և շուրջ 1000 կին ու երեխա: Ուրիշ բնակավայրերի հետ համեմատած՝ այս թիվը ամենամեծն էր: Վերադարձածների առաջնահերթ խնդիրներից մեկը որբախնամ հանձնախմբի ստեղծումն էր (անդամներ՝ Նշան Պ. Անդրեասյան, Գարեգին Պ. Անդրեասյան, Տիգրան Ե.

Անդրեասյան, Հրանդ Ս. Բլոճյան, Սեփոն Պ. Ճգնավորյան) (Պ.Ա., էջ 526)։ Որբանոցի գոյության կարճ ընթացքում այնտեղ ապրեցին 200-ի չափ որբեր, իսկ ընդունվող-հեռացող որբերի թիվը հասավ 500-ի։ Մեկ տարում Օրդուից Ամերիկա կամ Սուխում՝ իրենց ազգականների մոտ տեղափոխվեցին բազմաթիվ չափահաս աղջիկներ և կանայք։ Թեև որբահավաք մարմինը մեծ ջանքեր գործադրեց քաղաքի բոլոր որբերին հավաքելու ուղղությամբ, բայց բավական թվով որբեր մնացին թուրքերի ընտանիքներում՝ նրանց հայ լինելը ապացուցել չկարողանալու պատճառով։ Անկարելի եղավ նաև թուրքերի հետ ամուսնացած կանանց և աղջիկներին վերադարձնելը, քանի որ թուրքերը դիմադրում էին ամեն կերպ (Պ. Ա., էջ 528)։

Օրդու վերադարձած հայերը, ապագայի նկատմամբ հույսով լցված, փորձում են վերականգնել համայնքի կենսագործունեության համար անհրաժեշտ բոլոր ազգային հաստատություններն ու մարմինները։ Ոգևորված մարդիկ ընտրում են Թաղական խորհուրդ (անդամներ՝ Հրանտ Ս. Բլոճյան, Հակոբ Պ. Չիլիջյան, Կարապետ Ավետյան, ատենապետ է նշանակվում Հակոբ Սեֆերյանը), որը կազմակերպում է դրամահավաք և վերանորոգում եկեղեցին, վերաբացում դպրոցը։ Կյանքն աստիճանաբար սկսում է աշխուժանալ։

Օրդուի հայերը շրջակա բնակավայրեր վերադարձածների համեմատությամբ ունեին որոշ ազատություններ, սակայն զինադադարից հետո էլ թուրքերը շարունակում են սպանել հայերին հատկապես գյուղերում և ճանապարհների վրա։ Աքսորից վերադարձող օրդուցիների 15-20 հոգանոց մի խումբ սրախողխող է արվում ճանապարհին։ Մեսուդիեում մնացած հայերն էլ կամ մահանում էին անմարդկային չարչարանքներից, կամ սպանվում էին։

Օրդուի հայերը համեմատաբար ազատ էին միայն առաջին տարին, հետո նրանց կյանքն էլ է վտանգվում։ Վերապրած պատանիներն իրենց հերթին որոշում են վրեժ լուծել թուրք չարագործներից։ Ուշագրավ է մի օրդուցի հայի հուշերից հետևյալ հատվածը. Չաքըր Ահմետ անունով մի թուրք իր մոտ է կանչում հայ պատանիներին և հետևյալ խորհուրդը տալիս. «Ես ալ իմ ամբողջ հոգիովս կ'ատեմ թուրքերը իբրև վատ և ստոր ցեղ. ինչ որ ընէք անոնց, իրաւացի էք. անոնց գործած ոճիրները ձեր ազգին հանդէպ որևէ կերպ չեն կրնար մոռցուիլ։ Բայց, զաւակներս, դուք անփորձ էք. այսօր թուրքը ինկած է և թոյլ, սակայն մեռած չէ. կրնայ ըլլալ, որ վաղը միւս օր նորէն ոտքի կանգնի, այն ատեն ձեզմէ ոչ մէկը ողջ կը մնայ, ինչ որ ընէք, ըրէք այնպէս, որ չիմացուի, թէ ով ըրաւ և ինչպէս ըրաւ»[7]։

Իմաստուն և բարի այս թուրքի խոսքերը շուտով հաստատվում են. իշխանության եկած Մուստաֆա Քեմալը որդեգրում է երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը։ Ամենուր վերսկսվում են քրիստոնյաների հալածանքներն ու սպանությունները։ Իր վայրագություններով բոլորին գերազանցում էր Տրապիզոնի հայերի և հույների թիվ մեկ դահիճ, իր զոհերի ունեցվածքի թալանով մեծ հարստություն դիզած կիրասունցի Թոփալ Օսմանը[8]։ Իր շրջանի մեջ

*Մուստաֆա Քեմալ*

այլևս անելիք չունենալով՝ նա որոշում է ոչնչացնել Օրդուի վերականգնվող հայկական համայնքը, 1920 թ. 200 արյունարբու ավազակներով արշավում է դեպի Օրդու, սակայն օրդուցի Ալի փաշայի որդի Զիյա բեյը մեծ զորաջոկատով փակում է նրա ճանապարհը՝ ասելով. «Այս շրջանը իմ իրաւասութեան տակ է»[9]։ Օրդուի հայերն այս անգամ փրկվում են նոր կոտորածից և թալանից։

### Դարձյալ դեպի լեռներ

Մեկ տարի հարաբերական խաղաղությունից հետո 1919 թ. ամռանը քեմալական շարժման ազդեցությամբ չեթեները վերսկսում են փոքրաթիվ բնակչությամբ հայկական գյուղերի ասպատակությունները, թալանն ու սպանությունները։ Նախկին դաժանությունները դրսևորվում են ողջ ուժգնությամբ։ Ունիեի շրջանի Օզուար գյուղում մի գիշեր թուրքերը հրկիզում են Հովհաննես Ուրումյանի տունը։ Նա այդ օրը բացակայում էր տնից։ Բոցերի մեջ այրվում են նրա կինը, 17-ամյա դուստրը, երկու փոքր տղաները և չորս որբեր, որոնց խնամում էր Ուրումյանների ընտանիքը։

Կոտորածն ու թալանը դյուրացնելու նպատակով կազմակերպում են դավադրություններ, որոնց զոհ են գնում բազմաթիվ ազդեցիկ հայեր և հույներ, այդ թվում՝ Ֆաթսայի խմբապետ Արթին Մինասյանը։

Իշխանությունների ներմանը հավատացած և խաղաղ կյանքի անցածներից շատերը թաքստոցներից հանում են զենքերը և դարձյալ բարձրանում լեռները։

### Ունիեի գավառակ: Քյոքլուղցիների նոր ոդիսականը

Չեթեներն ու զանազան հանցավոր խմբեր աստիճանաբար մեծացնում են ճնշումը։ Հուլիսի 25-ին մի մեծ խումբ շրջապատում է հայտնի Քյոքլուղ գյուղը։ Գյուղի զինյալները բազմաթիվ կռիվներում աչքի ընկած խմբապետ Ավետիս Չաքրյանի ղեկավարությամբ ճեղքում են պաշարման շղթան և անցնում թշնամու թիկունքը։ Անզիջում կռվի մեջ թեև թուրքերը տալիս են բազմաթիվ զոհեր, բայց մահացու վիրավորվում է նաև խմբապետ Չաքրյանը։ Երկօրյա

*Արթին Քյուչուկ*

կռիվներում թշնամուն պարտության մատնելուց հետո համագյուղացիները գյուղի գերեզմանատանը, ուր հանգչում էին գյուղացիների սիրելի ղեկավար, դաշնակցական գործիչ Տիգրան Ջեյթունցյանի աճյունը, բոլորի կողմից պաշտելի անվեհեր քահանա տեր Միքայելի ոսկորները, հողին են հանձնում խիզախ հրամանատարի մարմինը և նրա շիրիմի վրա երդվում վրեժ լուծել թշնամուց (Օր., 746-747):

Այս կռվից հետո թուրքերը շուրջ մեկ տարի չհայտնվեցին, սակայն 1920 թ. օգոստոսին քյոքլուղցիները գավառի իշխանություններից հրաման ստացան հանձնել զենքերը: Հայերը, որ մտադիր չէին ենթարկվել այդ հրամանին, ամրացրին դիրքերը և սկսեցին սպասել թուրքերի հերթական հարձակմանը:

Սեպտեմբերյան մի օր թրքական Մանաստր գյուղում նկատվում է զորքերի կուտակում: Նույն գիշերն իսկ Քյոքլուղի ղեկավարներն անգեն ժողովրդին գյուղից դուրս են բերում և խմբապետ Կարապետ Թահմիզյանի (Դելի Հոջա) պաշտպանության ներքո տեղավորում մերձակա անտառում, իսկ Գևորգ Քյոսյանի խումբը բարձրանում է Թազ դաղ լեռը՝ ամրացնելու դիրքերն ու կարգի բերելու ապաստարանները: 100-ի չափ ֆիդայիներ խմբապետներ՝ Սերոբի և Գալուստի ղեկավարությամբ, դիրքավորվում և սպասում են թուրքերի հարձակմանը: Սեպտեմբերի սկզբին շուրջ 1500 զինվորներ, նրանց աջակից չեթեներ և այլ զինյալներ շարժվում են դեպի հայկական դիրքերը:

Անգիջում կռիվը շարունակվում է 5 ժամ. երեկոյան կողմ թշնամին, հավաքելով դիակները, նահանջում է: Երկրորդ օրը սպիտակ դրոշ պարզած սուրհանդակը տեղեկացնում է, որ Ունիեի կայմակամը ցանկանում է հանդիպել հայերի ղեկավարների հետ: Կայմակամն առաջարկում է հանձնել զենքերը, որի դիմաց կառավարությունը երաշխավորում է նրանց կյանքը: Կտրուկ մերժումից մեկ օր հետո կռիվը վերսկսվում է առավել սաստիկ ուժով: Թուրքերն օգտագործում են նոր բերված գնդացիրներ և նեղում հայերին, որոնք, բավականաչափ զոհեր տալով, նահանջում են և սեղմվում մի նեղ հատվածում: Դեպքերի մասնակիցը գրում է. «Երեկոյեան օրհասական պահեր ապրեցանք: Այս անգամ ալ մեր փրկակար ռումբերէն 3 հատ պայթեցնելով ու համազարկը սաստկացնելով սարսափի մատնեցինք թշնամին: Արդէն գիշեր էր և ան դադրեցուց կռիւը, իսկ մենք ալ մեր վիրաւորները վերցնելով, նոյն գիշերը հասանք Թազ տաղ: Տելի Հոճան մնաց միայն դիրքերու վրայ, մինչեւ որ գիւղը դատարկուեցաւ» (ՕՐ., էջ 748):

Իշխանություններն ամեն քայլի դիմում են՝ դիմադրության օջախները ոչնչացնելու համար: Որտեղ որ զենքով հաջողության չէին հասնում, փորձում էին դավաճաններ գտնել: Այդպես պատահեց նաև այս կռվում պարտություն կրելուց հետո: Հայերի ղեկավարների հետ ևս մեկ անգամ բանակցելու պատրվակով կայմակամը հանդիպման է հրավիրում խմբապետ Կ. Թահմիզյանին և հայերին անվտանգ կյանք խոստանում հայրենի գյուղում՝ խմբապետ Սերոբի գլխի դիմաց: Կ. Թահմիզյանը հրաժարվում է կատարել պահանջը՝ պատճառաբանելով, որ Սերոբը հեռացել է գյուղից, և ոչ ոք չգիտի նրա գտնվելու վայրը: Երբ օրեր անց կայմակամը գլխի է ընկնում, որ իրեն խաբել են, ձերբակալում է Կ. Թահմիզյանին և նրա 10 ընկերներին ու բանտարկում:

Խմբապետները որոշում են հարձակվել բանտի վրա և ազատել ընկերներին: Այդ մտահղացումն իրականացնելու համար 1920 թ. նոյեմբերի 5-6–ին ավերակ Չանկերիլ գյուղում տեղի է ունենում հայկական և հունական մի քանի խմբերի համատեղ ժողով, ուր որոշում է ընդունվում միասնական ուժերով ազատել բանտարկյալներին: Ժողովին մասնակցում էր թերմեցի Խաչիկ Կարագյոզյանը (Կարա Խաչիկ), ով Ջիլ Օհաննեսի սպանությունից հետո ընտրվել էր Տրապիզոնի նահանգի հայկական ուժերի ընդհանուր հրամանատար:

Ըստ հաստատված ծրագրի՝ քյոքլուղցիների 50 հոգիանոց խումբը՝ Սերոբի և Գալուստի հրամանատարությամբ, որոշված օրը պետք է հարձակվեր քաղաքամերձ թուրքական գյուղերի վրա և կոտորեր բնակչությանը՝ իշխանության ուշադրությունն իր վրա հրավիրելու համար: Այդ ժամանակ Կարա Խաչիկի խումբը պետք է հարձակվեր բանտի վրա և ազատեր գերյալներին, իսկ հույների ամենաբազմամարդ խումբը Ունիե պետք է մտներ արևմտյան կողմից:

Նոյեմբերի վերջին որոշվում է իրագործել ծրագիրը, բայց մի հույն մատնիչի պատճառով այն ձախողվում է. բանտարկյալներին տեղափոխել էին այլ բանտ: Սակայն գործադրվում է ծրագրի առաջին մասը. քյոքլուղցիներն ասպատակում են քաղաքամերձ թուրքական գյուղերը և բարեհաջող վերադառնում Թազ դաղ՝ իրենց կենտրոնատեղի (ՕՐ., էջ 749):

Այս դեպքերից մի քանի օր անց, երբ թշնամին ետ էր քաշվել, քյոքլուղցի 55 զինյալներ չարշամբացի Խաչիկ Թուլումճյանի 85 հոգիանոց խմբի հետ մի անսովոր կռվի են մասնակցում հույներին պատկանող Չոկջին կոչվող բարձրադիր քարհանքերում, ուր հույները ջրաղացի քարեր էին պատրաստում: Այդ վայրը գտնվում էր Ունիեից շուրջ 15-17 կմ հեռավորության վրա և ապահով էր թվում:

Երկու խմբերը որոշել էին ձմեռանոց տեղափոխվելուց և ձմեռվա պատրաստություններ տեսնելուց առաջ մի քանի օր հանգստանալ այս վայրերում և քննարկել անելիքները: Սակայն ամեն ինչ ընթանում է այլ կերպ. մի օր առավոտյան արթնանում են ժամապահների տագնապի ձայնից և տեսնում, որ իրենք պաշարված են բազմաթիվ թուրք զինվորներով, ոստիկաններով և զինված խուժանի բազմությամբ: Շուտով կողմերի միջև կատաղի կռիվ է սկսվում: Մեծաթիվ թուրքական ուժերն աստիճանաբար նեղում են պաշարվածներին: Կռվի թունդ պահին Հարություն Ափյան անունով զինվորը հանկարծ սկսում է երգել «Քոռ օղլի»-ն: Կռիվը մի պահ դադարում է: Թուրք հրամանատարը որոշում է ժամանակ շահել, մինչև Չարշամբայից օգնության կհասնի Համդի բեյի զորաջոկատը: Հայերն էլ այս դադարն օգտագործում են՝ իրենց դիրքերին մոտեցնելով մի քանի տասնյակ ջրաղացի քարերը, որ պատրաստել էին հույները:

Թուրքերը երկար են սպասում օգնական ուժին, բայց նա տեղ չի հասնում. Կարա Խաչիկը, որ տեղեկացել էր կռվի մասին, իր խմբով օգնության է շտապում, բայց, ճանապարհին հանդիպելով Համդի բեյի զորաջոկատին, կռվի է բռնվում նրա հետ և փակում ճանապարհը: Թուրք հրամանատարը տեսնելով, որ օգնությունն ուշանում է, վերսկսում է կռիվը: Հայերը թույլ են տալիս, որ թուրքերն ավելի մոտենան իրենց դիրքերին, և բարձունքից նրանց վրա են բաց թողնում մի քանի տասնյակ ջրաղացքար: Կռվի մասնակիցը հիշում է. «Աննկարագրելի էր թշնամիին խուճապը, մանաւանդ որ շատեր մնացին այդ քարերու տակ, իսկ մենք, օգտուելով այս կացութենէն, կրցանք դուրս գալ պաշարման շղթային մեջէն» (ՕՐ., էջ 750):

Կարա Խաչիկի հմուտ ղեկավարության և խմբերի միջև մշտական կապի շնորհիվ դարձյալ վերականգնվեց փոխօգնության և համագործակցության այն համակարգը, որ ձևավորվել էր մինչ 1918 թ. օգոստոսին հայտարարված ներումը: Ավելին՝ նույնիսկ հունական խմբերն էին ընդգրկվել այս համակարգի մեջ, որոնք դեկտեմբերի 25-ին դիմում են Կարա Խաչիկին՝ համագործակցության առաջարկով: Ինչպես ողջ կայսրության մեջ, այնպես էլ Տրապիզոնի նահանգում հայերի ցեղասպանությունը սկսվեց մի փոքր ավելի շուտ, քան հույներինը: 1915-16 թթ. բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ հույն հասարակ մարդիկ և հոգևորականները նույնիսկ իրենց կյանքի գնով հայերի են փրկել և թաքցրել իրենց տներում: Բազում օրինակներից հիշենք մեկը. գրեթե առանց հայ բնակչության մնացած Տրապիզոնում հույների մետրոպոլիտ Խրիսանթոսը փրկում է որբ և անտեր մնացած 600 հայ երեխաների և վերցնում իր խնամքի տակ: Այս գործի մեջ նա ներգրավել էր բազմաթիվ հույն հոգևորականների: Թուրք իշխանությունները, սակայն, երեխաներին խլում են մետրոպոլիտից, 150-ին թունավորում են, իսկ մյուսներին դաժանաբար ծովամույն անում[10]:

Հայ-հունական հարաբերությունները հայտնի են նաև այդ շրջանում թուրքերի դեմ մղված բազմաթիվ համատեղ կռիվներով, որոնցից մի քանիսին անդրադարձել ենք այս հոդվածի նախորդ մասերում[11]: Հատկապես հայտնի է «Ձանիքի լեռներում (Ամիսոսի և Սամսունի միջև) հայկական հայդուկային խմբերի մղած երկարատև գոյամարտը, որի ընթացքում 1916 թ. նոյեմբերին, ծանր կորուստների գնով փրկվել և ռուսական բանակի կողմից գրավված տարածք է փոխադրվել մոտ 200 հույն ընտանիք»[12]:

Հայերը և հույները թուրքերի դեմ միասնաբար կռվել են ոչ միայն Տրապիզոնի նահանգում, այլև 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի տարբեր ճակատներում: 1920 թ. զորավար Թորգոմը (Արսեն-Արշակ-Խարիտոն Նագգաշյան) Հունաստանի թագավոր Կոստանդինից արտոնություն է ստացել ստեղծելու «Հայկական լեգեոն» անունով մի զորամիավորում՝ բաղկացած 1700 մարդուց: 1922 թ. հայ կամավորականների թիվն արդեն հասնում էր 2500-ի, որոնք կռվում էին Մագնեսիա-Աֆիոն-Կարահիսար, Էսքիշեհիր տեղամասերում և Բրուսայի շրջանում[13]:

Հույն խմբապետների համագործակցության առաջարկը բխում էր անցյալի փորձառության վրա ձևավորված վստահությունից: Հայերը սիրով ընդունում են առաջարկը, և Գարաջալի կոչվող ամայի հայկական ագարակներում տեղի է ունենում հայ և հույն խմբապետների հանդիպում: Հույներն ունեին 450 մարտիկ, որոնց հրամանատարներն էին հայտնի խմբապետներ Սարու Յանին և Խարիկոն: Թեև հանդիպումն անցնում է բարեկամական ջերմ մթնոլորտում, սակայն կենտրոնականի հարցում համաձայնության չեն գալիս. հայերն առաջարկում էին ձմեռն անցկացնել Թազ լեռան վրա կառուցված ձմեռանոցում, հույները հասկանալի պատճառներով չէին ուզում լքել իրենց շրջանը: Թեև համաձայնություն չկայացավ, բայց խմբերը բաժանվեցին բարեկամական տրամադրություններով՝ 1920-21 թթ. ձմեռն առանձին-առանձին անցկացնելու որոշմամբ:

***

Հայկական ու հունական ճակատներում Մուստաֆա Քեմալի տարած հաղթանակներն ամրապնդում են նրա իշխանությունը: Նա որոշում է հայ և հույն զինյալներին վերջնականապես ոչնչացնել և Պոնտոսում նույնպես ամրապնդել դիրքերը: Անցանկալի կամ թշնամական տարրեր էին դիտվում նաև հակաքեմալականները, որոնք նույնպես դատապարտված էին ոչնչացման: Այս հանգամանքն ստիպում է, որ վերջիններս միանան հայերին և հույներին:

1921 թ. գարնան սկզբին հայերը ծանր մարտեր են մղում իրենց ամենուր հետապնդող կառավարական զորքերի դեմ: Առաջին ուժեղ ընդհարումը տեղի է ունենում հունական Կարաբեքիր գյուղի մերձակայքում՝ Քըրք քառագագաթ բարձունքների վրա, որը տևում է երկու օր և ավարտվում հայերի հաղթանակով: Այդ կռիվներից մեկի ժամանակ սպանվում է Թոփալ Օսմանի քրոջ որդին: Դրանից հետո հայերի բարեկամությանն են ձգտում հակաքեմալական չերքեզները, որոնք քեմալականների դեմ կռիվներում ցուցաբերում են քաջություն և Հասան Չաուշի գլխավորությամբ կռվում հայերի կողքին:

*Օրդու քաղաք*

Հայերից թեև շատերն էին այն կարծիքին, ու չերքեզների և, հատկապես, թուրքերի հետ վտանգավոր է կռվել թեկուզ ընդհանուր թշնամու դեմ, բայց այնպիսի իրավիճակ էր ստեղծվել, որ բոլոր շրջաններում՝ Սամսունի, Չարշամբայի, Օրդուի և այլն, կռիվներն աստիճանաբար վերածվում էին քեմալականների և հակաքեմալականների միջև անհաշտ հակամարտության: Շուտով Հասան Չաուշը Չարշամբայի իր մի հավատարիմ ընկերոջից նամակ է ստանում, ուր նա «...կը թելադրէր փախստականներուն ապաստանիլ հեռաւոր լեռները, որովհետև Համտի պէյը պաշարման տակ առած է բոլոր ծովային և ցամաքային ճամբաները» (ՕՐ., էջ 751):

### Եվս մի ներում

Երբ քեմալական իշխանություններն ամենուր հաստատում են վերահսկողություն, լեռներում ապաստանած զինյալներին նորից ներում է շնորհվում: Նրանց մեծ մասն իջնում է լեռներից և անցնում խաղաղ աշխատանքի: Այս վիճակը տևում է այնքան ժամանակ, մինչև որ Թուրքիայի և Հունաստանի միջև ավարտվում է հույն և թուրք ժողովուրդների փոխանակությունը[14]: Հայերը նույնպես օգտվում են առիթից և մի քանի հարյուր հայ ուղարկում Ռուսաստան՝ Սոչիի շրջան:

Սակայն փոխանակման ընթացքում բոլոր հույները չէ, որ վերադարձան հայրենիք. «Շատերը մեկնեցին արտասահման, մյուսները պատերազմից հետո փախստական դարձան: Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության երկրներում նրանք գտան իրենց բարեկամներին և համաքաղաքացիներին, ցեղասպանության հետևանքով կորածներին: Պոնտոսի հույների բնաջնջումը մարդկության պատմության աննախադեպ ոճիրներից մեկն էր»[15]:

Հույների և թուրքերի փոխանակությունից հետո վիճակը նորից է լարվում. լեռներում ապաստանած և ներմանը չհավատացած հայկական խմբերը իշխանությունների դեմ մնացել էին միայնակ ոչ միայն այն պատճառով, որ հույների մեծ մասը տեղափոխվել էր Հունաստան, այլև այն պատճառով, որ պակասել էր կռվողների թիվը, քանզի շատերն իջել էին լեռներից, շատերն էլ տեղափոխվել էին Ռուսաստան: Թուրքական գյուղերը, որոնք մինչև ներումը հակաքեմալական էին և օգնում էին հայերին, նույնպես այժմ թշնամական դիրք էին բռնել: Լեռներից իջած խմբապետներից միայն Կրբաշյանը որոշեց վերահաստատել կապերը լեռներում մնացածների հետ:

Այս պայմաններում մյուս խմբապետները՝ Աբրահամ աղան, Արթին աղան[16], Մերոբը, Գալուստը, Հովհաննես (Օվանես) Ուրումյանը, Կարապետ Սարյանը, Տրդատ Թահմազյանը, Լևոն Մինասյանը, Եփրեմ Ջեյթունջյանը, Հաջի Բեկը և ուրիշներ, որոշում են իրենց խմբերով և մնացած ժողովրդով անցնել Ռուսաստան: Սակայն մտադրությունը չի իրականանում: 1921 թ. մայիսին Թերմեի մոտակայքում մի կռվի պատճառով իշխանությունները խստացնում են ստուգումներն ու հետապնդումները, որոնք հաճախ ավարտվում էին զինված ընդհարումներով:

Հիշատակված հերոսական խմբապետների փաղանգից էր առասպելական խիզախությամբ և քաջությամբ հայտնի քահանա Գալենճյանը (թուրքերը նրան տվել էին Դելի Քեշիշ՝ խենթ քահանա անունը): Հերոսական դրվագներով հարուստ նրա կյանքից մի հետաքրքիր դեպք է պատմում Մ. Թոռլաքյանը: 1915 թ. տեղահանությունների ժամանակ՝ լեռ բարձրանալու օրը, քահանան թուրքալեզու մի զգուշացում է գրում և փակցնում իր տան դռանը. «Ես զենքը ձեռքիս լեռը բարձրացած եմ. տունը իմ ընտանիքիս հանգիստը խանգարողին խերը կ՚անիծեմ, շանսատակ կ՚ընեմ, լինի ան զինուորական, կառավարական պաշտօնեայ թէ ոստիկան»[17]: Շրջանում ահ ու սարսափ տարածած խմբապետ քահանայի ահից վեց ամիս ոչ մի թուրք չի համարձակվում մոտենալ նրա տանը: Սակայն հետագայում թուրքական կանոնավոր մի մեծ զորամիավորում հարձակվում է գյուղի վրա և ոչնչացնում քահանայի տունն էլ, գյուղն էլ:

### Մի առանձին կռիվ

Այս կռվի առանձնահատկությունն այն է, որ թեև տեղի է ունեցել դարձյալ համշենահայերի և Պոնտոսի թուրքերի միջև, բայց՝ Տրապիզոնի և, ընդհանրապես, Թուրքիայի սահմաններից դուրս: Այդ մասին սույն փոքրիկ ակնարկը զետեղում ենք այստեղ՝ պահպանելու համար հիշատակված կռիվների ժամանակագրական սկզբունքը:

Երբ 1921 թ. Աբխազիայում հայ և հույն փախստականների կյանքն աստիճանաբար կարգավորվում է, հայտնվում են ավելի քան 200 թուրք մարդասպաններ, որ Տրապիզոնի նահանգում մասնակցել էին հայերի և հույների կոտորածներին: Այժմ նրանք կազմակերպված կերպով տեղափոխվել էին Աբխազիա և բնակություն հաստատել Օչամչիրի քաղաքից ոչ հեռու գտնվող Ջգերդա գյուղում, որտեղ նախապես աբխազների կողքին բնակվում էին թուրքեր: Նրանք եկել էին այստեղ՝ կոտորածներից մի կերպ փրկված հայ և հույն փախստականներին ոչնչացնելու հատուկ ծրագրով:

Նրանց հայտնվելու նպատակը ճշտելով՝ խմբապետ Սյուրմենեցի Արշակի և հույն խմբապետ Խամբոյի ղեկավարությամբ փորձառու հայդուկները, օգնության կանչելով ռուսական ճակատից վերադարձող վրացական մի զորաջոկատի, գյուղից ոչ հեռու գտնվող միջնադարյան Մոկվի վանքի մերձակայքում գլխովին ջախջախում են թուրք մարդասպաններին[18]:

### Ոճրագործների ահաբեկումներ

Հայկական խմբերը, զգալով, որ տարիների զինված պայքարը մտնում է նոր փուլ, և տեղահանության ու կոտորածի տարիներին իրենց վայրագություններով աչքի ընկածները նոր իշխանությունների օրոք սկսել են ակտիվանալ, որոշում են նրանց պատժել:

Այդ հրեշներից հատկապես աչքի էր ընկնում Վելի Չաուշ անունով մեկը՝ իր չեթեների հետ: Տեղահանության օրերին սրանք Էրպաայի շրջանի երկու հայկական գյուղերի՝ Սաքարջալի և Էվազալի տղամարդկանց հավաքում և կոտորում են կանանց ու երեխաների աչքի առաջ, 15-25 տարեկան աղջիկներին և կանանց առանձնացնում են մյուսներից, վերջիններիս քարավանն ուղարկում Էրբազի ուղղությամբ, իսկ առանձնացրած կանանց և աղջիկներին տանում են յայլաները, և մի քանի օր խրախճանք անում: Կանանցից շատերը ինքնասպան են լինում՝ նետվելով քարափներից, որոշները քարերով են իրենք իրենց սպանում, որոշներն էլ դիմում են բացահայտ փախուստի, որպեսզի սպանվեն:

Եվ ահա Քյոքլուղի խմբի մարտիկները 1921 թ. օգոստոսին հատուկ ծուղակ են պատրաստում և բոլորին բռնում: Դեպքերի մասնակիցը գրում է. «Վելի Չաուշն ու ընկերները և բոլորը մեկ մորթեցինք ողջ ողջ» (ՕՐ., էջ 754):

Մյուս թիրախը նահանգում հայտնի մոլեռանդ մի շեյխ էր, որը իր քարոզներով ողջ մուսուլման բնակչությանը տրամադրել էր հայերի դեմ՝ նրանց համոզելով, որ հայ սպանելը աստվածահաճո գործ է: Նրա քարոզներն ազդեցիկ էին այն աստիճանի, որ նույնիսկ հայ երեխաներ որդեգրած թուրքերը սպանում են այդ երեխաներին: Երկար որոնումներից հետո հայ վրիժառուները իրենց բարեկամ թուրքերից լսում են, որ շեյխը սեպտեմբերի 25-ին պետք է քարոզի իրենց գյուղի մզկիթում: Հայ զինյալները գյուղ տանող ճանապարհին ծուղակ են պատրաստում և 25 հրացանի համազարկով սպանում շեյխին և նրան ուղեկցող մոլլաներին:

Հաջորդը դարձյալ մի մոլեռանդ քարոզիչ հոջա էր, որ կազմակերպել էր Կարապետ Թահմիզյանի և նրա 10 ընկերների ձերբակալությունը, որից հետո նրանք, ի վերջո, դաժանաբար սպանվում են: Պատահաբար իրենց ծանոթ Մարիա անունով մի հույն կնոջից լսելով, որ այս հոջան ցանկանում է բռնի ամուսնանալ իր աղջկա հետ, դարձյալ ծուղակ են պատրաստում, գյուղ մտնելու պահին գնդակահարում են նրան և, խուսափելով ոստիկանների գնդակներից, առանց զոհեր տալու հասնում են Թազ դաղ:

1921 թ. աշնան վերջին նշանակալի իրադարձությունը հանրահայտ ավազակապետ Թոփալ Օսմանի ավելի քան 1000 չեթեներից բաղկացած հրոսակախմբի ջախջախումն էր: Օսմանը նոյեմբերի վերջերին որոշում է մի հուժկու հարվածով վերջ տալ Թազ դաղում ամրացած հայկական խմբերին՝ այդպիսով լուծելով նաև քրոջ որդու վրեժը: Լուրն առնելով՝ Օրդուից, Ֆաթսայից և այլ շրջաններից մի քանի հայկական խումբ շարժվում է դեպի Թազ դաղ: Հայկական ուժերը՝ թվով շուրջ 200 հոգի, կենտրոնանում են լեռան վրա և ծրագրում անելիքը: Ուժերի մի մասը թողնելով տեղում՝ մյուսները փոքր խմբերով իջնում են և թաքնվում Այգեճյուղի անտառներում: Շուտով հայտնվում է Օսմանի զորքը, որին հայ զինյալներն աննկատ ուղեկցում են: Երեկոն վրա է հասնում հայկական Յաթակ ամայի գյուղում, ուր և գիշերում է թուրքական զորքը: Կեսգիշերին հայկական խմբերն անցնում են գործի: Պատմում է դեպքերի մասնակիցը. «Մոտեցանք փայտաշէն գիւղին և կրակի տուինք տասնեակ մը տուներ, չորս կողմէն ալ սկսանք համազարկերը: Յանկարծակիի եկած թշնամին խուճապի մատնուեցաւ և ամէն մէկը կը ջանար իր գլուխը ազատել: Ոմանք շապիկ-վարտիքով, ոմանք զէնքով, ոմանք ալ առանց զէնքի փախուստ տուին մեր զէնքերու կրակին տակ» (ՕՐ., էջ 755):

1921-22 թթ. ձմեռն անցնում է առանց մեծ դժվարությունների և լուրջ իրադարձությունների, սակայն դեկտեմբերի վերջին նվիրյալ ֆիդայիներից մեկը՝ Ադամ Թահմազյանը, մի քանի դավաճանների մատնության զոհն է դառնում: Սրանք գործել էին Գուչքյոյ գյուղի թուրքերի դրդմամբ և նրանց մոտ էլ ապաստան գտել: Ճշտելով լուրի իսկությունը՝ հայ ֆիդայիները շրջապատում և հրդեհում են գյուղը, սկսում անխնա կոտորել բոլորին: Խմբապետներ Գալուստն ու Սահակը իրենց հուշերում գրում են. «Գիւղին մուխթարը ստիպուեցաւ մեզի յանձնել հայ և թուրք չարագործները, որոնց հաշիվը մաքրեցինք անմիջապես» (ՕՐ., էջ 756):

### Դավադրություններ հայ խմբապետների դեմ

Որքան ուժեղանում էր քեմալական իշխանությունը, այնքան ավելի «մեղմ ու խաղաղասեր» վարքագիծ էր ցույց տալիս հայ և հույն հայդուկների նկատմամբ: Այսպես՝ 2022 թ. հունիսին Թերմեի կայմակամը Քոջաման Բաշի[19] գյուղ է հրավիրում Կարա Խաչիկին և զենքերը հանձնելու և խաղաղ կյանքով ապրելու առաջարկ է անում: Քսան զինվորների ուղեկցությամբ հանդիպման գնացած փորձառու խմբապետը, որ լավ էր ճանաչում թուրքերին և չէր հավատում նրանց անկեղծությանը, մերժում է զինաթափվելու առաջարկը:

Նույն տարվա դեկտեմբերին կայմակամը նորից է հանդիպման հրավիրում՝ այս անգամ հայերի հետ նաև հույների խմբապետների: Կարա Խաչիկը, հույների հայտնի խմբապետ Սարու Յանին և մի քանի այլ խմբապետներ ու փորձառու զինվորներ՝ թվով տաս հոգի, ուղևորվում են Քոջաման Բաշի գյուղ՝ իմամի տուն, ուր նրանց խաղաղության առաջարկով սպասում էր կայմակամը: Կարա Խաչիկը նախազգուշական միջոցներ էր ձեռք առել՝ նախօրոք գյուղի մերձակա անտառներ ուղարկելով զինված խմբերին: Սակայն

*Սոչիում քաղաք*

փորձառու խմբապետներն ու զինվորները թատերականացված հյուրասիրության քողի տակ չեն նկատում ծուղակը և դավադրաբար սպանվում են: Ազատվում է միայն Թոքմաքչյան Գրիգորը, որը մի կերպ հասնում է թաքստոցներում սպասող ընկերների մոտ և հաղորդում բոթը: Վրեժով լցված հայ և հույն զինվորները հարձակվում են Քոջաման Բաշի գյուղի վրա, այն հրդեհում են և անխնա կոտորում բոլորին՝ չխնայելով ոչ մեկին: Այդ ողբերգական դեպքի առիթով ֆիդայիները հորինեցին դավադրության զոհ չանկիրիշցիների հիշատակին նվիրված մի երգ, որը համշենահայերի սերունդները երգում են նաև մեր օրերում: Այս դեպքից մեկ-երկու ամիս անց կազմակերպված դավադրությունների զոհ են դառնում Ունիեի, Թերմեի, Չարշամբայի, Էրբաայի հույն և հայ խմբապետներ և հայտնի զինվորներ՝ թվով մոտ երեսուն հոգի: Դավադրության զոհ է դառնում նաև Էրբաայի հայտնի խմբապետ Հովհաննես Ուրումյանը:

Քեմալական իշխանությունները որդեգրել էին հայկական և հունական ուժերը ոչնչացնելու թուրքական ոճը՝ բարեկամության կեղծ խոստումներ և դավադրություններ, ինչն այդպես էլ խորթ ու անհասկանալի մնաց առյուծասիրտ ֆիդայիներին, որոնք ութ տարի ահ ու սարսափի մեջ էին պահում թուրքական իշխանություններին: Քյոքլուղի խմբապետներն իրենց օրագրում դիպուկ են նկատել, թե. «Այն ինչ որ Թուրքը չկրցաւ ընել 7-8 տարիներու ընթացքին, երեք օրուան մէջ յաջողեցաւ ընել՝ երկու տարի «բարեկամի», «հոգատարի» կեղծ վերաբերում ցույց տալէ ետք...» (ՕՐ., էջ 758-759):

### Նախպատրաստվելով դեպի Ռուսաստան գաղթին

Օրեցօր ուժեղացող Թուրքիայի Հանրապետությունում քեմալական իշխանությունների այլամերժ քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում երիտթուրքերի ազգային քաղաքականությունից: Շատերն էին հասկանում, որ իրենց գոյությունը Թուրքիայում ժամանակավոր է: Այս գիտակցությունն ամրապնդվեց հատկապես թուրքերի և հույների զանգվածային փոխանակումից հետո: Արդեն պարզ էր, որ գրեթե 8 տարի տևած գոյամարտը երկար չէր կարող շարունակվել: Խմբապետները մտածում էին ժողովրդի վերջին բեկորներն էլ ուղարկել Ռուսաստան:

Տեղափոխության համար հարկավոր էր դրամ և սննդի պաշար: Այդ հարցերը հոգալով և նավատերերի հետ բանակցություններն ավարտելով՝ 2022-ի հուլիսին Ռուսաստան են ուղարկում 250 հոգու:

1923-ի մարտին Քյոքլուղի մարտական խմբերը, իրենց մեկնումը հետաձգելով մինչև աշուն, 75 հոգու հաջողությամբ տեղափոխում են Սոչի:

Նախօրոք կանանց, երեխաներին և ծերերին մաս առ մաս Ռուսաստան տեղափոխելուց հետո 1923 թ. ապրիլի վերջերին Օրդուի շրջանի հրամանատար Կարապետ Վարդանյանի (Վաշտոնօղլու) գլխավորությամբ շրջանի վերջին ֆիդայիները՝ թվով 105 մարդ[20], նավ նստեցին և մայիսի մեկին ափ իջան Սոչի քաղաքի մերձակայքում՝ Վեսյոլոյե գյուղում[21]:

Տարբեր նավահանգիստներից մեծ ու փոքր խմբերով նույնպես Ռուսաստան անցնելու փորձեր էին արվում, որոնք հիմնականում ավարտվում էին հաջողությամբ: Կառավարությունը աչք էր փակում այս ամենի վրա, քանի որ նրանց հեռանալը իրեն ձեռնտու էր:

Քյոքլուղի զինյալ խմբերը, մինչև Ռուսաստան անցնելը, ևս մեկ կոիվ տվեցին իրենց գյուղը շրջապատած թուրքական գերազանցող ուժերի դեմ, տարան ևս մեկ հաղթանակ, սակայն այլևս պարզ էր, որ փոքրաթիվ և օրեցօր նվազող ուժերով անընդհատ ուժեղացող թշնամուն դժվար, եթե ոչ անհնար կլինի դիմակայելը:

1923 թ. հանրապետություն հռչակված Թուրքիայի և նորաստեղծ Խորհրդային Միության միջև սահմանների հաստատումն ու վերահսկողության խստացումն իր հերթին նորանոր և գրեթե անլուծելի խնդիրների առջև է կանգնեցնում. կտրվում է կապն արտաքին աշխարհի հետ, ինչն անհնար էր դարձնում երկարատև պայքարի հեռանկարը:

### Լուծելով նահատակների վրեժը

Ամենուր գործակալական-լրտեսական ցանցեր տարածած իշխանությունն աստիճանաբար սեղմում էր օղակը: Պոնտոսի լեռներում ապաստանած անվեհեր հերոսները, որոնք ծրագրել էին ժողովրդի վերջին բեկորներն անվտանգ կերպով տեղափոխելուց հետո հեռանալ Ռուսաստան, որոշում են մինչև այդ լուծել դավադրաբար զոհված խմբապետների վրեժը: Առանձնաբար գործող մեծ ու փոքր խմբերը հավաքվում են Չանկիրիշ լեռան վրա և հստակեցնում անելիքները: Նրանք բաժանվում են 15 ջոկատների և ցրվում տարբեր կողմեր՝ դավադրության կազմակերպիչներին և մասնակիցներին սպանելու կամ ողջողջ բռնելու և մեկ շաբաթվա ընթացքում բոլորին Չանկիրիշ հասցնելու որոշումով:

Մեկ շաբաթ հետո լեռան վրա կայացվում է դատավճիռը. «... ձեռք անցածներէն 42 հոգի ընտրելով գնդակահարեցինք, իբրև վրէժ մեր 10 խմբապետներու նահատակութեան: Այնուհետև արձակեցինք բոլոր գերիները և միայն Թերմէի գազայէն երկու հարուստ կալվածատէրեր վար դրինք մեր քովը իբրև պատանդ, որպեսզի Հայերուն ձեռք չտան» (ՕՐ., էջ 760):

Հայ ֆիդայիները դրանից հետո ոչնչացնում են թուրքական Ելգրուգ գյուղը՝ ի պատասխան այս գյուղի բնակիչների կողմից խմբապետ Պետրոս Թահիմազյանի դավադիր սպանության: Պատժում են նաև Օզուր գյուղի մի քանի չարագործների, իսկ 5 հոգու գերում են և իրենց հետ տանում Թազ լեռան ապաստարանները, որտեղ գործած ոճիրների համար նրանց գլխատում են:

Թուրքական կառավարությունը 1923-ի օգոստոսին դարձյալ ներում է շնորհում հայերին և արտոնում հեռանալ երկրից: Հայ ֆիդայիները դեռևս մի քանի ամիս առաջ յայլա գնալու ճանապարհին գերի էին վերցրել Ֆաթսայի Գատըօղլու Նուրի փաշայի երկու թոռներին, որոնք իրենց ազատության դիմաց խոստանում են մեծ փրկագին, երկրից հեռանալու գործում նյութական աջակցություն և այլն: Եվ ահա գալիս է այդ պահը. երկու երիտասարդ բեյերն ամեն ինչ անում են՝ վերջին հայ ֆիդայիներին իրենց միջոցներով նավ նստեցնելու և Ռուսաստան ուղարկելու համար:

### Հրաժեշտ Թուրքիա դարձած հայրենիքին

1923 թ. նոյեմբերի կեսերին զենքը ձեռքներին վերջին 445 հայերը, որ գրեթե բոլոր կռիվներում հաղթել էին թշնամուն, չպարտված հեռացան հայրենի եզերքից[22]: Թերևս համաշխարհային պատմության մեջ այսպիսի փաստ չի արձանագրվել:

Ահա մասնակիցների հուշերից մի հատված. «Վերջին անգամ մը աչքերը դարձուցինք 8 տարի մեզ հյուրընկալած լեռներուն՝ Թազ տաղ, Քել թեփէ, Չաղման, Թեմի օլուխ, Պոզ թեփէ, Տաղլաղաջի գագաթ, և այլն և իբր երախտագէտներ ծունկ եկանք, տուինք մեր վերջին մնաս բարովը, վերյիշեցինք դարձեալ մեր նահատակները, անոնց գերեզմաններուն վրա արցունքներ թափեցինք և կարօտով ձգեցինք մեզի համար սրբատեղիներ դարձած այդ վայրերը» (ՕՐ., էջ 762):

1923 թ. նոյեմբերին 16-ին և 19-ին վերջին հայ ֆիդայիները բարձրանում են նավ և հեռանում, ինչպես իրենք էին ասում՝ Թուրքիա դարձած իրենց հայրենիքից:

Նոյեմբերի 21-ին, զենքերը թափելով ծովը, նրանք ափ իջան Ռուսաստանի Սոչի քաղաքում, որի շրջանի բազմաթիվ գյուղերում տեղավորված ազգականները, բարեկամներն ու ընկերները սպասում էին նրանց:

### Ամփոփում

Ութամյա այս դյուցազնամարտի համար որպես ամփոփիչ խոսք հարմար է տարիներ շարունակ համշենահայերի հետ ուս ուսի, թիկունք թիկունքի Պոնտոսի լեռներում մարտնչած Յոզղաթի նահանգի հայ ֆիդայիների պայքարի տարեգիրների հետևյալ տարակուսական հարցը. ***«Մենք հիմա բաղդաւորաբար հեռուէն և աւելի պաղարեամբ դիտելով այս և նման անձնուրաց անհետացողներու հսկայ ստուերները, կ՚ապշինք, թէ ինչո՞ւ չիրականացաւ անոնց Մեծ Երազը: Լեռներուն շարժեցե՛ք ըսելու հաւատքն ունէին անոնք և ասպուածներու անվեհերութիւն: Եւ այդ բոլորը չէին բաւէր...»[23]:***

## Հղումներ

1 Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, 2019, էջ 36:

2 Մայիսի 19-ը ընդունված է համարել Մուստաֆա Քեմալի ծնունդյան օր:

3 Այս առևտրական նավը 1925 թ. մաշվածության պատճառով դուրս է գրվում և մասնատվում, սակայն 2001-2002 թթ. Սամսունի քաղաքային իշխանությունների որոշմամբ կառուցվում է նրա պատճենը, որը ծառայում է որպես թանգարան:

4 Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 88: Նամակն ամբողջությամբ տե՛ս նշվ. աշխատության էջ 87-90:

5 Նույն տեղում:

6 Յովհաննիսեան Յ. (Արշակունի), էջ 528-529: Այսուհետ հուշերից բերված մեջբերումներից հետո կնշվի Պ.Ա., և էջը:

7 Նշվ. աշխ., էջ 529:

8 Թուրքական բանակի դաշտային հրամանատար, մասնակցել է 1912-13 թթ. Բալկանյան պատերազմներին, ոտքից վիրավորվել է և ստացել Թոփալ մականունը: Օսմանը Պոնտոսի հայերի և հույների ամենամեծ դահիճն էր, հատկապես հայտնի է Արդվինի նահանգի հայերի կոտորածներով և Կիրասունից Սամսուն ընկած բնակավայրերի հույների բնաջնջմամբ: Այս կոտորածների պարտավորությունը ստանձնելիս նա Մուստաֆա Քեմալին ասում է. «Մի՛ անհանգստացեք, փաշա՛: Այդ Պոնտոսի հույները մեղուների պես կոչնչացվեն»: Ցեղասպանության տարիներին գործած հանցագործությունների պատճառով Մուստաֆա Քեմալի վերջին կենսագիրներից մեկը նրա մասին գրել է, որ նա հայերի և հույների էթնիկ խմբերի՝ սադիստական մղումներով մաքրագործողն էր: Արյան մեջ խեղդել է 1921 թ. Քոչգիրիի քրդերի ապստամբությունը: Հայտնի է նաև ալևի քրդերի դեմ գործած զանգվածային կոտորածներով: Ժամանակակիցները նրան կոչում էին 3 ժողովրդի դահիճ: Իր նվիրվածության և, այսպես կոչված, ազգային շարժմանը մատուցած ծառայությունների համար դարձել է Աթաթուրքի թիկնազորի պետը: 1923 թ. Աթաթուրքին քննադատելու համար սպանում է Տրապիզոնի պատգամավոր Ալի Շյուքրյու Բեյին, ինչի պատճառով թշնամանք է սկսվում Քեմալի կառավարության և Տրապիզոնի բնակչության միջև: 1923-ի ապրիլի 1-ին Թոփալ Օսմանը Քեմալի հրամանով սպանվում է: 2007 թ. Կիրասոն քաղաքում կանգնեցվել է նրա հուշարձանը:

9 Յովհաննիսեան Յ. (Արշակունի), նշվ. աշխ., էջ 530:

10 Թոռլաքեան Մ., Օրերուս հետ, Պեյրութ, 2001, էջ 347, տես նաեւ Սեպուհ Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 178:

11 Տե՛ս ԴՐՕՇԱԿ, 2024, թիվ 11, 12, 2025, թիվ 02:

12 Վարդանյան Գ., Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923 թթ.), Երևան, 2012, էջ 136:

13 Նշվ. աշխ., էջ 143:

14 Երկու երկրների միջև կնքված դաշնագրի համաձայն՝ ցեղասպանությունից վերապրած հույները տեղափոխվում են Հունաստան, իսկ Հունաստանում բնակվող թուրքերը՝ Թուրքիա:

15 Թեոֆանիս Մալկիդիս, Հույների ցեղասպանությունը. Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս, Երևան, 2014, էջ 111:

16 Յոզղատցի հայտնի խմբապետ Արթին Աղա Դեմիրճյանը, ով Պոնտոսի լեռներում մասնակցել է բազմաթիվ կռիվների, քեմալական շարժման ժամանակ ձերբակալվում է խմբապետ քահանա Գալենճյանի (Դելի Քեշիշ), Հաջի բեկ Փափազյանի հետ և պահվում Ունիեի բանտում: Քեմալի թիկնազորի պետ Թոփալ Օսմանը նրանց հանում է բանտից՝ իբր Կիրասուն տեղափոխելու և այնտեղից աքսորելու համար: Սակայն Կիրասունում նրանց տեղափոխում են նավ և ողջ-ողջ այրում նավի հնոցում:

17 Թորլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 382:

18 Տե՛ս Քեշիշյան Ջ., Գոյապահպանման պայքարը շարունակվում է, «Զայն Համշենական», Գիրք 4-րդ, էջ 23, Երևան, 1999:

19 Թերմեի գավառակում այս անունով եղել է երկու գյուղ. մեկը՝ չերքեզաբանակ, մյուսը՝ հայաբնակ: Տվյալ դեպքում խոսքը չերքեզաբնակ գյուղի մասին է:

20 Քեշիշյան Ջ., Ֆիդայիներ, էջ 67:

21 Վեսոլոյե գյուղը գտնվում է Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի վարչական տարածքում, սահմանակից Աբխազիայից նրան բաժանում է Փսոռում գետը: Այսօր էլ այդ գյուղում բնակվում են Օրդուից գաղթած համշենահայերի սերունդները:

22 Թոռլաքեան Մ., նշվ. աշխ., 224-228:

23 Գալուստեան Կ. և Գաբիկեան Ն., Ագ-Տաղի քառամեայ գոյամարտը, էջ 116:

# Առաջին աշխարհամարտը, թուրք-օսմանցիների ներխուժումը Ատրպատական, հայկական կոտորածները եւ հայութեան բոնագաղթը

## *(Ցեղասպանութիւն, որն սկսւել է պարսկահայերի ջարդերով)*

**Դերենիկ Մելիքեան**
**Պատմական գիտությունների թեկնածու**

**«Ցեղասպանութեան ժամանակակիցների եւ ուսումնասիրողների տեսադաշտում եղել է հիմնականում Արեւմտահայոց Գողգոթայի եւ Արեւմտեան Հայաստանի հայազրկման փաստը: Երիտթուրքական վարչակարգը որդեգրել էր ընդհանրապէս հայ ժողովրդի ոչնչացման հարցը: Ցեղասպանութիւնն ընդգրկել էր եւ՛ Արեւմտեան Հայաստանը, եւ՛ Պարսկաստանի հայաբնակ վայրերը, եւ՛ Արեւելեան Հայաստանը: Կոտորածների առաջին զոհերը 1914 թ. վերջերից դառնում են Ատրպատականի հայերը՝ կապած վերոյիշեալ շրջաններ թուրքական զօրքերի ներխուժման հետ»:**



1914 թ. Առաջին համաշխարհային պատերազմում թէեւ Ղաջարական Իրանը Ահմեդ Շահի օրոք չէզոքութիւն էր որդեգրել[1], սակայն, կենտրոնական իշխանութեան տկարութեան պատճառով դա իրականացնել չյաջողուեց: Երկրի հիւսիսը, հարաւը, արեւելքն ու արեւմուտքը իւրային ու օտար բանակների ագրեսիայի ասպարէզը դարձան, յատկապէս պատերազմական կիզակէտ եղաւ Ատրպատականը, ինչի հետեւանքով չորսամեայ պատերազմի շրջանում երկիրը մեծագոյն վնասներ ու կորուստներ կրեց[2]:

Համընդհանուր պատերազմում Օսմանեան կայսրութեան նպատակներից մէկն էր, ի շարս այլ շրջանների, գրաւել նաեւ Իրանի Ատրպատական նահանգը: Այդպիսի նպատակ է հետապնդել Օսմանեան Թուրքիան դեռեւս 1905 թւականից, երբ Սուլթանը փորձում էր պաշտպանուել Պարսկաստանում ծայր առած սահմանադրական շարժումից: Սա համընկնում էր նաև Գերմանիայի, մասնաւորապէս, Մերձաւորարեւելեան աշխարհաքաղաքական նպատակին՝ տարածաշրջան, որն Առաջին աշխարհամարտի գլխաւոր ասպարէզներից էր ու եւրոպական միջամուխ երկրների հակամարտութեան կիզակէտը:

Պարսկաստանի հիւսիսային շրջանները զաւթելու համար ծրագրեր էր մշակել Աբդուլ Համիդ II-ը, որի հրամանով դեռեւս 1905 թ. Օսմանեան զօրքերը գրաւել էին Կոտուրի շրջանը[3], իսկ Ատրպատականը իրանական պետութեան կազմից անջատելու եւ Թուրքիային միացնելու միտումով, ինչպէս նաեւ Իրանի թուրքալեզու ժողովուրդներին սահմանադրական յեղափոխութեան դէմ ոտքի հանելու նպատակով, 1908 թ. իշխանութեան եկած երիտթուրքական կառավարութիւնը սադրիչ քարոզչութիւն էր իրականացնում, ըստ որի իբրև թե Թեհրանի սահմանադրական կառավարութիւնը որոշել էր բնաջնջման քաղաքականութիւն վարել ազարբայջանցիների[4] եւ առհասարակ Իրանի թուրքալեզու ժողովուրդների նկատմամբ:

Երիտթուրքական կառավարութեան ինտերւենցիան վերջնականապէս յօդս ցնդեցրեց Ատրպատականի յեղափոխական, ինչպես նաեւ թուրքամէտ տարրերի այն յոյսերը, թէ ցարական Ռուսաստանին երկրամասից դուրս մղելու եւ ներքին ռէակցիայի դէմ պայքարելու համար կարելի է ապաւինել «սահմանադրական Թուրքիայի» կառավարութեանը: Աստիճանաբար ուժեղանում էր յեղափոխականների դժգոհութիւնը երիտթուրքական կառավարութեան քաղաքականութիւնից եւ օկուպացած շրջաններում թուրքական քաղաքացիական իշխանութիւնների բռնութիւններից: Ամենուրեք յեղափոխական շրջանները սկսեցին պայքար ծաւալել թուրք զաւթիչների դէմ: 1910 թ. վերջերին Կովկասեան մամուլն այդ առիթով գրում էր. «ֆիդայիների գործունէութիւնը՝ թուրքական ռեժիմից դժգոհ բոլոր տարրերին համախմբելու ուղղութեամբ..., դառնում է աւելի ու աւելի ակնառու»[5]:

1911 թ. Ատրպատականում եւ իրանական Քրդստանում արդէն ծաւալւեց զանգւածային հակաթուրքական շարժում, որը կարեւոր դեր խաղաց Իրանում Օսմանեան կայսրութեան ագրեսիւ զաւթողական քաղաքականութեան ձախողման գործում:

Հետագայում եւս, Բալկանեան պատերազմի ժամանակ եւ դրանից յետոյ էլ, Թուրքիան Ատրպատա-

կանի նկատմամբ չթուլացրեց իր ագրեսիվ մղումները: Նա շարունակեց աւազակախմբեր կազմել թուրքաէրներից, քրդական ցեղերից եւ Իրանում խափանարար աշխատանքներ տարաւ ռուսների դէմ՝ այդ նպատակի համար հաւաքագրելով նաեւ Ռուսաստանի հանդէպ թշնամաբար տրամադրուած իրանցի պետական գործիչների: Այդ հանգամանքը շատ լաւ յայտնի էր Թեհրանում Ռուսաստանի դեսպանին, Թաւրիզի, Խոյի, Ուրմիայի հիւպատոսներին, որոնք այդ մասին շարունակ ահազանգում էին Պետերբուրգին:

Միւս կողմից, թուրքական կառավարութիւնը իր յարձակողական ծրագրերն Իրանում իրագործելու հետ միաժամանակ, քրիստոնեայ բնակչութեանը՝ հայերին եւ ասորիներին բնաջնջելու ծրագիր էր մշակում: Յայտնի է, որ թուրքական կառավարութիւնները նման գործերի համար բաւականաչափ փորձառութիւն ունէին: Նրանք Ատրպատականի քրդերին զինում էին՝ ինչպէս քրիստոնեաների, այնպէս էլ ռուսների դէմ օգտագործելու համար[6]:

Ատրպատականի նկատմամբ Օսմանեան կայսրութեան յաւակնոտ նպատակները նոյնկերպ դրսեւորվեցին, մինչեւ Առաջին Աշխարհամարտի տարիները: Այսպէս՝ 1913 թ. յեղաշրջման հետեւանքով «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ծայրայեղական թեւը յաջողեց չէզոքացնել երիտթուրքերի ազատական եւ հաւասարութեան ջատագով հոսանքին, ինչի պատճառով է՛լ աւելի ծաւալեցին պանթուրքական նկրտումները: Ի հետեւանս դրա, ներկայացուցիչներ գործուղեցին Կովկաս, Իրան, Աֆղանստան եւ Միջին Ասիա: Իսկ երբ պայթեց Ա. Աշխարհամարտը, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ղեկավարները հասունացած համարեցին Ռուսաստանից վրէժխնդիր լինելու պահը եւ ցարական կայսրութեան փլուզմամբ՝ Ռուսաստանի թուրքերի ազատագրումը[7]:

1914-ին, երբ յայտարարւում է ռուս-թուրքական պատերազմը, համաթուրանականները, տեւալ պահին որպէս պանիսլամիստներ, հրապարակ են իջնում:

«...Թուրքական կառավարութիւնը,- գրում է Զարեվանդը,- յայտարարեց Սրբազան պատերազմ (ջիհադ): Այդ յայտարարութեան մէջ ասւում էր. «Մեզ հարստահարող թշառականները բնաջնջելը սուրբ գործ մըն է, գաղտնի թէ յայտնի կատարւի: Ըստ Ղուրանի բառին՝ առէք զանոնք եւ սպաննեցեք, ուր որ կրնաք գտնել, մենք կուտանք զանոնք ձեզի եւ կը շնորհենք ձեզ ամէն իշխանութիւն անոնց վրայ»[8]:

Պատերազմի մէջ մտնելով՝ Օսմանեան կայսրութեան կառավարող շրջանները յոյս ունէին Կովկասից Ռուսաստանին հեռացնելով ու Մերձաւոր Արեւելքի, Կովկասի, Ռուսաստանի, Միջին Ասիայի մահմեդականներին միաւորելով՝ Մեծ Թուրան ստեղծելու վաղեմի գաղափարը կենսագործել: Այդ նպատակին հասնելու ճանապարհին խոչընդոտ էր ոչ միայն Ռուսաստանը, այլեւ հայ ժողովուրդը, որն ապրում էր Հայաստանի երկու՝ արեւմտեան եւ արեւելեան հատուածներում: Հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը խարսխուած էր նախորդ ամբողջ ժամանակաշրջանում իրականացուած ջարդարար քաղաքականութեան վրայ եւ ամբողջութեամբ բխում էր դրանից: Պատերազմը պատեհ առիթ ընձեռեց թուրք կառավարողներին՝ իրենց ժողովրդասպան ծրագիրն իրականացնելու եւ, միաժամանակ, յանցաւոր գործողութիւնները պատերազմական իրավիճակով արդարացնելու համար[9]:

Եւ այսպիսով, ահա, Պարսկաստանի հիւսիսային սահմանների անզօր ու անպաշտպան լինելուց օգտուելով՝ ռուս եւ թուրքական բանակները, ոտնակոխ անելով միջազգային ընդունուած օրէնքը, անարգել մուտք են գործում չէզոք Իրանի Ատրպատական նահանգ եւ այն դարձնում պատերազմի թատերաբեմ: Յատկապէս համաթուրանականները Պարսկաստանում եւ մասնաւորապէս Ատրպատականում մեծ թափով գործի են լծուում: Առաջին հերթին, սադրիչ քարոզչութիւններով, նրանք մոլեռանդներին գրգռում են քրիստոնեաների դէմ:

«Նոբահար» թերթը հետագայում, իր 1915 թւականի մայիս, յունիս եւ յուլիս ամիսների տարբեր համարներում, ահազանգել է թուրքական հերթական ներխուժումների մասին՝ Սալմաստ, Խոյ, Քերմանշահ, Բանէ, Սաղեզ, Միանդոաբ եւ Սաուջբուլաղ շրջաններ. թերթը միաժամանակ ընդգծել է. «...Մենք այս ներխուժումների մասին յայտնում ենք մեր խորը զարմանքը...»[10]:

Թուրքական ներխուժման իրողութիւնը մեծ տագնապ է առաջացնում Ատրպատականի հայութեան մէջ. այդ պատճառով, սկսեալ 1914 թւականի սեպտեմբերից, մեծ թով հայեր փորձում են ընտանիքներով հեռանալ շրջանից: Նոյն թւականի հոկտեմբերի սկզբից օսմանական զօրագունդեր են յայտնւում պարսից հողի վրայ՝ Ուրմիոյ հիւսիս-արեւմտեան մասում կենտրոնանալով: «Սուրբ պատերազմի» հնչեցրած կոչը եւս աւելի է նպաստում, որպէսզի Պարսկաստանի քրդերն եւս շահագրգռեն հակաքրիստոնէական բռնարարքներում: Հրամանը յստակ էր՝ «...Մուսուլման ժողովուրդները պէտք է ապստամբեն քրիստոնեաների դէմ»[11]:

Մուսուլմանական վերոյիշեալ գրգռութիւնների հերթական պատրւակը, սակայն, հայ կամաւորների միացումն էր ռուսական զօրքին, որով էլ պայմանաւորուած էր միջկրօնական հակադրութիւնների չարաշահման թուրք-քրդական միտումը: Դրա հետեւանքով տուժող կողմ էին շրջանի հայաբնակ տասնեակ գիւղերը, որոնց անվտանգութիւնը լուրջ սպառնալիքների դէմ-յանդիման էր կանգնում[12]:

Գերմանական եւ թուրքական հրամանատարութիւնների մշակած ծրագրով ռազմական գործողութիւններ էին նախատեսւել նաեւ Իրանում, որի տարածքը Գերմանիան եւ Թուրքիան ուզում էին օգտագործել որպէս միջանցք՝ դէպի Բաքւի նաւթային շրջանները եւ այնուհետեւ՝ Միջին Ասիան գրաւելու համար: Ուստի Իրանի հիւսիսը եւս վերածւեց հակամարտող երկու ճամբարների ռազմական գործողութիւնների թատերաբեմի[13]:

«Թուրքերու ընդհանուր ծրագիրն էր,- գրում է Ա. Խատիսեանը,- գրաւել Պաթում-Պաքու երկաթուղագիծը, տիրել Պաքւի նաւթահանքերուն, փոխադրել զօրքերը Թուրքէստան եւ այնտեղէն սպառնալ Անգ-

*Երիտթուրքերը*

լիոյ: Միաժամանակ անոնք կը շարունակէին մօտենալ Ալեքսանդրապոլին, որպէսզի այնտեղէն երթան Պաքու, Ջուլֆա, Պարսկաստան, իսկ այդտեղէն ալ սպառնալ Պաղտատի՝ անգլիացիներուն»[14]:

Միւս կողմից, Օսմանեան կայսրութիւնը, երբ նոյնիսկ դեռ չէր մտել պատերազմի մէջ, այդուհանդերձ իր զօրքերը տեղակայեց Վանի, Սարայի, Բաշկալէի եւ Շամդինանի տարածքներում: Ի պատասխան դրան, ռուսական հրամանատարութիւնն էլ 1914 թ. նոյեմբերի 20-ին, գեներալ Ֆ. Չերնոզուբովի գլխաւորութեամբ, զօրքեր մտցրեց Իրան: Ռազմական մի շարք գործողութիւնների արդիւնքում ռուսական բանակը շուտով գրաւեց Խոյը, Ուրմիան եւ Թաւրիզը: Իրանական կառավարութիւնը Մոսթոֆի-օլ-Մամալեքի գլխաւորութեամբ, որն իշխանութեան էր եկել 1914 թ. օգոստոսին, իր դժգոհութիւնը յայտնեց ռուսական զօրքերի Իրան ներթափանցելու կապակցութեամբ: Յատկանշելի է, որ դեռ նախքան ռուսական զօրքերի Իրանի տարածք մտնելը՝ 1914 թ. նոյեմբերի 14-ին, Ուրմիայում Ռուսաստանի փոխհիւպատոս Վեդենսկին հեռագրեց, որ թուրքերը նպատակ ունեն գրաւելու Ուրմիայի շրջանը՝ այստեղից երկու ուղղութիւններով՝ Խոյ-Ջուլֆա եւ Սոլդուզ Սաուջբուլաղ, հետագայում Թաւրիզի շրջան դուրս գալու համար: Այս պայմաններում ռուսական հրամանատարութիւնը դիմեց այնպիսի մի հակա-թուրքական ուժի աջակցութեանը, որպիսին Ուրմիայում եւ նրա շրջակայքում ապրող 70.000 ասորիներն էին: Աւելի ուշ ռուսական զօրքերը գրաւեցին Խոյը, Ուրմիան եւ Թաւրիզը: Նրանց օգնում էին ասորիները, որոնց վիճակն անգամ մինչեւ պատերազմը իրօք անտանելի էր: Դա էր պատճառը, որ նեստորական ասորիների մեծ մասն ընդունել էր ուղղափառ կրօն՝ յոյսով, որ Ռուսաստանն օգնութեան ձեռք կը մեկնի: Յանուն դրա՝ ասորիները խոստացել էին ռուսական հրամանատարութեան տրամադրութեան տակ դնել 40.000 զինեալ: Ասորիների ռուսական կողմնորոշմանը Թեհրանը պատասխանեց թշնամական գործողութիւններով՝ համագործակցելով թուրքերի եւ քրդերի հետ: Վերջինները 1914 թ. սեպտեմբերին Ուրմիայի շրջանում հրդեհեցին աւելի քան 30 հայկական եւ ասորական գիւղեր[15]:

Այսպէս, իրեն չէզոք երկիր յայտարարած Իրանի տարածքում, 1914 թ. նոյեմբերի 2-ին ասորիների ջարդեր իրականացուեցին:

Ասորիների կոտորածների մասին գոյութիւն ունի փաստ, որ 1914 թ. աւարտին թուրքական զօրքերն Ուրմիայի շրջանում աւերեցին եւ հրդեհեցին ասորական 98 գիւղ, 500 հոգի սպանուեց, 800 կին եւ աղջիկ առեւանգուեցին: 700 մարդ գլխատուեց ասորական Հաւթան գիւղում, 5000 ասորի աղջիկներ քշուեցին թուրքական հարեմները[16]:

«...Ռուսական զօրքերի Սալմաստ հասնելուց մի քանի օր առաջ, քրդերն ու թուրքերը,- գրում է «Նիւ Եորք Թայմզ»-ը իր 1915 թ. ապրիլի 29-ի համարում,- հաւաքեցին հայ եւ ասորի տղամարդկանց՝ 400-ին ուղարկեցին Խոսրովա, իսկ միւս 400-ին՝ Հաւթան: Նրանցից ոչ մէկը ողջ չմնաց»[17]: Նոյն «Նիւ Եորք Թայմզ»-ի համաձայն. «20–30000-ի չափ նեստորական ասորիներ եւ հայեր զանգւածաբար հեռացան իրանական Ատրպատականից: Աւելի քան 1500 հոգի կոտորուեցին, 2000-ի չափ մահացան հիւանդութիւններից»[18]:

Յատկանշելի է «Մշակ»-ում մէջբերուած «Նիւ Եորք Թայմզ»-ի հետեւեալ վկայութիւնը եւս. «Միայն հայերը չեն, որ անբախտ են, ասորիներին նոյնպէս ոչնչացրեցին եւ իւրաքանչիւր տասներորդին հնձեցին»[19]:

Իսկ «Atlantic Monthly»ն նկատել է. «Վեց ամսւայ ընթացքում երիտթուրքերն արեցին այնքան, որքան

չէին կարողացել անել հին թուրքերը վեց դարում: Հազարաւոր ասորիներ անհետացան»[20]:

Նոյն ժամանակամիջոցին, Արեւմտեան Հայաստանում ռուսների առաջխաղացումը և դէպի Իրանի հիւսիս ռուսական զօրքերի մուտքը խանդավառութեամբ է ընդունւում տեղի ասորի և հայ բնակչութեան շրջանում: Նրանք դիմում են ռուսական զօրքերի հրամանատար Իւդենիչին՝ առաջարկելով կամաւորական ջոկատներ ստեղծել, խնդրելով ապահովել այդ ջոկատները զէնքով ու զինամթերքով: Ռուսական զօրքերին աջակցելուց զատ, նման քայլը տեւել դէպքում տեղի հայ բնակչութեան կողմից ինքնապաշտպանական բնոյթ էր կրում: Ընդհանուր առմամբ 1914-1918-ի՝ թուրքական բանակների քանիցս ներխուժումների հետեւանքով Պարսկահայքի տարածքում զոհւել են հազարաւոր հայեր, իսկ մեծագոյն մասը հարկադրւած գաղթել է Արեւելեան Հայաստանի կամ Պարսկաստանի տարբեր վայրեր: Հրապարակւող փաստաթղթերը լուսաբանում են 1914 թ. Դեկտեմբեր եւ 1915 թ. Յունուար ամիսներին Պարսկաստան ներխուժած թուրքական զօրքերի գազանութիւնները հայ եւ ասորի բնակչութեան նկատմամբ:

Յայտնի է, որ Ա. Աշխարհամարտին (1914–1918 թթ.) Օսմանեան բանակները երկու անգամ ներխուժեցին չէզոք Պարսկաստան, կատարեցին գրգռութիւններ, խժդժութիւններ, կապուտ-կողոպուտ եւ ջարդեր Ատրպատականի շրջաններում՝ Ուրմիայի, Սալմաստի, Խոյի, Մակուի, Ղարադաղի (Դզմար) շրջանում, Ս. Թադէի վանքում, ապա՝ մուտք գործելով նաեւ Թաւրիզ՝ պատանդներ վերցրին հայ բնակչութիւնից, որին պիտի հետեւէր Թաւրիզի հայութեան եւ քրիստոնեաների կոտորածը...[21]:

Յատկանշելի է, որ օսմանական բանակի ոտնձգութիւնների մասին Իրանի ԱԳՆ փաստաթղթերի տարբեր արխիւներում մատնանշւել են նաեւ 1909 թւականի ներխուժումները Ատրպատականի սահմանակից քաղաքներ[22]:

Թուրքական զօրքերի՝ Պարսկաստանի հիւսիսային շրջան ներխուժելու և տեղի քրիստոնեայ բնակչութեան ոչնչացման մասին վկայում է նաև Էրզրումում գերմանացի հիւպատոս Շոյբներ Ռիխտերը, որը Գերմանիայի ռեյխսկանցլեր Բետման Հոլվեգին 1916 թ. դեկտեմբերի 4-ին գրած նամակում նշում է. «Իրանի հիւսիսում Խալիլ բէյի արշաւանքի նպատակն էր հաշւեյարդար տեսնել հայկական և ասորական գնդերի նկատմամբ և Պարսկաստանի հիւսիսային շրջաններից հայկական, ասորական և պարսկական բնակչութեան արտաքսումը: Խալիլ բէյի արշաւանքը թուրքերի նկատմամբ խորն ատելութեան պատճառ հանդիսացաւ»[23]:

Պարսկաստանի հիւսիսային շրջաններում հայկական բնակչութեան դէմ թուրքական զօրքերի կողմից գործադրւած բնաջինջ քաղաքականութիւնը վերլուծելիս պատմաբան Ս. Պօղոսեանը, վկայաբերելով անգլիական մամուլը, նոյնիսկ նշում է, թէ. «Մեծ Եղեռնը սկսւեց ոչ թէ արեւմտահայերի, այլ արեւելահայերի եւ պարսկահայերի ջարդերով: Դրա վկայութիւններից մէկն այն է, որ, ի տարբերութիւն Աբդուլ Համիդի, Երիտթուրքերը ծրագրել էին իրականացնել ոչ միայն արեւմտահայերի (թուրքահայերի), այլեւ արեւելահայերի (ռուսահայերի ու պարսկահայերի) ոչնչացում, այսինքն՝ խօսքը ողջ հայութեան ամբողջական բնաջնջման մասին էր՝ անկախ հպատակութիւնից: 1914 թ. վերջերին եաթաղանի զոհ են դառնում Պարսկահայքի (Փայտակարան-Դ.Մ.), Ատրպատականի, Բասենի, Արդուինի, Արդահանի եւ մի քանի ուրիշ գաւառների հայերը: 1914-ի վերջին գործողութեան մէջ դրւեց Ուրմիայի նեստորական ասորիների բնաջնջման ծրագիրը: Խնդիր էր դրւած վերացնել այն բոլոր ոչ-թուրք տարրերին, որոնք անջատում էին թուրքերին՝ Բաքւի եւ Ատրպատականի թուրք-թաթարական բնակչութիւնից»[24] :

«Ցեղասպանութեան ժամանակակիցների եւ ուսումնասիրողների տեսադաշտում եղել է հիմնականում Արեւմտահայոց Գողգոթայի եւ Արեւմտեան Հայաստանի հայազրկման փաստը: Երիտթուրքական վարչակարգը դրել էր ընդհանրապէս հայ ժողովրդի ոչնչացման հարցը: Ցեղասպանութիւնն ընդգրկել էր ե՛ւ Արեւմտեան Հայաստանը, ե՛ւ Պարսկաստանի հայաբնակ վայրերը, ե՛ւ Արեւելեան Հայաստանը: Կոտորածների առաջին զոհերը 1914 թ. վերջերից դառնում են Ատրպատականի հայերը՝ կապւած վերոյիշեալ շրջաններ թուրքական զօրքերի ներխուժման հետ»[25]:

Այսպիսով, հայերի ցեղասպանութեան յանցաւոր ծրագրի պրակտիկ գործադրումը սկսւել էր երիտթուրքական կլիկի՝ (աւազակախմբի-Դ.Մ.) 1915 թւականի ապրիլի 15-ի տխրահռչակ հայասպան հրամանագրից ամիսներ առաջ, եւ նրա առաջին զոհերը դարձան Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող հայերը[26]:

Այդ իրողութիւնը չեն ժխտում նաեւ իրենք՝ թուրքերը: Պանթուրքիզմի գաղափարախօսներից Թեքին Ալփի կարծիքով Իրանի բնակչութեան 1/3–ը թուրքական արիւն ունէր եւ պէտք է վերադառնար իր ցեղակիցների գիրկը: Իսկ դրա համար պարտադիր պայման էր այդ տարածքներից նաեւ հայերի անհետացումը: Թուրքերը մեծ թւով հայերի, արաբների, անգամ պարսիկների արիւն հեղեցին պարսկական տարածքներում[27]:

«Ես սեփական աչքերով տեսայ,- գրում է ռուսական առաջին բանակի փոխհրամանատար Կ. Մատիկեանը,- հարիւրաւոր ծածկւած դիակներ ընկած փոսերում, գարշահոտութիւն, որ վարակել էր օդը, տեսայ գլուխը հատած դիակներ, քարերի վրայ կացինով կտրւած ձեռներ, սրունքներ, պոկւած մատներ, դուրս քաշւած գանգեր, դիակներ՝ փլատակների եւ տասնեակ զոհւածներ՝ ցանկապատերի տակ... Սպանութիւններ կատարւել են հայկական շատ գիւղերում»[28]:

1915 թ. Յունուարին, երբ Կովկասեան ճակատում թուրքական բանակը յարձակողական գործողութիւններ էր ծաւալել, նրան միացած Համիդիէն եւ Զեթէները կենտրոնացան Ալաշկերտի դաշտում եւ սկսեցին հայերին կոտորել: Այդ կոտորածները տարածւելով հասան Վանի նահանգ եւ Ուրմիա լճի շրջանները: «Էնւերի փեսան՝ արիւնարբու Ճեւտեթ եւ ազգայնական Խալիլը թրքական բանակի գլուխն անցած

ասպատակեցին Պարսկաստանի հիւսիս, եւ հայկական ու ասորական գիւղերը իրենց յարձակումներուն թիրախ հանդիսացան: Գիշատիչներէ հալածական թռչուններու նման հայերը փախուստ կուտային ամէն ուղղութեամբ՝ ապաստան գտնելու համար...»[29]:

Այս իրադարձութիւնների մասին Սիմոն Վրացեանը 1915 թւականի յունուարին Թիֆլիսից Հ.Յ.Դ. Ամերիկայի կենտրոնական կոմիտէին յղած նամակում գրում է. «...Այդ պանիկայի միջոցին հրաման է տրուում Պարսկաստանի եւ Ալաշկերտի զօրամասերին յետ քաշուել, սկսում է յետ գալ եւ Ատրպատականի ռուս զօրքը, որի հետ գաղթում են Աղբակի եւ Սալմաստի հայերը: Կարիք կա՞յ ասելու թէ ինչ ահռելի կացութեան մէջ ընկել է այդ ժողովուրդը այս ցրտին: Գաղթում են եւ Թաւրիզից, որը անցել է թուրքերի ձեռքը»[30]:

Այս մասին կրկին խոստովանել են նոյնինքն ջարդարար թուրքերը.- «...Պարսկաստան ներխուժող թրքական բանակի հրամանատար Խալիլ բէյը 1914-ի վերջերին եւ 1915 թ. սկզբին, երբ պարտութիւն կրեց հայ կամաւորական գնդերից (Անդրանիկի գլխաւորութեամբ – Դ.Մ.) եւ ռուս բանակից, անցաւ Վան եւ այնտեղ Ջեւդեթին (Վանի կուսակալ) յայտնեց, որ «մաքրել» է Ուրմիայի եւ Սալմաստի քրիստոնեաներին, Ջեւդեթն էլ պատրաստուել էր «մաքրելու» Վանի եւ Վասպուրականի հայերին»[31]:

«Մաքրման» այսպիսի բազմաթիւ գործողութիւնների են դիմել թէ՛ քրդերը, եւ թէ՛ թուրքերը, երբ յատկապէս հայ կամաւորականներից պարտութիւն կրելով՝ դրա վրէժը լուծում էին հայ ազգաբնակչութիւնից, որոնք էլ ստիպուած գաղթում էին իրանական տարածք, որն աւելի ապահով էր համարւում[32]:

Այդ մասին վկայել են իրանական աղբիւրները եւս, զորօրինակ. «1914-1915 թթ. հազարաւոր հայ գաղթականներ «մուսիօ քեռիի» գլխաւորութեամբ Արեւմտահայաստանից Սալմաստ են գաղթել»[33]:

Խալիլ բէյի մատնանշած պարտութիւնը վերաբերում է Դիլմանի հռչակաւոր ճակատամարտին, որում «...իրեն փայլուն կերպով դրսեւորեց Անդրանիկը 1915 թ. ապրիլին, որտեղ նրա ջոկատը ջախջախեց Խալիլ բէյի կորպուսը եւ կանխեց իրանական Ադրբեջանից (Ատրպատական-Դ.Մ.) գերմանա-թուրքական զօրքերի Անդրկովկաս ներխուժելու վտանգը»[34]:

Իրանահայ նշանաւոր գործիչ, պատմագէտ Անդրէ Ամուրեանը (Տէր Օհանեան) իր փաստարկները հիմնաւորել է տրամադրութեան տակ ունեցած մի քանի փաստագրութիւն-արխիւով, որի մէջ օրը օրին արձանագրուած են թուրքական ներխուժող բանակի այն բոլոր անիրաւութիւնները, սպանութիւններն ու գրգռութիւնները, որոնք կատարուել են Ատրպատականում: Այդ փաստագրութեան հեղինակը Թաւրիզի Ֆրանսիական միսիոնարութեան պետ Հայր Պ. Ֆրանսէնն է, որ պատերազմի ժամանակ նշանակած է եղել իբրև Իսպանիայի և Հոլանդիայի հիւպատոս՝ հովանաւորելու համար Ատրպատականի քրիստոնեայ տարրերին:

Ուրմիայի Ֆրանսիական միսիոնարութեան կոյսերը օրը օրին օրագիր են կազմել եւ տեղեկագրել Թաւրիզ՝ Հայր Պ. Ֆրանսէնին, եւ նա դիմումներ է կատարել ու միջոցներ ձեռք առել՝ փրկելու անմեղ տարրերին, որոնք զոհն էին թուրքական վայրագութիւնների: Այսպէս, օրինակ, թուրքերը ներխուժում են Ուրմիայի Ֆրանսիական միսիոնարներու շէնքը եւ սպանում նրա պետ հայր Սոնտագին՝ եկեղեցու բակում: Նրա արեան հետքը պահւում է տարիներ շարունակ, ապա յուշարձան է կանգնեցւում անմեղ նահատակի արեան հետքի վրայ[35]:

Հայր Պ. Ֆրանսէնի վկայութիւնները խիստ արժէքաւոր են նրանով, որ վկաները օտարազգի են՝ ֆրանսիացի, հոլանդացի, իսպանացի, եւ օրը օրին արձանագրել են ամէն անցուդարձ[36]:

Սա եւս ինքնին ապացուցում է, որ Մեծ եղեռնը ոչ թէ արեւմտահայերի, այլ արեւելահայերի եւ ի մասնաւորի՝ պարսկահայերի ջարդերով է սկսել:

Այստեղ կը ցանկանայինք կարճ ակնարկով անդրադառնալ Ուրմիայի, Խոյի, Սալմաստի եւ շրջանի կոտորածներից հրաշքով ազատուածների վկայութիւններին, քանի որ նրանք ժամանակին ականատես են եղել թուրքական գազանութիւններին:

Այսպէս, Խոյ գաւառի Թաղեր գիւղից Շուշանիկ Բէյութեանցը գրում է. «1914-ի դեկտեմբերեան նահանջին, երբ ռուսները Բաշկալաէն (Աղբակ) եւ Ատրպատականէն կը քաշւին, ռուսները տեղական հայերը իրենց հետ կը տեղափոխեն Կովկաս եւ Սալմաստի, Ուրմի շրջաններու նման Խոյն ալ գաղթի կը դիմէ: Դեկտեմբերի վերջերը ռուսները յայտարարեցին, որ իրենք յետ կը դառնան եւ հայերն ալ պէտք է իրենց հետ նահանջեն (ուրիշ պատմողներ կը պատմեն, թէ կամաւորները կը պարտաւորեցնեն նահանջել՝ չկոտորուելու համար): 200 տունէ բաղկացած հայ թաղամասը բռնեց գաղթի ճամբան: Գիւղին մէջ մնացին միայն մի քանի ծերեր, որոնցմէ 3-ը սպանուած են, միւսները կան»[37]:

Իսկ Յակոբ Խորոզեանցը, որ Սալմաստ գաւառի Հաւթան գիւղից էր, 1916 թ. վկայել է հետեւեալը. «1914 թ. դեկտեմբերի սկզբները, Սոմայի շրջանի քիւրտերը Ամիրխանի ցեղապետ Ջահանգիր աղայի առաջնորդութեամբ յարձակեցան Մահլամ եւ Սառնա զուտ հայաբնակ գիւղերուն վրայ եւ հրդեհեցին խոտի դէզերը եւ յառաջեցան դէպի այդ գիւղերը, սակայն գիւղացիներու եւ ռուսներու բուռն ընդդիմութեան հանդիպելով՝ կը փախչին: Դեկտեմբերի 18-ին, երբ ռուսները տաճկական սահմաններէն յետ նահանջեցին, ժողովուրդը իրենց հետ արտագաղթել տին դէպի Կովկաս: Տուները մեծ մասամբ այրած են կամ փայտերը վառելու համար քանդած: Վառած է Շէյթան-Աւայի դպրոցը, դատերու սրահը, Ս. Աստուածածին եկեղեցին (ուխտատեղի): Այրողները տեղական թուրքեր են: Ամբողջ Սալմաստի շրջանին եկեղեցիները աւարի են տուած, զանգակատուները ջարդուած կամ գնդակներով ծակոտուած են:

Հաւթան՝ 650 տուն, Խոսրովա՝ ասորաբնակ, որի մէջ կայ 20 տուն հայ բնակչութիւն, Սաւրա՝ 180 տուն հայ բնկ., Հին քաղաք՝ 125 տուն հայ, Սառնա՝ 180 զուտ հայաբնակ, Մահլամ՝ 270 տուն զուտ հայաբնակ,

Շէյթանաւա՝ 15 տուն հայ, Դրիշկ՝ 35 տուն հայ, Քօչամիշ՝ 25 տուն հայ, Քալաշան՝ 20 տուն, Փայաջուկ՝ 400 զուտ հայաբնակ, Ղալասար՝ 200 տուն զուտ հայաբնակ, Ախտախանա՝ 80 տուն հայ, Ղզլջամա՝ 60 տուն, Սարամերիկ՝ 85 տուն, Վարդան՝ 12 տուն, Ուլա՝ 6 տուն, Գիլիզան՝ 4 տուն, Փաթաւոր՝ 3 տուն, բոլոր վերոյիշեալ գիւղերը գաղթի ճամբան բռնեցին դեկտեմբերի 20-24-ի ընթացքին: Այդ ատենները Աղբակի շրջանի հայերն ալ ռուսներու հետ նահանջեցին եւ Սալմաստ եկան, որոնք սալմաստցիներու հետ Կովկաս անցան, մի մասը տեղացիներու հետ միասին Սալմաստի շրջանը մնացին: Ատոնց մէ 700 հոգի, գլխաւորաբար տղամարդիկ, ջարդուեցան չարաչար տանջանքներով, ոմանց վիզը դրան շէմքին վրայ դրած՝ նաջախով (կացին) կտրած են, ոմանց՝ գնդակահարած, ոմանց՝ անդամահատած եւ տանջանքներով սպաննած, ուրիշներուն ողջ-ողջ այգիներու պատերու տակ են թաղած: Ջարդը տեղի ունեցած է թուրք հրամանատար Խալիլ բէյի հրամանով: Ջօրքերուն մասնակցեցան Սոմայի Թիմուր աղայի եւ Ջահանգիր աղայի քուրդերը եւ հայերու ունեցած ամբողջ ստացուածքը թալանեցին:

Տեղացի թուրքերը կին ու երեխաներ պահած են (պատմողը պահողներուն անունները չի յիշեր), մի տան մէջ հաւաքած, կողոպտած, հազար ու մի անարգանքի ենթարկած են եւ ապա, ռուս զօրքի վերադարձին, վերստին, ազատած՝ Կովկաս են անցած»[38]:

Որպէս վերոգրեալ վկայութեան փաստարկում՝ տեղին է ներկայացնել հետեւեալ վաւերագիրը՝ մէջբերուած «Կաւկազ» թերթում. «Խոսրովան մի մեծ գիւղ էր, ունէր 500 ընտանիք, այժմ լրիւ ամայացել է»[39]:

1915 թ. Փետրուարի 14-ի գիշերը Խոսրովա եւ Մահլամ գիւղերում սպանուեց 707 հայ: Այդ մասին Կ. Մատիկեանը գրում է Կովկասեան բանակի հրամանատարութեանը. «Մինչեւ ամսի 14-ը հայերը շնորհիւ պարսիկների մնացել էին անվնաս: Բայց թուրքական կառավարութիւնը... սպառնաց պատժել բոլոր այն պարսիկներին, ովքեր կը թաքցնէին քրիստոնեաներին ...Կայմակամ Ռուստամ բէյը հրամայեց քրդերին ու զինուորներին պարսիկների տներից հանել քրիստոնեաներին եւ սպանել նրանց թաքցնողներին: Հրամանը կատարուեց անմիջապէս... հայերին տարան Հարիւան եւ Խոսրովա գիւղերը, որտեղ էլ....տանջանքներով սպանեցին....»[40]:

Յաջորդ վկայութիւնը Մկրտիչ քին. Տէր Պետրոսեանինն է՝ Ուրմիա գաւառի Մահմադքեար, Նաղադէ եւ Գեարդաբադ գիւղերի կոտորածների մասին.

«1. Մահմադքեար եւ Նաղադէ գիւղերուն մասին - Պաշտօնավարութեանս վայրը՝ Սուլդուզ գաւառամասը, 1914 թ. Դեկտեմբերի 7-ին Մուսուլի կողմի Դիզէի ըսած քիւրդ աշիրէթներու եւ թուրք բաշիբոզուկ զօրքերու կողմանէ յարձակումի ենթարկուեցաւ: Սուլդուզի եւ Ուրմիայի շրջանի մէջ եղած ռուս զօրքերը, որոնք թոուցիկ խումբեր կազմած այդ կողմերն էին, ընդառաջեցին: Հետեւանքը այն եղաւ, որ ռուսները նահանջեցին դէպի Ուրմիա, իսկ քուրդ խուժանը թալանի տուաւ Մահմադքեար հայ եւ ասորի գիւղը (մօտ 80 ծուխ ունեցող, կէսը հայ են, կէսը՝ ասորի), քշեցին տարին տաւար, ոչխար եւ տնային կահ-կարասիներ: Հետեւեալ օրը յարձակուեցան Նաղադէ գիւղին վրայ, չթալանեցին, միայն ձիաւորներով տեղաւորուեցան հայ հարուստներուն տունները: Վերջիններս զգուշանալով, որ յարձակում գործողները կարող են սպանութիւններ, առեւանգումներ եւ բռնաբարութիւններ գործել, կապաստանին իրենց հարեւան քիւրտերուն տունները: Ձիաւորները մօտ 5 օր կուտեն, կը փչացնեն հայ հարուստներուն ունեցած-չունեցածը եւ կը տանին բոլոր պղնձեղէնները, սամաւարները, կանացի զարդերը եւ այլն: Մենք այդ մասին բողոքեցինք Սոուջ-Բուլաղի մէջ եղած թուրքերու հրամանատարին, այն հրամայած էր վանեցի Ճեմալ Էֆենտիին, որ թալանած իրեղէնները յետ տրուին եւ հայերու հետ խաղաղ ապրին: Ճեմալ Էֆենտին իրեն եղած հրամանի հիման վրայ կանչեց ինձ եւ հայ ակսակալներուն (ծերերուն) եւ խօսքը ինծի ուղղելով՝ ըսաւ. «Փափազ Էֆենտի, ժողովուրդիդ կը յայտարարես, որ իրենց գործին կենան, երկրագործը իր գործին երթայ, առեւտրականը՝ իր առեւտուրին, ես եղած անկարգութիւններուն վերջ կուտամ: Ըսէ՛ք, որ միամիտ մնան տեղի հայերը, եթէ անոնք կը կասկածին կոտորածէն, մի՞թէ մեր երկիրը քրիստոնեայ չկար կոտորէինք, որ գայինք այստեղ քրիստոնեաներ կոտորելու»: Այդ խօսքերուն վրայ մենք հանգստացած դուրս եկանք:

Այնուհետեւ քիւրտ աշիրէթներուն եռուզեռը աւելի սաստկացաւ: Նոյն Ճեմալ Էֆենտիին հրամանով ոստիկանները ամէն օր կուգային եւ կը պահանջէին հաց, իւղ, գառ, ոչխար, բրինձ, տեղաշորեր, հեշտաեռ պղնձէ կաթսաներ: Ամէն ինչ, որ կը տանէին, վերադարձնել չկար: Նորէն դիմումներ եղան նոյն Ճեմալ Էֆենտիին, բայց ապարդիւն, որով վերադարձայ Ուրմի՝ իմ ծննդավայրը, դեկտեմբերի 13-ին:

2. Ուրմիի Գեարդաբադ գիւղին մասին. 1914 թ. Դեկտեմբեր 13-ին ներկայացայ Ուրմիայի Առաջնորդական փոխանորդ Խորէն վարդապետ Լազարեանին եւ պատմեցի եղած անցուդարձի մասին: Դեկտեմբերի 19-ին ես մեր գիւղն էի, երբ Առաջնորդին նամակը ստացայ, որով գրած էր՝ նամակս առնելուդ պէս աշխատեցէք բոպէ առաջ ձեր հոգին ազատել, որովհետեւ ռուսական զօրքը կը նահանջէ: Ամէն ինչ թողեցինք, դուրս եկանք: Մենք Դիլմանի, Խոյի վրայով 14 օրուայ ընթացքին հազիւ հասանք Ջուլֆա՝ շնորհիւ սոսկալի ցեխին: Յղի կանայք վիժեցին երեխաները, քանի՜-քանի՜ երեխաներ տեսայ, որ ձիւնի վրայ էին ձգուած: Գաղթողներս 7-8000 հոգի էինք: Մեր գիւղը 150 տուն ունէր, բոլորը մեզ հետ գաղթեցին, միայն 46 հոգի գիւղը մնացին, մնացածներէն 14 հոգի սպանուած են, որոնցմէ 4-ը՝ տղամարդ, 3-ը՝ կին, 2-ը՝ պատանի, 2-ը՝ աղջիկ:

Սպաննուածներէն դրուագ մը: Մայր մը իր երկու աղջիկները իրենց մեծ մօրը (տատ) մօտ կը թողու, կը փախչի: Մեծ մայրը երկու երեխաներն առած, գիւղի հարուստներէն մէկուն թոնիրին մէջը կը պահուըտի: Թալանչիները կը նկատեն, որ թոնիրին մէջ մարդիկ կան, կը քարկոծեն եւ այնքան քարերով կը հարուածեն, մինչեւ 3-ն ալ շունչը կը փչեն: Ուրմիայի հարա-

ային կողմը եղած հայ եւ ասորի ժողովուրդը չէր կարողացած գաղթել: Ասոնք կը հաւաքուին Ուրմիայի ամերիկեան միսիոներներու հովանաւորութեան ներքոյ: Անոնք բոլորն ալ կազատուին կոտորածէն: Միսիոներներու մօտ ապաստանած էին 16.000 հայ, ասորի, որոնք գլխաւորապէս միսիոներներու հաշուին կապրէին: Տուներու մէջ այնքան էին հաւաքած, իրար վրայ դիզած, որ վարակիչ հիւանդութիւնները ծայր առին, այնպէս, որ մեռնողներուն թիւը օրական 10-16 հոգիի հասաւ»[41]:

Տեսել իրադարձութիւնների մասին ամերիկեան գործակալ Թ. Ալէնը տեղեկագիր է ներկայացրել, որը, բացի ասորիներից, ուղղակիօրէն առնչւում է պարսկահայերի ջարդերին: Դեռեւս աշխարհամարտի նախօրեակներին ռուսական զօրքերը գրաւել էին Ատրպատականի հիւսիսը: Գրեթէ նոյն ժամանակ Համիդիէն յարձակուեց Մարգաւարի եւ Թարգաւարի պարսկական գիւղերի վրայ: Ռուսական զօրքերի հետ այդ գիւղերի բնակիչները գաղթեցին Ուրմիա: Հոկտեմբերին թուրքերը յարձակուեցին Ուրմիա քաղաքի վրայ: Սակայն, Բլրի ճակատամարտում թուրքերն ու քրդերը պարտուեցին եւ նահանջեցին: Բայց թուրքերին յաջողուեց առաջանալ: Դեկտեմբերի 31-ին զօրքերն ընդհանուր նահանջի հրաման ստացան: Ասորիները նոյնպէս հեռացան. նրանց զգալի մասը ճանապարհին մեռաւ: Մօտ 800 ասորի ոչնչացուեց տեղում: Յարձակման ենթարկուեցին նաեւ հայերը: Թուրքերը գրաւեցին քաղաքն ու Ուրմիայի հարթավայրը: 1915 թ. Յունուարի 1-ից՝ մայիսի 24-ը «Բոլոր քրիստոնէական գիւղերն ու մուսուլմանական գիւղերում բնակւող քրիստոնեաները թալանուեցին, տղամարդիկ սպանուեցին, կանայք անարգուեցին, մօտ 200 աղջիկ գերեւարուեց: Շատերին ստիպեցին մահմեդականանալ, հազարաւորները մահացան հիւանդութիւններից»: 1915 թ. մայիսի 24-ին ռուսները վերադարձան, նրանց հետ՝ նաեւ ասորիները: Օգոստոսին նորից ռուսները նահանջեցին: Թուրքիայում բնակւող ասորիները հայերի հետ միացած՝ փախան Վանում եւ Մարմարայում գտնուող ռուսական բանակի գրաւած շրջանները: Հետագային, ռուսական բանակի հետ նահանջելով, հայ գաղթականները հաստատւում են Խոյ, Սալմաստ եւ Ուրմիա գաւառներում[42]:

Ուրմիայի հայերին եւ ասորիներին օժանդակող կոմիտէի նախագահ, քահանայ Ու. Շէյդը վկայում է, որ Պարսկաստանի հիւսիսարեւմտեան շրջաններում կատարուած ջարդերի ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է թուրքերի վրայ, նրանք էին կոտորած ու թալան իրականացնողները[43]:

Սալմաստի Սաւրա գիւղից Սիմոն Ղազարեանի՝ 1916 թ. տրված վկայութեան համաձայն. «Դեկտեմբերին ռուսներու նահանջին ատեն, ինչպէս Սալմաստի միւս գիւղերը, մեր գիւղն ալ նահանջեց: 400 տուն բնակչութիւնը վայրկենապէս գաղթի ճամբան բռնեց, 200-է աւելի անկարող ճամբորդելու, ծերեր եւ մի քանի ընտանիքներ ամբողջովին գիւղը մնացին, ամբողջ կանայք հաւաքած են մի տան մէջ՝ թալանած, բռնաբարած, մեծ մասին կոտորած են, իսկ միսները՝ փախուստի դիմած: Սաւրայէն Ջուլֆա, մինչեւ ծունկերնիս ձիւնի, ցեխի մէջ թաթախած կը ճամբորդէինք: Շատերը մեռան, մեր տղան ցրտահար եղաւ, թաղեցինք ձեան մէջ, ճամբաներս շարունակեցինք: Ողջ մնացողները մեծ մասամբ Երկիր են վերադարձեր»[44]:

1915-ին ռուսական բանակը, որ առաջացել էր մինչեւ Սուլդուզ, Սոուջպուլաղ, թերեւս առ ի զգուշութիւն, կրկին յետ է նահանջում մինչեւ Ուրմիա: Տեղի հայ եւ ասորի ժողովուրդը կասկածելով, որ նրանք այդ շրջանից եւս կարող են նահանջել դէպի Սալմաստ, մտավախ, մեծագոյն մասը լքելով տունուտեղ, հապճեպ գաղթում են դէպի Սալմաստ, Ջուլֆա, Թաւրիզ եւ այլուր... Ու դեռեւս 1914-ի աշնանից առգոյ էին ռուսական նահանջի նախանշանները, որի մասին եւս «Այգ»-ը իր 1914-ի հոկտեմբերեան համարում ահազանգ է հնչեցրել, «Դրութիւնը Ուրմիայում» խորագրի ներքոյ, ընդգծելով. «...Իրօք, եթէ ռուսական զօրքը այստեղից շարժւի, Ուրմիան կորած է. այդ դէպքում մանաւանդ քրիստոնեայ ազգաբնակչութեան ապագան կը դառնայ ահաւոր»[45]:

Վերոգրեալի ապացոյց է նաեւ ստորեւ մէջբերուող՝ Սալմաստի Ղալասար գիւղի բնակիչ Թագուհի Օհանէսի Վարդանեանի վկայութիւնը. «1915 թ. Յունուարի 5-ին ռուսները Բաշկալէի կողմերէն նահանջելու ատէն կամաւորներու հետ միասին մեզ տեղահան ըրին, որպէսզի ետեւէն եկող թիւրքերը կոտորած չսարքէին: Մենք մինչեւ անգամ ճանապարհի հաց վերցնել չկարողացանք: Ամէն ինչ գիւղը մնաց, որը մեր գաղթելէն յետոյ թալանած են: Գիւղը մնացին ամէն տունէն մի, երկու կամ աւելի անձինք, 18 հատ գեղեցիկ կին ու աղջիկ առեւանգած են, անպատուած, 9-է աւելի կին, երեխայ եւ մարդ անհետ կորած են: Անցեալ 1915-ի գարնան, երբ մեր մարդիկ Ղալասար գացին, այնտեղ տեսած են ջրհորի եզերքին ձգուած արիւնոտ սղոց մը. ջրհորը նայած գտած են 7-ը դիակ, որոնցմէ 4-ը՝ տղամարդու, 3-ը՝ կնոջ: Սղոցով կտրուած գլուխներէն 6-ը դիակներու մօտ ձգած էին, միայն մէկին գլուխը չեն գտած...»[46]:

1915 թւականի սկզբների՝ Ատրպատականի հայութեան կոտորածների վառ վկայութիւն է ներկայացրել նաեւ անգլիացի հռչակաւոր պատմաբան Առնոլդ Ջ. Թոյնբիին, հայոց ջարդերին նուիրած իր հանրածանօթ «Մի ազգի սպանութիւնը» գրքում: Գրքի տեսել հատուածը, որը ներկայացւում է ստորեւ, անգլերէնից թարգմանաբար մէջբերել է Անդրէ Ամուրեանը. «Հաֆթանում եւ Սալմաստում առանց գլուխների 850 դիակներ գտնուեցին՝ միայն հորերից եւ ջրամբարներից հանուած: Ինչո՞ւ: ՈՐՈՎՀԵՏԵԻ ՀՐԱՄԱՅՈՂ ՊԱՇՏՕՆԵԱՆ ՄԻ ԳԻՆ ԷՐ ԴՐԵԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՄԵՆ ՄԻ ԳԼԽԻ ՀԱՄԱՐ: Միայն Հաֆթանից 500-ից աւելի կանայք եւ աղջիկներ են ուղարկուած Սուջբուլաղի քիւրդերին:

Եթէ կարող էք, երեւակայեցէք այս դժբախտ արարածների բախտը: Դիլմանի (Սալմաստ-Դ.Մ.) քրիստոնեաներից մի մեծ խումբ բանտ նետուեց եւ պարտադրուեցին, որ իսլամանան: Տղամարդկանց թլփատեցին: Ուրմիոյ շրջակայքի ամենահարուստ գիւղը՝

Գիլլփարջան, հիմնայատակ կործանուեց, տղամարդիկ սպանուեցին, գեղեցկադէմ կանայք եւ աղջիկները առնուեցին, նոյնը պատահեց Բաբառուդին: Հարիւրաւոր կանայք խորունկ գետը նետուեցին, երբ տեսան, որ իրենց քոյրերից շատերը աւազակախմբերի կողմից բռնաբարւում էին օրը ցերեկով, ճամբի մէջտեղը: Նոյնը եղաւ նաեւ Սուլդուզի շրջանի Միանդոաբում:

Այս խժդժութիւնները ահռելի են թւում օտարներին, բայց թուրքերի համար բոլորովին թեթեւ էին նկատւում, ինչ որ մօտերս կատարում էին իրենց հողամասի վրայ...»[47]:

***

Ամփոփելու համար, հարկ է համարւում եւս մէկ անգամ ընդգծել, որ Մեծ Եղեռնն ու Հայոց Ցեղասպանութիւնը ոչ թէ արեւմտահայերի, այլ արեւելահայերի եւ ի մասնաւորի պարսկահայերի ջարդերով է սկսել: Իսկ դա շեշտելու հիմք են նոյնպէս իրանական թէ՛ պաշտօնական, եւ թէ՛ փորձագիտական ու մամլոյ աղբիւրների բազմաթիւ մատնանշումները, որոնք էլ աւելի հիմնաւոր ու համոզիչ կարող են դարձնել հայ պատմագրութեան մէջ ցայժմ հպանցիկ անդրադարձները:

Այս իրողութեան շեշտաւորումը էական է ու անհրաժեշտ նաեւ ու մանաւանդ այն առումով, որ այսօր իսկ ականատես ենք Թուրքիայի պանթուրանական նպատակադրումներին՝ ինչպէս Միջին ու Մերձաւոր Արեւելքի, այնպէս էլ Հարաւային Կովկասի ու Միջին Ասիայի տարածաշրջանների ուղղութեամբ: Երկու դէպքում էլ, ինչպէսեւ պատմական անհերքելի փաստերի մերօրեայ կրկնօրինակներով՝ պանթուրքիզմի թիրախում են առաջնահերթորեն գտնւում հայկական ու պարսկական քաղաքակրթութիւնները, ներառեալ նրանց պետական, թէ ազգային ամբողջականութիւնն ու անվտանգութիւնը:

## Հղումներ

1. Իրանի ներքին գործերի նախարարութիւնը, վկայակոչելով Ահմեդ Շահի հրովարտակը Եւրոպայի պատերազմի մասին, երկրի մակարդակով շրջանառութեան մէջ էր դրել մի շրջաբերական, որում, ընդգծելով իր կառավարութեան չէզոքութիւնը, յորդորում էր հասարակական լայն խաւերին խուսափել հակամարտող կողմերից որեւէ մէկին կողմնակցութիւն կամ հակադրութիւն ցուցաբերելուց («Ռասադ» թերթ, 4 նոյ. 1914, h. 19, էջ 9):
2. «Այգ» եռօրեայ, 1915, հոկտ. 18, համար 6, Թաւրիզ:
3. Բայբուրդեան Վ.Ա., Օսմանեան Թուրքիայի Ինտերվենցիան Իրանում 1905–1911 թթ., էջ 93: Տես. Штаб Кавказского военного округа. Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой, Тифлис, 1911, № 3, Ч 26-, ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1009.
4. Ատրպատականցիներ – Դ.Մ.:
5. Բայբուրդեան Վ.Ա., նշ. աշխ., էջ 102:
6. Յարութիւնեան Ա.Յ., Կովկասեան ռազմաճակատը 1914–1917 թթ., Թեհրան, «Ալիք», 1977, էջ 65:
7. Դեհղանի Ռ., «Հայերը Առաջին աշխարհամարտում», էջ 228:
8. Զարեվանդ, Միացեալ, անկախ Թուրանիա, Աթենք, 1988, էջ 105:
9. Կիրակոսեան Ա., Հայկական Հարցը եւ հայերի Ցեղասպանութիւնը, Երեւան, 2006 թ., հրատ. «Նորավանք» հիմնադրամ, էջ 14, 15:
10. «Նորահար» թերթ, 13 յուլիս 1915 թ., համար 57, էջ 3:
11. Magdalena Golnazarian-Nichanian, «Les Armeniens d'Azerbaidjan Histore local en enjeux regionaux 1828–1918». Paris, 2009, p. 94 .
12. Տես. նոյն տեղում:
13. Խոսրոյեւա Ա., Ցեղասպանութեան փաստագրութիւն, Ասորիների ջարդերը թուրքաբնակ վայրերում Ա. Աշխարհամարտի տարիներին, էջ 88:
14. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968 թ., էջ 44:
15. Պօղոսեան Ստ., Հայոց Ցեղասպանութեան պատմութիւն, 2-րդ հատոր, էջ 443:
16. Խոսրոյեւա Ա., Ասորիների ջարդերն Իրանի թուրքաբնակ վայրերում Առաջին աշխարհամարտի տարիներին, «Հայոց ցեղասպանութեան պատմութեան և պատմագրութեան հարցեր», N. 9, 2004, էջ 91:
17. Տես. Պօղոսեան Ստ., նշ. աշխ., 2-րդ հատոր, էջ 444:
18. Նոյն տեղում:
19. «Մշակ», 19.03.1915 թ., Kloian R. The Armenian Genocide, California, 1985, էջ 188–9: Տես. Պօղոսեան Ստ., նշ. աշխ., էջ 444:
20. Նոյն տեղում:
21. Ամուրեան Ա., Ատրպատականի հայութեան վիճակը թուրքական բանակների ներխուժման օրերին, Թեհրան, 1979, էջ 5:
22. Իրանի արտգործնախարարութեան փաստաթղթերի եւ դիւանագիտութեան պատմ. կենտրոն, արկղ 42, սերիա 16, թղթ. 2:
23. Позиция немецкого консула в Эрзеруме Шойбнера-Рихтера в Армянском вопросе, "Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии", сб. Ереван 1995, с. 421
24. Պօղոսեան Ս., Հայոց Ցեղասպանութեան պատմութիւն, 3-րդ հ., էջ 7–8:
25. Հայոց պատմութիւն. Հիմնահարցեր հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը, խմբ.՝ պրոֆ. Հր. Ռ. Սիմոնեան, էջ 249:
26. Նոյն տեղում, էջ 250:
27. «...Ատրպատական ներխուժելուց յետոյ թուրքերը մի քանի հայերի եւ ռուսահպատակների հետ միասին, գնդակահարել են Սոուջբուլաղ եւ Մարաղա քաղաքների կառավարիչներին»: «Ռասադ» թերթ, 20-ը յունուարի 1915 թ., էջ 3:
28. Պօղոսեան Ս., նշ. աշխ., 3-րդ հ, էջ 7 (տես. նաեւ ՀԱԱ, ֆ. 4712, ց. 2, գ. 2, թ. 1):
29. Նոյն տեղում, տես. նաեւ Շիրակեան Ա., Կտակն էր նահատակներուն, Բէյրութ, 1965, էջ 26:
30. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, տպ. «Ալիք», էջ 587:
31. Ամուրեան Ա., նշ. աշխ., էջ 6:
32. GH1332-K66-p38-47, Իրանի ազգային փաստաթղթերի կազմակերպութիւն:
33. Իրանի արտգործնախարարութեան փաստաթղթերի եւ դիւանագիտութեան պատմ. կենտրոն, արկղ 66, սերիա 71, թղթ. 43:
34. Աղայեան Ծ.Պ., Զօրավար Անդրանիկի գործունէութեան մասին (պատմաբանասիրական հանդէս), էջ 43:
35. Ամուրեան Ա., նշ. աշխ., էջ 5:
36. Նոյն տեղում, էջ 6:
37. ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 21 շրջ., բնագիր, ձեռագիր:
38. ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ.17-ի շրջ. եւ 18, բնագիր, ձեռագիր:
39. Տես. «Кавказ», 04.01.1915 թ.:
40. ՀԱԱ փաստաթղթեր, ֆ. 4712, թղթ. 2, գ. 2:
41. ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 14 շրջ.- 15 շրջ., բնագիր, ձեռագիր:
42. U.S. State Department Record Group 59, 867. 4016/39/, տես. Պօղոսեան Ստ., նշ. աշխ., 2-րդ հ., էջ 445:
43. Նոյն տեղում, 59, 867.4016/270/. տես. Պօղոսեան Ստ., նշ. աշխ., էջ 446:
44. ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 404, թ. 11 շրջ., բնագիր, ձեռագիր:
45. «Այգ» շաբաթաթերթ, 1914, հոկտ. 19, Գ տարի, հ. 23, էջ 1:
46. ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 7-ի, շրջ., բնագիր, ձեռագիր:
47. Ամուրեան Ա., նշ. աշխ., էջ 21, 22:

# Ցավի մորմոքը և ուրացության մեղքը

**Մարգարիտա Խաչատրյան**
**Բանասիրական գիտությունների դոկտոր**

*Հարվող ծառին կրկնակի*
*ցավ է պատճառում կացնի պոչը ...*

Արդեն քանի՜ տասնամյակ ազգովին փորձում ենք արթնացնել աշխարհի քնած խիղճը, բայց պարզվում է՝ մեզանում քիչ չեն թուրքի բարբաջանքները կրկնողները ... Պատճառը լավ թաքցրած, բայց ակնառու չիմացությունն է, եթե մի պահ մոռանանք մեր երևակայության սահմաններում չտեղավորվող շահամոլությունը:

Շապինգարահիսարցի Արամ Հայկազի (Չեքեմյան, 1900-1986) «Նշանածս կ'ըսէ, որ ... »[1] պատումի հերոսուհին «Ես այդ բոլորէն լուր չունէի ...» չքմեղանքով փորձում է պաշտպանվել պատմական ճշմարտությունը ոչ միայն իմանալու, այլ նաև հարկ եղած դեպքում ներկայացնելու պարտադրանքից, երբ ստիպված է լսել օտարազգի նշանածի մեղադրանք-կշտամբանքը. «Ի՞նչ տեսակ մարդիկ էք դուք՝ հայերդ, գացիք ու ոչխարի հոտերու պէս ջարդուեցաք... »:

Գրողը խրատում է երիտասարդ հայուհուն՝

ա) «Նախ՝ կ'ըսես, որ ո՛ւր որ հնարաւոր էր, կռուեցանք: Վախկոտներ չենք: Մեր ազգային պատմութիւնը ապստամբութեան մը նկարագրականով կը սկսի... »:

բ) «… Անոնք պետական մեքենայ, բանակ, կազմակերպութիւն, թնդանօթ, այլ միջոցներ ու անհատնում ռազմանիւթ ունէին... Մեր ինչո՞ւն դէմ... »:

գ) «Երկիրը պատերազմի մէջ էր, ու երիտասարդութիւնը տարուած էր, կանչուած էր բանակ՝ իր քաղաքացիական պարտականութիւնը կատարելու: Բոլոր աչքի ինկող դէմքերը կեղծուպատիր ամբաստանութիւններով բանտ էին նետուած կամ կախաղան հանուած: Մնացած էինք անգլուխ»:

դ) «Աւելի՛ն կայ. կարաւանի ճամբաներուն, անցած ու անցնելիք ուղիներուն վրայ ամէն օր ու օրը քանի մը անգամ կը հանդիպէին բիրերով, եաթաղաններով, նոյնիսկ մանգաղներով զինուած խուժաններու, որոնք առիթի կը սպասէին, վրանին թափուելով, յօշոտելու զանոնք: Ժանտարմաներն էին, որ անոնց գլխուն վրայէն քանի մը գնդակ նետելով՝ ետ կը կեցնէին զանոնք իրենց ծրագիրը իրագործելէ: Քիչ անգամներ չէր, որ երախտագիտական զգացումով լեցուած ենք դէպի մեր ուղեկիցները: Ճշդեմ նաեւ, թէ յետագային պարզ եղաւ մեզ համար, թէ երեւութապէս մեզ պաշտպանելու համար գործուած այդ արարքները գործուած էին պարզապէս շահախնդրութեամբ՝ աւարը իրենց վերապահելու մտահոգութիւնով»:

ե) «Յետոյ կար նաեւ այն պարագան, որ մենք բնաւ չկասկածեցանք, թէ մեզ սպասողը ամբողջական բնաջնջումն էր: Պատմութեան մէջ Թիմուրներ ու

Ալփասլաններ գիւղեր ու քաղաքներ սրբած են երկրի երեսէն ու անոնց բնակչութիւնը սուրէ անցուցած, գերած, բայց ցեղ մը ամբողջութեամբ չէ բնաջնջուած բնաւ: Նոյնիսկ մինչեւ այդ թուականը բառարաններուն մէջ «ցեղասպանութիւն» բառը գոյութիւն չունէ՛ր... Մենք՝ հայերս, հակառակ որոշ նշաններու, չկրցինք գուշակել, թէ կացինը այս անգամ մեր արմատին էր ուղղուած... Դարերով, դարերով՝ ամէն 20-25 տարին անգամ մը, թուրքերը կոտորած են մեզ ու թալանի տուած մեր գոյքը: Ենթադրեցինք, թէ այս անգամ ալ, մեր պարտէզն ու այգին մտնելով, քիչ մը պիտի ջարդեն մեր ճիւղերը, ու երբ իշխանութիւնները բաւ համարեն, պիտի տան «դադրեցուցէ՛ք»ի հրամանը»:

զ) «Մեր առաջաւոր դէմքերէն ոմանք փոթորիկի առաջին նշաններուն հետ միջոցներ ունէին՝ արտասահման անցնելով իրենց կաշին փրկելու, բայց, ի պատիւ իրենց, չփախան: Մնացին ժողովուրդին հետ ու նահատակուեցան. խորհեցան, թէ իրենք զիրենք մատաղ տալով՝ թերեւս յաջողին փրկել զանգուածները... Ուրիշ խօսքով, ազնուական հայ ժողովուրդին համար անըմբռնելի եղաւ, թէ մարդկային միտքը կրնայ նման անմարդկային դաւ մը յղանալ ու գործադրութեան դնել, եթէ նոյնիսկ այդ միտքը թրքական միտքն է... »:

է) «Թուրքիան ընկճելու, հայոց հանդէպ իր ծրագրած ահաւոր դաւին համար զայն պատժելու շատ աւելի ազդեցիկ միջոցը կար. ազդեցիկ ու դիւրին միջոցը, բայց այդ վերջին ու յուսահատ միջոցին դիմելու համար պէտք էր, որ լիովին տեղեակ ըլլայինք հայաջինջ ծրագրին ամբողջութեան. այն ատեն թերեւս չվարանէինք ու անցնէինք գործի՝ Թուրքիան մէկ ծայրէն

միւսը վառելու գործին: Անիծապարտ այդ երկրին ո՛ր մէկ անկիւնին մէջ հայ չկար որ... Հայոց ընելիքը որոշ թուականի մը ամէն տեղ, ամէն քաղաքի ու գիւղի մէջ իր տունէն, պալատէն, գոմէն կամ հասուننալու վրայ եղող արտէն կրակ մը սկսիլն էր: Մոռնանք, թէ համայնատարած հրդեհ մը սահմանափակ միջոցներով զսպել անկարելի է, այլեւ թուրքեր կրակ մարել չեն կրնար, չեն գիտեր:

Այդպէս չեղաւ: Սխալած էինք: Ահաւո՛ր կերպով սխալած»:

Սա Շապին Գարահիսարի հերոսամարտի մասնակից Արամ Չեքեմյանի ցավոտ անդրադարձն է 1915-ի ողբերգությանը:

Արամ Հայկազի այս պատումի արձագանքն է Վահե Գյուլեսերյանի (1894-1970) «Թէ ինչպէս ջարդուեցանք «ոչխարներու պէս»» (Արամ Հայկազի «Նշանածս կ՚ըսէ» յօդուածի մասին) խոհագրությունը[2]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հզոր բանակ ունեցող քանի՛ երկիր ու ժողովուրդ հաշված օրերում կամ շաբաթներում հայտնվեց օտարի լծի տակ, համակենտրոնացման ճամբարներում քանի՛ միլիոն մարդ նահատակվեց: Ընդամենը 20-25 տարի առաջ Թուրքիայում կատարվածը մնաց մարդկության խղճի վրա, ավելին՝ անգամ մեր օրերում հաճախ են հիշատակում 1939-1945-ի նախճիրը՝ հպանցիկ հիշատակելով կամ բոլորովին անտեսելով հայության ցեղասպանությունը: Ավելին, 2023-ին Արցախում կատարվածը հաստատեց՝ մարդկությունը, հիշողությունից բացի, կորցրել է նաև տեսնելու և կատարված ողբերգությունից դաս քաղելու ունակությունը: Ամենասարսափելին անզիջող համառությամբ իրականությունը ժխտելն է, զոհին եւ ոճրագործին փոխատեղելը, համառ տգիտությամբ զոհերին մեղադրելը:

1970-ին թուրքական իշխանությունները փորձեցին ցեղասպանությունը հերքելուց անցնել հարձակման և հայց ներկայացրին լիբանանյան դատարան[3]: Արամ Հայկազը՝ «ամբաստանութեան տակ եղող յօդուածին հեղինակ»ներից մեկը, «Եթէ կարենայի հոտ[4] ըլլալ…»[5] հուշապատումով ներկայացրեց իր դիրքորոշումը:

Հայի՝ բնօրրանում ապրելու բնածին իրավունքը պաշտպանելու համար Շապին Գարահիսարի Բերդը բարձրացած, շաբաթներ շարունակ թուրքական կանոնավոր զորքին ու խուժանին դիմադրելուց հետո անձնատուր եղած մարդկանց «ճամբայ հանեցին մօտակայ գիւղը՝ մեր ծանօթներուն եւ ազգականներուն մօտ տանելու անունով, բայց ճամբան սուիններով ստիպեցին ուղղութիւնը փոխել ու անցնիլ զօրանոցին առջեւէն, ուր մեզ վերստին քննութենէ անցուցին ու ինձմէ երկու տարու մեծ եղբայրս վար դնելով՝ գնդակահարեցին: Իրենցմէ տասը քայլ հազիւ հեռացած էինք, երբ պատահեցաւ այդ արարքը, ու մայրս ցաւէն ու կսկիծէն քիչ մնաց ուշաթափուէր: Վեց ժամ անընդհատ քալեցինք լեռներու եւ բլուրներու վրայէն, մինչեւ որ արեւը մար մտաւ: Յետմնաց կին մը, որ կը բողոքէր, թէ ա՛լ չի կրնար քալել, «Աղէ՛կ, հոս նստէ՛ ու հանգչէ՛» ըսելով՝ թոյլատրեցին, որ նստի: Ու մինչ



*Արամ Հայկազ*

ան կ՚օրհնէր արտօնողները, ժամտարմ մը կոնակէն գնդակահարեց զայն: Մահը եղաւ վայրկենական ու առանց տառապանքի: Կ՚ընդունիմ, թէ գթութեան արարք էր այս…

Գիշերեցինք ձորի մը մէջ: Կէս գիշերին քանի մը զէնք արձակեցին ու եկան ըսել մեզի, թէ «Կողոպտիչներ էին եկած ու զանոնք վռնտեցինք: Ձեր երախտագիտութիւնը ցոյց տալու համար յարմար չէ՞, որ հանգանակութիւն մը ընելով՝ մեզի տաք….»:

Տուինք, մինչեւ որ բաւականացան:

Յաջորդ օրը՝ կէսօրէ առաջ, Աղուանիս հասանք: Մեզ գիւղ չմտցուցին, լեցուցին ոչխարներու մակաղատեղիի մը մէջ ու մէկիկ-մէկիկ դուրս բերելով՝ վրանիս խուզարկեցին ու առին, ինչ որ ունէինք թանկարժէք: Գիշերը ճրագով մտան մեր մէջ ու 12 աղջիկ զատելով՝ տարին հետերնին: Առաւօտուն զանոնք ետ բերին մահու չափ տժգունած ու լացէն ուռած աչքերով: Չգիտեմ՝ անոնց վիճա՞կն էր աւելի խղճալի, թէ՞ իրենց մայրերունը: Ժամէ մը հասանք Չոպանլը գիւղը, որուն կեդրոնէն գետակ մը կ՚անցնէր, ու գետակին վրայ կամուրջ մը կար: Գիշերը տարուած ու ետ բերուած աղջիկներէն մէկը ինքզինք կամուրջէն նետեց վար, բայց որովհետեւ ջուրը խորունկ չէր, չխեղդուեցաւ: Բայց իր գանկը ջախջախուեցաւ քարի մը վրայ, ու իր արիւնը կարմիր լայն երակի մը պէս խառնուեցաւ ջուրին: Թուրք կիները անոր մարմինը դուրս բերին ջուրէն ու մերկացնելով՝ հագուստները առին: Դիակը ձգեցին ափի մամռապատ քարերուն վրայ: Վերէն՝ կէսօրուան պայծառ արեգակին տակ, մարմարէ արձանի մը նման էր այդ մարմինը: Լաւ մը նայեցայ անոր, որովհետեւ 15 տարեկան էի ու մինչեւ այդ թուականը 15-16 տարեկան աղջկան մերկ մարմին չէի տեսած:

Կամուրջին միւս կողմը մեզի խառնեցին Կիրասոնէն բերուած գաղթականներու կարաւան մը: Անոնց մէջ ծերունիներ ու երիտասարդ այր մարդեր ալ կային: Ոստիկաններէն մէկը իր ձիուն վրայէն գնդակահարեց կիրասոնցի երիտասարդներէն մէկը, ու ան ինկաւ կոնակի վրայ՝ ցորենի արտի մը մէջ: Երբ իր քովէն կ'անցնէի, տեսայ, որ իր վիզէն հոսող արիւնը արտի ամէն բաբախումի հետ գնդակի ծակէն դուրս պոռթկում մը կ'ունենար:

Իրիկուան դէմ Թիւմէքէր հասանք: Գիւղէն դուրս՝ խոզանի մը մէջ թոյլատրեցին, որ փռուինք հողին վրայ ու հանգչինք: Նոյնիսկ թոյլատրեցին, որ գիւղին մէջ յորդող զով ջուրի աղբիւրն երթանք ու լուացուինք, խմենք, վրանիս հոգի գայ: Տեղացի բազմաթիւ կիներ, աղբիւրին շուրջ հաւաքուած, մեզ կը դիտէին: Անոնցմէ մէկը հաւնեցաւ ինծի ու ըսաւ, որ եթէ մուսուլման ըլլամ, կ'որդեգրէ զիս: Ուրախացայ ու մօրս մօտ վազելով՝ տուի բարի լուրը: Ան արդէն պատուիրած էր, որ աչքս լայն բանամ ու պատեհութիւն մը ներկայանալու պահուն՝ իսլամանամ, ազատիմ:

– Վարդան զօրավարն ալ ժամանակաւորապէս ուրացաւ իր կրօնքը, բայց Աստուած մեղք չհամարեց այդ ուրացումը,– ըսաւ ան ինծի օր մը առաջ:– Կը տանին մեզ ոչնչացնելու, արտասահման եղբայրներ ունիս, օր մը կը գտնես զանոնք:

Բաժանումը եղաւ սրտակեղէք ու դժուար. զիս գրկած՝ կ'օրհնէր ու կու լար…

Երկու տարի ետք ստուգեցի, որ զայն ու մեր ընտանիքի միւս 11 անդամները թափեր էին Ակնայ առջեւէն հոսող Եփրատ գետը:

Ես իսլամի անունով աւելի քան երեք տարի ապրեցայ Թուրքիոյ մէջ՝ թուրքերու եւ քիւրտերու մօտ ու հետ:

Նպատակս այդ տարիներուն անցուցած կեանքիս ու օրերուս մասին խօսիլը չէ, կը բաւէ ըսել, թէ շատ լաւ ու վատ մարդոց հանդիպեցայ, ու երբ Առաջին ընդհանուր պատերազմի զինադադարը կնքուեցաւ ու շնչելու հնարաւորութիւն ստեղծուեցաւ, փախչելով հասայ Պոլիս, որ Դաշնակից բանակի գրաւման տակ կը գտնուէր այդ օրերուն: Հոն՝ Պոլսոյ մէջ էր, որ հանդիպեցայ ինծի նման հազարներու: Ամէն անգամ, որ քով-քովի կու գայինք, մեր խօսակցութիւնը անպայմանօրէն կը դառնար տարագրութեան ընթացքին մեր ապրած օրերուն եւ դժուարութեանց վրայ: Այս ձեւով շատ բան եմ լսած, բայց կ'ուզեմ անոնցմէ միայն մէկ հատը պատմել հոս… Ու ահա՛ կը զգուշացնեմ անոնց, որ թոյլ սիրտ ունին, թող ձգեն այս սրահը ու ելլեն դուրս…

Պատմողը 65 տարու կին մըն է. «Անապատ հասանք ինը հոգիով: Երկու շաբաթը չլրացած՝ մնացինք միայն ես եւ ութ տարու թոռնուհիս: Բան մը չունէինք: Հրաշքով ձեռք անցուցած փսիաթի կտոր մը ցերեկը շուք կ'ընէր մեր վրայ: Հալած, մաշած կմախքներու էինք վերածուած: Գիտէի, թէ մահը մօտ էր երկուքիս համար ալ, բայց չէի գիտեր, թէ ի՞մ, թէ՞ ոչ թոռնուհիիս առաջ մեռնիլը խնդրելու էի Աստուծմէ… Ան վերջին սրտահատորս էր, ու կը դողայի վրան, ու բնական էր՝ չէի ուզեր կորսնցնել, բայց առաջ ես մեռնելու պարագային ո՞վ տէր պիտի ըլլար անոր…

Այն օրերուն վրանաքաղաքին մէջ լուր էր տարածուած, թէ կարգ մը մարդեր իրենց մեռելները եփելով՝ կ'ուտեն: Կը սարսափէի՝ մտածելով, որ մենք ալ պէտք է այդպէս ընենք, եթէ կ'ուզենք դեռ ապրիլ… Բայց թոռնուհիիս բան չէի ըսած, իսկ ան, շուքին տակ պառկած, գիտէի թէ իր վերջին օրերը կ'ապրէր: Իրիկուն մը գլխով նշան ըրաւ, որ իրեն մօտենամ. ծռեցայ

վրան ու գուրգուրանքով իր գանկը առի ափերուս մէջ.

– Մեծ մայրիկ,– ըսաւ մեծ ճիգով մը,– երբ ես մեռնիմ, մարմինս մէկուն մի՛ տար, դուն միանգամ կեր…»:

Պարո՛ն դատաւոր ու յարգելի՛ հանդիսականներ, ես վերջացուցի: Հիմա կը յուսամ, թէ կը հասկնաք, թէ ինչո՞ւ չենք կրնար մոռնալ 1915 թուականն ու թուրքը…»:

Գիտեմ՝ ցեղասպանությունն ուրացողներին այս ամենը ոչինչ չի սովորեցնելու. նրանք ստում են և շարունակելու են ստել, աղավաղել ու խաղաթյուրել ամեն ինչ՝ հիշողություն, պատմություն, ներկա ու անցյալ…

Բայց պարտքս եմ համարում կրկին ու կրկին դիմել Արամ Հայկազի վկայությանը…

## Հղումներ

[1] Լույս է տեսել «Հայրենիք» օրաթերթի (Բոստոն) 1972 թ. հունիսի 9-ի համարում. տե՛ս «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի Ե հատորում (Երեւան, 2014)՝ էջ 112-116:

[2] Լույս է տեսել «Ալիք» օրաթերթի (Թեհրան) 1972 թ. հուլիսի 4-5-ի համարներում. տե՛ս «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի Ե հատորում՝ էջ 189-194:

[3] Լիբանանում Թուրքիայի դեսպանատունը 1970 թ. գարնանը դատական գործ է հարուցել «Ազդակ» եւ «Զարթօնք» օրաթերթերի արտոնատերեր Հայկ Պալյանի եւ Բարունակ Թովմասյանի (1910-1991) դեմ՝ այդ թերթերում տպագրված մի քանի հոդվածների պատճառով: Այսպես, «Ազդակ»ի 1968 թ. հոկտեմբերի 14-ի համարում տպագրված է Նշան Պեշիկթաշլյանի (1898-1972) «Թրքական վիրաբուժութիւնը», 1969 թ. ապրիլի 23-ի համարում՝ Արամ Հայկազի «Յաղթանակի տօնը», «Զարթօնք»ի 1969 թ. ապրիլի 24-ի համարում՝ Վերապատվելի Ե. Գ. Ճոնազյանի «Ինչո՞ւ նահատակուեցանք», 1970 թ. մայիսի 17-ի համարում՝ «Ինչո՞ւ կ'ամբաստանուինք» հոդվածները: Դատավարությունն ընթացել է 1970 թ. մայիս-հուլիս ամիսներին: Սփյուռքահայությունը մեկ մարդու պես ոտքի կանգնեց եւ հաղթեց:

«Ազդակ»ի 1970 թ. մայիսի 14-16-ի, 18-23-ի, հունիսի 2-ի եւ 11-ի, հուլիսի 13-ի համարներում հրատարակված են այս դատի մասին հոդվածներ, որոնք « «Ազդակ»ի ութսունեօթ տարիներու ծառայութեան ընդմէջէն» խորագրով ներկայացված են այդ թերթի 2014 թ. ապրիլյան համարներում:

«Զարթօնք»ի 1970 թ. մայիսի 20-ի «Մեր դատը հայ ժողովուրդին դատն է» խմբագրականն ավարտվում է այն պնդումով, որ ցեղասպան երկիրը «իրաւունք չունի բարոյական կեցուածքներու մասին արտայայտուելու, ո՞ւր մնաց՝ այդ հիման վրայ նոյնիսկ դատախազ կանգնելու …»:

«Երիտասարդ հայ» կիսամյա պարբերականի 1970 թ. 14-րդ համարում (հունիսի 27) տպագրված է հայկական երկու թերթերի դատապաշտպան, լիբանանցի ճանաչված փաստաբան Մոհսեն Սլիմի «Հայ մամուլի դատը» հոդվածը:

«Ալիք»ի 1970 թ. հունիսի 1-2-ի համարներում տե՛ս Բաբկեն Փափազյանի (1915-1990) «Երբ գիտակից է ժողովուրդը» խոսուն վերնագրով հոդվածն այս համազգային հաղթանակի մասին: «Անընկճելի է ժողովուրդ մը, երբ գիտակից է»,– սա ոչ միայն հոդվածագրի եզրակացությունն է:

[4] Արամ Հայկազը սովորաբար գրում է՝ հոտ:

[5] Լույս է տեսել «Ազդակ»ի 1970 թ. հունիսի 24-ի համարում. տե՛ս «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի Ե հատորում՝ էջ 194-197: Արամ Հայկազի «Ապրող ծառ մը» գրքում (Երեւան, 2012)՝ էջ 311-314, տե՛ս «Հաշտուի՞մ Աստուծոյ հետ» ողբերգական պատումը:

# Ոգեպաշտը...
## (Արշիլ Կորքիի՝ Ոստանիկ Ադոյեանի ծննդեան 120-ամեակի առիթով)

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Նախորդ տարուայ ընթացքում Արշիլ Գորկու ծննդեան 120-ամեակը չնշուեց ըստ արժանւոյն ո՛չ Սփիւռքում, ո՛չ Հայրենիքում: Ստորեւ ներկայացուող ուշագրաւ յօդուած-հարցազրոյցը փաստում է, որ, միջազգային առումով, իր ազգակիցների մէջ նա ամենամեծ գնահատանքի արժանացած, անձերից մեկն է: Ասուածի մեկ վկայութիւնն էլ այն է, որ նրա կտաւները հայ նկարիչների ստեղծագործութիւնների շարքում ամենաբարձր գնով են վաճառվում: Ներկայացուող հրապարակման մէջ Գորկու քրոջ՝ Սաթենիկի հետ 1979-ին Բոստոնում անցկացուած հարցազրոյցը (անտիպ է մնացել ցարդ) սերտօրէն առնչվում է Եղեռնի հետ եւ միաժամանակ լոյս է սփռում Արշիլ Գորկու կենսագրութեան որոշ մանրամասների վրայ: Իբրեւ այդպիսի, շատ հաւանաբար այն կը հետաքրքրի նաեւ օտար ընթերցողներին եւ, յատկապէս, արուեստաբաններին...

Մեր օրերում, երբ թուրք ցեղասպանների ցեղասպան ժառանգների հանկերգը երգելով, ոչ այլ ոք քան անկախ Հայաստանի ղեկավարները, փորձում են խեղաթյուրել և ժխտել Հայոց ցեղասպանութեան փաստը ահա մեկ մարդու կենսագրութիւն, որը խեղուել է ցեղասպանութեան արյունոտ յաթաղանով: Ընդ որում, իր բնօրրանից զրկուած մարդու մեծ ողբերգութեան պատմութիւնը, որպես ժողովրդի հավաքական պատմութեան մեկ դրուագ, չի ավարտվում ջարդերով, ցեղասպանութիւնն իր կնիքն է դրել նրա ողջ կենսագրութեան վրա:

Ի դէպ Արշիլ Գորկուն մեղադրում էին որ նա իր անունը փոխել է եւ իրեն նեկայացրել է իբրեւ Ռուսի: Նա իր քրոջը՝ Վարդուշին ուղղուած մի նամակի մէջ ասել է որ «Օր մը կուգայ եւ ես իմ հայկականութիւնը կը պոռամ աշխարհին»: Այդ օրը եկաւ իր մահուանից հետո, 1981-ի ապրիլի ճիշդ 24-ին, երբ իր յետայայեաց ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ Նիու Եորքի Ս.Ռ. Գուգընհայմ թանգարանում: Ցուցահանդեսը շարունակուեց մինչեւ Յուլիսի 19-ը: Արշիլ Գորկին իր հայկականութեամբ եւ արուեստի ուժով այդ տարի շատ աւելի նպաստեց Հայկական դատին եւ Ցեղասպանութեան ճանաչմանը քան ամբողջ հայութիւնը՝ Հայաստանում, թէ արտեկրում:

Նկատի ունենալով, որ Գորկու 100-ամեակը մենք չենք նշել համահայկական լայն ընդգրկումով ու արժեւորել նրա բարձրարժէք արուեստը, «Դրօշակի» ապրիլեան համարում ներկայացվող այս հրապարակումը համեստ փորձ է ինչ որ չափով լրացնելու այդ բացը:

*Խմբագրութիւն*

*«Կորքին ԱՄՆ-ի արուեստի պատմութեան մէջ երբեւիցէ եղած գեղանկարիչներեն ամենամեծն է եւ իրայատուկը»:*
**Անտրէ Պրէթոն**

*Հաստատ կրնամ ըսել, որ անոր շատ մը գեղանկարները աւելի մեծ են քան՝ Փիքասոյի, Մաթիսի եւ կամ էլ Կրեքոյի գործերը:*
**Ուիլյըմ Տը Գունինկ**

Ամանօրինակ բազմաթիւ գնահատանքներու արժանացած Արշիլ Կորքին դեռեւս իր արժանի պատուանդանին չէ բարձրացուած, ըլլայ Սփիւռքի թէ Հայաստանի տարածքին: Նոյնիսկ ամերիկահայ մտաւորականներէն շատեր ո՛չ ծանօթ են Կորքիի ստեղծագործական կեանքին, եւ ո՛չ ալ կը գնահատեն զայն ըստ արժանւոյն: Անցնող տարին եւս, յոբելեաններու տարի էր, տօնուեցան Յովհաննէս Շիրազի, Պարոյր Սեւակի, Դանիէլ Վարուժանի, Սերգէյ Փարաճանովի, Երուանդ Քոչարի եւ ուրիշներու ծննդեան յոբելեանները: Սակայն ըլլայ Սփիւռքի թէ Հայաստանի մէջ, Արշիլ Կորքիի ծննդեան 120-ամեակի մասին գրեթէ պաշտօնական խօսք չեղաւ:

Հակառակ անոր, որ Ատոմ Էկոյեանը մեծ եւ արժանի տեղ տրամադրած էր անոր իր «Արարատ» ժապաւէնին մէջ եւ հակառակ անոր որ .... Ալեքսանդր Պէրեճիքլեանը, Նուրիցա Մաթեւոսեանը, Աննա

Պետրոսեանը, Մովսէս Ս. Հերկելեանը եւ ուրիշներ, հանգամանօրէն ուսումնասիրեցին Կորքիի ստեղծագործական կեանքն ու, առանձին գիրքեր ու բազմաթիւ յօդուածներ գրեցին անոր մասին, Կորքին տակաւին ըլլայ Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, կը մնայ լուսանցքի վրայ: Շատ լաւ է, որ Այվազովսկին ամէնաճանաչուած ու մեծարուած հայ գեղանկարիչը կը մնայ հայ իրականութեան մէջ, բայց անոր անունի տարածման ու միջազգայնօրէն գնահատուած ըլլալուն, շատ աւելի նպաստած են ռուսերն ու նոյնիսկ թուրքերը քան՝ մենք հայերս: Իսկ Արշիլ Կորքի Ոստանիկ Ադոյեանը....:

Նոյնիսկ անոր ծննդեան 100-ամեակը չկրցանք նշել ըստ արժանւոյն, ու զինք ճանչցնել մեր արուեստասէր հասարակութեան:

Ամենայն պատասխանատուութեամբ կրնամ յայտարարել, որ հայ հանճարներէն իւրաքանչիւրը ինք իր ասպարէզին մէջ նկատի առած, Կորքին ամէնէն բարձր գնահատուածն ու մեծարուածն է արուեստի պատմութեան մէջ: Ո՛չ Արամ Խաչատուրեանը, ո՛չ Ուիլյըմ Սարոյեանը, ո՛չ Շարլ Ազնաւուրը եւ ո՛չ ալ Այվազովսկին, եւ կամ ուրիշ մը Արշիլ Կորքիի չափ միջազգայնօրէն գնահատուած կամ մեծարուած են...: Գուցէ չկայ, քիչ թէ շատ արուեստով հետաքրքրուող հայ մը, որ լսած ու հպարտացած չըլլայ Այվազովսկիով: Սակայն, Այվազովսկիի գործերը միջազգային աճուրդի ընկերութիւններու կողմէ, կը գնահատուին քանի մը միլիոններով միայն, իսկ Կորքիինը՝ տասնեակ միլիոններով: Անցեալ տարի Կորքիի մէկ ստեղծագործութիւնը «Ածխացած սիրեցեալ» (Charred Beloved) Նիւ Եորքի մէջ Քրիսթիզ աճուրդի տան կողմէ վաճառուեցաւ, քսաներեք միլիոն չորս հարիւր տասը հազար ամերիկեան տոլարի, ($23,410,000):

Ինչո՞ւ այս գաղջ վերաբերմունքը Կորքիի հանդէպ...

Կ'ենթադրենք, որ խնդիրը ոչ թէ չկամութեան, այլ չիմացութեան եւ որոշ չափով նաեւ, անտարբերութեան հարց է՝ յատկապէս մեր պետութեան, մշակութային միութիւններու եւ հաստատութիւններու կողմէ: Երբ դերասանուհի, բեմադրիչ, թատերագիր ու պատմավիպագիր Անա Պետրոսեանը ձեռք բերաւ Կորքիի մասին ընդարձակ տեղեկութիւններ, շնորհիւ անոր գրած յօդուածներուն ու կազմակերպած դասախօսութիւններուն 1980-ականներու սկիզբին, հայրենի մտաւորականութիւնը որոշ չափով ծանօթացաւ Կորքիի ստեղծագործական կեանքին: Սակայն անկախութեան շրջանին տաղանդաշատ հայը գրեթէ մոռցուեցաւ...

**Պոսթըն, Փրովիտենս, 1979, Ամառ**

Այդ տարին ԱՄՆ մեկնած էի յատուկ ուսումնասիրելու համար ամերիկեան ժամանակակից եւ յատկապէս ամերիկահայ կերպարուեստը... իբրեւ աւարտաճառ: Գեղանկարիչներէն Արշիլ Կորքին առաջինն էր որ զիս կը հետաքրքրէր, իսկ քանդակագործներէն՝ Ռուբէն Նաքեանը, որ իր հերթին տակաւին գնահատուած չէ մեր մէջ՝ ըստ արժանւոյն: Երբ գեղանկարիչ Ռիչըրտ Թաշճեանին հանդիպեցայ ու հարց տուի իրեն Կորքիի երկրորդ քրոջ՝ Սաթենիկի մասին, ըսաւ.

- Լաւ կը ճանչնամ զինք, հոս կը բնակի... կը տանիմ քեզ իր քովը, սակայն նկատի առ որ Սաթենիկին տղան փճացուցած ու աղբ թափած է Կորքիի ձեռագիրները, նամակներն ու գծանկարները, իբրեւ անպէտք առարկաներ... հետագային զղջաց թէեւ, բայց ինչ օգուտ..., լաւ կ'ըլլայ որ այս ըսածներս չյիշեցնես Սաթենիկին: Բարեբախտաբար կարգ մը նկարներ փրկուած են, եւ Սաթենիկի աղջիկը վարձու տուած է զանոնք Պոսթընի Ժամանակակից Արուեստի Թանգարանին:



*Արշիլ Կորքի*

Այս եւ այլ տեղեկութիւններ ստանալէ ետք, Սաթենիկի ու իր ընտանիքի մասին՝ քանի մը օր ետք քովը տարաւ զիս: Ան ջերմութեամբ ընդունեց մեզ, որովհետեւ Ռիչըրտը սկիզբէն բացատրած էր, թէ ես ո՞վ եմ, ուրկէ՞ կու գամ, եւ ինչո՞ւ...

Ամենայն դէպս, պատմութիւնը չերկարեմ եւ անցնինք բուն նիւթին: Այդ օր ծանօթացանք եւ կարեւոր նոր տեղեկութիւններ հաղորդեց Սաթենիկը: Նա տեղեկացուց նաեւ, որ երբ Կորքին իր քով կը բնակէր, Պոսթընի Փրովիտենս թաղամասի Կորքիին արուեստանոցը հրդեհուած է ու բաւականին նկարներ փճացած են...

Յաջորդ անգամ, Սաթենիկի մօտ երթալէ առաջ Ռիչըրտը տարաւ եւ ցոյց տուաւ ինծի այն բնակարանը, ուր կը գտնուէր Կորքիի հրդեհուած արուեստանոցը, որ վերանորոգուած էր, ու ես առիթ ունեցայ լուսանկարելու այն:

Իմ բծախնդիր ընթերցող՝ իսկ այժմ վերն ակնարկածս հարցազրոյցի մասին:

Նկատի առ որ այս ընդարձակածաւալ հարցազրոյցը (որ ձայնագրուած կը պահուի արխիւներուս մէջ), ոչ միայն հետաքրքրական է ու շահեկան, այլեւ՝ իր պարունակած նորութիւններով տեղեկատուական արժէք կը ներկայացնէ, նաև ամերիկեան արուեստաբաններու եւ կենսագիրներու համար: Քառասուն տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով, ստորեւ կու տամ անոր մէկ բաժինը, խմբագրուած՝ լեզուական որոշ յստակացումներով, սակայն առանց իմաստային ոեւէ փոփոխութեան:

Մ Ծ.- Յարգելի Տիկ. Աւետիսեան, առաջին հերթին ցանկալի է, որ պատմես մանուկ Ոստանիկի մասին:

Ս Ա.- Գիտէք մեր գիւղը՝ Խորգոմը, ուր ծնած ենք մենք, Վանայ ծովու ափին էր: Փոքր տարիքէն մենք ծովափ կ'երթայինք լողալու: Կը յիշեմ, փոքրիկ Ոստանիկը աւազին վրայ ձուկի, պտուղներու, ծաղիկներու եւ երբեմն ալ մեր նկարները կը պատկերէր: Փոքր տարիքին նախ մամայիս (Շուշանիկի) ծնունդավայրը (խօսքը «Ոստան» գիւղաքաղաքի մասին է) եկանք եւ բնակեցանք: Քանի մը տարի ետք փոխադրուեցանք Այգեստան, ուր թրքութիւն գրեթէ չկար: Քաղաքը թուրքեր քիչ կային, որոնք խառն կ'ապրէին հայերու հետ: Մենք երեքս ալ (Ոստանիկը, Վարդուշը եւ Սաթենիկը - Մ. Ծ.) Այգեստանին մէջ ամերիկեան դպրոց կ'երթայինք: Մինչ այդ, հայրս արդէն հոս (ԱՄՆ) էր: Այնպէս որ, մենք գրեթէ հայրիկիս չենք յիշեր: Մէկ բան կրնամ նշել: Երբ հայրիկս Ամերիկա պիտի գար, մեզ՝ երեխաներուս ձիուն վրայ դրաւ, ու տարաւ մեր մեծ ու երկար արտին քով, ուր գեղեցիկ աղբիւր մը կար: Վանայ ծովը ճիշդ քովն էր: Լեռներէն ջուրեր կու գային ու ծովուն ջուրին հետ կը խառնուէին: Հոն շատ սիրուն կանաչ տեղ մըն էր: Ասիկա եթէ Ադոն (Կորքիի հօրեղբօր տղան, որ Հայաստան կը բնակէր) լսէ, գիտէ թէ ինչի մասին կը խօսիմ: Ես մանրամասն պատմեմ, եւ եթէ օր մը լսէ, թող գիտնայ, որ ես Սաթենիկն եմ: Մայրիկս շատ լաւ կերակուր պատրաստած էր: Գացինք նստանք այդ աղբիւրին քով ու կերանք: Վերջը հայրիկս մեզ կը համբուրէր ու կու լար: Ապա բաժնուեցանք ու տուն գացինք: Հայրիկս անկէ վերջ գնաց Պոլիս, Պոլիսէն Եւրոպա եւ վերջը կու գայ ու կը հաստատուի հոս՝ Փրովիտէնս:

Մ Ծ.- Հոս կ'ուզեմ ընդմիջել ձեզ: Ձեր եղբայրը իր նամակներուն մէջ խօսած է հայկական արօրի մասին, ծիրանի բուրմունքի եւ գոյներու մասին:

Ս Ա.- Այո, որովհետեւ մենք շատ-շատ պարտէզներ ունէինք, չափէն աւելի: Այդ գիւղին ամէնէն հարուստը որ կար, մենք էինք: Մենք 500 ոչխար ունէինք, որոնք ամառը լեռները կ'երթային արածելու, իսկ ձմեռը կու գային գիւղ: Մենք ծառ մը ունէինք, որուն Խաչի Ծառ կ'ըսէին: Կիներէն, ում քով «դող» (հիւանդութեան տեսակ մը) կը սկսէր, կ'երթային հոն եւ իրենց հագուստէն կտոր մը կը կտրէին ու այդ ծառին կը կապէին, որպէսզի (առողջանան) եւ մուրազնուն հասնին: Եղբայրս ոչխարներուն հետ ճերմակ ու մոխրագոյն (իրար խառնուած գոյներով) շուն մը ունէր, անունը՝ Ջանգու: Մէկը սպաննեց այդ շունը, չգիտցանք թէ ով էր: Եղբայրս շատ-շատ տխրեցաւ, չափէն աւելի: Եղբայրս ունէր ձի մը, որուն ճակատին աստղ մը կար: Մենք շատ ձիեր ունէինք նաեւ, սակայն երբ քաղաք փոխադրուեցանք ձիերու համար տեղ չկար: Մայրս երիտասարդ էր, ան խնամեց մեզ ու դպրոց ղրկեց: Եղբայրս շատ ընդունակ էր դպրոցին մէջ: Շատ փոքր տարիքին քարտէսներ կը գծեր: Ստեփան Ժամկոչեանը, որ մայրիկիս շատ մօտիկ ազգականն էր, չէր թողուր որ (Ոստանիկը) գծէ: Տասնհինգին գաղթեցինք:

Մ Ծ.-Իսկ Երեւանէն ի՞նչ կը յիշէք:

Ս Ա.-Երեւան, մենք կը բնակէինք Աստաֆեան փողոց: Հիմա Աբովեան կ'ըսեն: Մենք (ընտանիքս) Քաթարովսկիի տունը կը բնակէինք, ուր ես հոն չեմ եղած, ես 1916-ին Ամերիկա եկայ:

Մ Ծ.-Մայրդ հոն մնաց եւ դուք 3 երեխաներով հոս եկաք:

ՍԱ.-Ոչ, ես ալ չէի գար: Մեծ քրոջս (Ագապիի) ամուսինը կամաւոր եղաւ: Ան կինն ու տղան հետը պիտի տանէր: Քոյրս լացաւ եւ պնդեց թէ եթէ երեխաներէն մէկը հետը չերթայ, ինքն ալ չ'երթար: Ես մեծն էի, զիս ղրկեցին: Մայրս, Ոստանիկը եւ Վարդուշը հոն մնացին: Այն տարին հոն պատերազմ եղեր է, որմէ ես տեղեկութիւն չունէի: Մայրս հոն կը մահանայ, 1919-ին Մարտ մէկին: Ես հոս կ'ամուսնանամ նոյն օրը: Ճիշդ այդպէս նամակ եկաւ ինծի:

Մ Ծ.-Ո՞ր մէկ թուին:

Ս Ա.-1919-ին Մարտ մէկին:

Մ Ծ.-Իսկ դուք կը յիշէ՞ք թէ ինչպէս Վանէն Երեւան գացիք:

Ս Ա.-Փախչելով գացինք բոլոր ժողովուրդին հետ: Ես, մեծ քոյրս՝ Ագապին (հիմա մահացեր է) եւ իր 5 տարեկան երեխան, մայրս, Վարդուշը եւ Ոստանիկը:

Մ Ծ.-Ոստանիկը ե՞րբ եկաւ Ամերիկա:

Ս Ա.-Անիկա 1920-ին եկաւ:

Մ Ծ.-Առանձի՞ն:

Ս Ա.-Ոչ, Վարդուշին հետ, որովհետեւ մայրս արդէն իսկ 1919-ին մահացեր էր:

Մ Ծ.-Ինչ-որ խո՞ւմբի հետ եկան:

Ս Ա.-Ոչ, վանեցի մարդու մը՝ Տիգրան անունով մէկու մը, մականունը չեմ կրնար յիշել Տիգրանը իր կնոջ հետ եկեր է Պոլիս եւ ապա հոս:

Մ Ծ.-Եկան եւ ձեզ հո՞ս գտան:

Ս Ա.-Այո՛, Ուռթրրթաուն: Ես ամուսնացած էի, բայց մեծ քրոջս քով կ'ապրէի, որովհետեւ հիւանդ էի եւ անկողին կը մնայի: Այդ շրջանին էր որ իմ եղբայրը եւ Վարդուշը եկան:

(Հոս փակագիծ մը բանալով աւելցնենք որ, երբ տակաւին ձայնագրիչ մեքենան չէր բաներ, տիկ. Սաթենիկ ինչ որ բաներ սկսաւ պատմել տարագրութենէն: Սակայն ես զգացի, որ յուզումն էր պատճառը որ քիչ առաջ կարճի կապեց իրենց գաղթի պատմութիւնը: Որովհետեւ տրամադրութիւնը արդէն բարելաւած

էր, ուզեցի զինք խօսեցնելու փորձ մը եւս ընել եւ հարցուցի)։

Մ Ծ.-Քիչ առաջ Երեւանի Ս. Սարգիս Եկեղեցիին մասին կը խօսէիք։

Ս Ա.-Մենք դպրոց կ'երթայինք...։

Մ Ծ.-Ոստանի՞կն ալ։

Ս Ա.-Այո՛, մենք երեքս ալ դպրոց կ'երթայինք։ Իսկ երբ մենք Իգդիրէն Երեւան հասանք, Ս. Սարգիս Եկեղեցիին մէջը ապրեցանք այլ գաղթականներու հետ։ ...Վերջը մայրիկս հոս կեցէք ըսաւ, որ երթամ կերակուր բերեմ։ Ինք եւ եղբայրս շուկայ գացին...

(Ան արցունքները սրբելէն ետք շարունակեց.)

Ս Ա.-Հոնտեղէն կերակուր բերաւ, նստեցանք, կերանք... Բայց... Երբ կու գայինք... ճամբան մեր վրայ կարկուտ եկաւ, բայց... Միւս խումբէն գնդակներ... (ձայներ կը լսուէին) Թուրքերու թէ Ռուսերու... չեմ գիտեր։ Ռուս զինուորներ կային մեր հետ։ Անկէ վերջ ճամբան կորսնցուցինք։ ...Մենք կը քալենք... կը քալենք... Արարատեան դաշտը, ոչ մէկը չենք տեսներ։ Տեղ մը կրակ վառեր էին։ Մայրիկս քիւրտերէնով կանչեց. «Ի՞նչ էք, ո՞վ էք, մեզի լուր տուէք, որովհետեւ 3 հատ երեխաներ եւ թոռնիկ մը ունիմ հետս։ ...Խնդրեմ լուր տուէք»։ Բան մը չըսին։ Յետոյ մայրիկս հայերէնով կանչեց։ Որովհետեւ մեր հագուստները ջուր էին... Հիմա կը խորհիմ արդեօք բոպի՞կ կը քալէինք։ Կօշիկ ունէի՞նք մեր ոտքին... որովհետեւ մենք ամէն ինչ թաղեցինք մեր տան բակին մէջը... այնպէս որ բան մը չառինք մեր հետ, որովհետեւ փոքր էինք եւ չէինք կրնար շալկել արդէն։ Այդպէս կանչելէ վերջը լսեցինք. «Մայրիկ, մենք հայ ենք, եկէք»։ Ալաշկերտցի կամաւորներ էին։ Մէկ հատն ալ խարբերդցի էր, Գազանճեան Յակոբ։ Կամաւորները մեզ շատ-շատ լաւ նայեցան։ 7 օր բան մը չէինք կերած... Ոչխարը դրեր էին կրակին վրայ կը կարմրցնէին...։ Ճամբան վայրի կարմիր պտուղ մը կար, մայրս ուր որ գտնէր մեզի կը կերցնէր։ Ինքը չէր ուտեր, որովհետեւ 7 օր անօթի էինք։ Վերջը... Այդ տղաքը իրենց «եափունչիները» հանեցին եւ մեր վրայ քաշեցին։ Մեր հագուստները կրակի վրայ չորացուցին... Այդ գիշերը հոն կեցանք....։ Հանգիստ, առանց վախի։ Առաւօտ եղաւ...։ Մեր դիմաց Արարատեան դաշտն էր։

(Հոս դարձեալ պահ մը լռեց եւ ապա շարունակեց.)

Առաւօտ ելանք գացինք բաւական տեղ՝ քալեցինք։ Ռուսական կարմիր խաչը վրանի պէս բան մը շիներ էր։ Գաղթականներ կերակուր կ'ուտէին։ Իգդիրէն շատ հեռու չէր։ Գիշեր մը հոն կեցանք, անկէ վերջ գացինք Իգդիր։ Մայրիկս բաւական ոսկի վերցուցեր էր եւ մեր վրայ բաժներ էր, որ եթէ մէկու վրայէն կորսուի, առանց դրամի չմնանք, բայց մեծ մասը գետնին տակ պահեր էր։ Ինք կորսնցուցեր էր, ինկեր էր, բայց մենք ունէինք։ ... Հոն ծանօթներու հանդիպեցանք, որոնք Այգեստանէն էին։ Մայրիկէս դրամ խնդրեցին, որովհետեւ չէին գիտեր որ այսքան երկար ճամբայ պիտի գան։ Անոնցմէ մէկը՝ Ստեփան Ժամկոչեան, որ մայրիկիս ազգականն էր, բողոքական դպրոցի տեսուչ էր։ «Քեռակին» ըսաւ. «Դուն դրամ ունի՞ս»։ Մայրիկս ըսաւ. «Ունինք, չունենանք էլ միատեղ կ'ապրինք»։ Հաճեաններ կային, որ շատ հարուստ էին։ Անի-



կա ամուսին չունէր, տղան քիւրտերը սպաննեցին, չէ թուրքերը։ Եկաւ ըսաւ Շուշան (Սաթենիկի մօր անունը) ի՞նչ ընեմ, դրամս հոն թաղեցի, չէի գիտեր, որ այսքան հեռու տեղ կու գայի։ Մեր դրամով ուտելիք բան առինք։ Մայրս ըսաւ. «Ձերմակ հաց չենք կրնար ուտել», որովհետեւ երկար ատեն հաց չէինք կերած եւ մեր արիւնը կը չորցնէ։

Գացինք եւ շաբաթի մը չափ տուն վարձեցինք Էջմիածնի մէջ։ Ադոն եւ եղբայրը հոն՝ Էջմիածնի մէջ տեսանք։ Որբանոց չէր, աղուոր տեղ մըն էր, երեխաները հոն կը բերէին։ Էջմիածնի բակին մէջ Ճեմարանն էր։

Մ Ծ.-Ոստանի՞կն ալ հոն գնաց։

Ս Ա.-Այո՛, բոլորս միատեղ էինք, բնաւ իրարմէ չէինք բաժնուէր։ Մեր ազգականներէն շատեր հոն մահացան... Ադոն եւ իր եղբայրը, անունն Ազատ էր, ուզեցինք մեր հետ Երեւան տանիլ, բայց անոնց մայրն ու մօրաքոյրը չկրցանք գտնել։ Մայրս ըսաւ. «Դուն եւ Ագապին երեխաներուն հսկեցէք», հիւանդանոցի պէս էր, «որպէսզի Ադոն եւ եղբայրը չհիւանդանան կամ բան մը ըլլան»։ Վերջապէս առաւօտը մենք Երեւան պիտի երթայինք... չկային անոնք եւ մենք շատ գէշ զգացինք... Լա՞լ, թէ՞ չլալ...։ Երեւան եկանք։ Քոյրս՝ Ագապին ալ եկաւ ու հոն հիւանդացաւ։ Մայրիկս գնաց ամբողջ... «երամա» մը, քացախ բերաւ... քոյրս բոլորովին (դատողութիւնը) կորսնցուց... 2 օր յետոյ ազատեցաւ այդ հիւանդութենէն։

Մ Ծ.-Իսկ հոս գալէն յետոյ, ե՞րբ...

Ս Ա.-Ես հայրիկիս քով... Եղբայր մը ունէի որ հայրիկիս միւս կնոջմէն էր...

Մ Ծ.-Իսկ Ոստանիկը հոս կը տեսնէ՞ր իր հօրը։

Ս Ա.-Այո՛։ Ոստանիկը եւ քոյրս՝ Վարդուշը, անոր հետ ապրեցան 8-9 ամիս։ Որովհետեւ... Ոստանիկը շատ կատակասէր էր։ Հայրիկս (հոս) ամուսնացեր էր։ Հիմա եղբայրս կը խնդար թէ «Ինչո՞ւ ամուսնացեր ես այս կնոջ հետ»։ Շատ կատակասէր էր, չափէն աւելի, շատ լաւ ձայն ունէր, կ'երգէր եւ շատ սիրուն դիմագիծ ունէր, շատ չափէն աւելի գեղեցիկ էր, նկարը նայիր... Մայրիկիս կը նմանէր...

(Որպէս զի իր յուզումը շրջանցեմ, հարց տուի).

Մ Ծ.- Ճի՞շդ է որ Ոստանիկը մասնակցած է Վանի թաղային կռիւներուն։

Ս Ա.- Այո՛, ճիշդ է: Մաս կը կազմէր «թոուցիկ» խումբին, որոնք հաց, ջուր եւ նամակ երբեմն ալ փամփուշտ կը տանէին կռուողներուն: Երբեմն ինք եւ ընկերները կը կռուէին նաեւ: Անիկա շատ լաւ նշան կը բռնէր...(դիպուկահար էր):

Մ Ծ.- Բայց 11 տարեկան էր այն ատեն... չէ՞...

Ս Ա.- Ո՛չ, Ոստանիկը 1902-ին ծնած է եւ ոչ թէ 1904-ին: Էթել Շուապաքըրն ու միւս կենսագիրները կը սխալին, ես շատ լաւ կը յիշեմ, որ Վանի կռիւներու ատեն եղբայրս տասներեք տարեկան էր...

(Հոս Հրաչ Թաշճեանը, որ հետս էր, զրոյցի պահուն յիշեց գեղանկարիչ Եսովքի անունը:)

Ս Ա.-Եսո՞վքը, երկրէն մօտ էինք: Հեռուէն ազգականութիւն ունէինք: Իմ հօրաքրոջ կեսուրը Եսովքին մեծ մայրն էր: Եսովքը Տէր Յակոբեան էր եւ նկարիչ: Այո, ան ամէնէն մտերիմ ընկերն էր եղբօրս: Ան Նիւ Եորքէն երբ հոս կու գար միասին նկարելու կ'երթային:

Մ Ծ.-Ուրիշ հարց մը. անցեալներս Արշիլ Կորքիի մասին գրուած գիրքի մը հանդիպեցայ, ուր բանաստեղծութիւն մը կար, որուն տակ ինք ստորագրած էր: Եղբայրդ բանաստեղծութիւններ կը գրէ՞ր:

Ս Ա.-Այո՛:

Մ Ծ.-Հայերէ՞նով թէ՞ անգլերէնով:

Ս Ա.-Հայերէնով:

Մ Ծ.-Արդեօք ո՞ւր են անոնք:

Ս Ա.-Չեմ գիտեր:

Մ Ծ.-Հնարաւո՞ր է Վարդուշին քով ըլլան:

Ս Ա.-Ո՛չ: Վարդուշին քով չեն:

Մ Ծ.-Ձեր եղբայրը Սոչի եղա՞ծ է:

Ս Ա.-Սոչին Սեւ ծովուն եզերքը ամարանոց է: Հոն կ'երթային կը լողային... Մենք բոլորս Խորգոմի մէջ կը լողայինք... Սեւ ծովը մեր տեղը չէ... Բայց գրեթէ իր բոլոր նկարները Խորգոմի մասին են: Իր տան մասին, ան գծած է Ծառը, Արօրը (որ փայտէ շինուած է) կամ Գութանը... Եսովքի հետ միատեղ շիներ են երկու հատ. մէկը՝ իրեն, միւսը Եսովքին համար (իբրեւ գերեզմանաքարի մանրակերտ), բայց ատիկա ինչպէս Վարդուշը ունեցեր է չեմ գիտեր, չեմ իմանում:

Մ Ծ.-Ինչքան գիտեմ մէկը Ուաշինկթընի Ժամանակակից Արուեստի Թանգարանին մէջն է:

Ս Ա.-Կորքիինը Վարդուշին քովն էր, եթէ Վարդուշը հոն տուեր է, չեմ գիտեր:

Մ Ծ.-Կ'ըսեն թէ Ոստանիկը յաճախ կը խօսէր ծնդավայրի՝ Վանի մասին:

Ս Ա.-Ամէն ատեն երբ քով-քովի գայինք, կը խօսէինք: Վարդուշը մեծ քրոջս քով կը բնակէր, իսկ գիշերը արուեստի դպրոց կ'երթար:

Մ Ծ.-Իսկ ինք առաւելաբար ի՞նչ բաներ կը յիշէր հայրենիքէն, Հայաստանէն:

Ս Ա.-Լաւ, ես քեզի հիմա ճիշդը ըսեմ: Մենք բոլորս ալ տարուած էինք Հայաստանով՝ հայ թող ըլլայ, Հայաստան թող անկախ ըլլայ. կը բաւէ որ գաղթական չըլլանք: Բոլորս ալ նոյնն ենք: Ուեւէ վանեցիի որ հարցնես, նոյն բանը կ'ըսէ: Հոգ չէ, թէ ի՞նչ կուսակցութեան կը պատկանի: Մեր Վանի մէջ կուսակցականի հարց չկար: Եղբայրութիւն կար: Պատերազմը միացուց, անկէ առաջ ալ միացած էինք: Այդ կուսակցութիւնները, Հնչակեան, Ռամկավար եւ Դաշնակցական հարազատ եղբօր պէս կռուեցան, մինչեւ որ թուրքերը Վանէն դուրս հանեն:

Մ Ծ.-Չեմ գիտեր թէ եթէ ճիշդ հասկցած եմ: Կ'ըսեն թէ Կորքին կ'ուզէր Հայաստան երթալ երբ անկախանայ:

Ս Ա.-Չեմ գիտեր, չեմ լսած ատիկա, սակայն կը սիրէր Հայաստանը եւ կ'ուզէր որ անկախանայ... Մենք բոլորս ալ կը սիրէինք Հայաստանը եւ կ'ուզէինք որ անկախ ըլլայ... Դուն չե՞ս ուզեր:

Մ Ծ.-Անշուշտ...

Մ Ծ.-Ո՞վ չ'ուզեր որ իր երկիրը անկախ ըլլայ... Հայութիւնը այսչափ տարի կը չարչարուի եւ չկրցաւ անկախ ըլլալ: Ատիկա ոչ դաշնակցականի խնդիր է եւ ոչ ալ կոմունիստի: Մենք կը սիրենք մեր Հայաստանը: Ով որ Հայաստան կ'երթայ եւ կը պաշտպանէ, (կը նշանակէ թէ) իր հոգիին չափ կը սիրէ Հայաստանը եւ չ'ուզեր որ կործանուի: Հասկցա՞ք ինչ ըսել կ'ուզեմ: Իսկ եթէ դուք կը խորհիք թէ Կորքին Հայաստան կ'ուզէր երթալ, որովհետեւ կոմունիստ էր, ես այդ չգիտեմ, ես լուր չունիմ...:

Մ Ծ.-Ի՞նչ գիտէք Կորքիի վերջին օրերու մասին:

Ս Ա.-Անոր վերջին օրերը բաւական երկար տեւեցին: Կորքին եկաւ եւ ութ օր քովս մնաց:

Մ Ծ.-Կարծեմ նախ արկած մը անցուցած էր...:

Ս Ա.-Այո, եթէ արկած չունենար, այդպէս չէր ըլլար:

Մ Ծ.-Արկածին ատեն ի՞նչ վնասուածք ունեցաւ:

Ս Ա.-Անոր վիզը կոտրուեցաւ եւ ձեռքը...

Մ Ծ.-Ուրիշ հիւանդութիւն ունէ՞ր:

Ս Ա.-Այո, քաղցկեղէ կը տառապէր եւ անձնական հարցեր... Եղբայրս գործողութիւն եղաւ, ինծի չըսին: Աղջկաս՝ Վարսիկի հարսանիքին հրաւէր ղրկեցինք անոր եւ չպատասխանեց... Ինչպէս կ'ըլլայ որ չի պատասխաներ: Վարսիկի համար կը խենթանար...

(Հոս եւս սկսաւ յուզուիլ... Թեւ ես ալ յուզուած էի, սակայն շեղելու համար իր միտքը, ըսի.)

Մ Ծ.-Ուրիշ հարցում մը: Ամերիկացի քննադատներէն Ժիլերն Լէյվի իր ամենամօտիկ ընկերներէն եղած է... եւ...:

Ս Ա.-Ո՛չ: Անոր ամենամօտիկ ընկերը եղած չէ, այլ ամէնէն շահագործողը:

Մ Ծ.-Իսկ Ժիլերն Լէյվին ինչպէ՞ս այդքան նկարներ ունեցաւ Կորքիէն:

Ս Ա.- Պատմութիւնը այսպէս է: Վերջին ատեն ամէն ամիս հարիւր տոլար կու տար եւ պատկեր կ'առներ

անկէ: Այսպիսով շահագործեց եւ այս նկարները կամաց-կամաց մէկ կողմ դրաւ:

Մ Ծ.-Իսկ երբ որ արկած ունեցաւ, Ժիլեընն Լէյվիին հեռն էր:

Ս Ա.-Այո, անոր ինքնաշարժին մէջն էր: Այդ նոյն ինքնաշարժին ետեւը նստած էին նաեւ Լէյվիի կինն ու շունը, որոնք առողջ մնացին, իսկ եղբայրս ծանր վիրաւորուեցաւ:

Մ Ծ.-Ոմանք կը կարծեն թէ արկածը դիտմամբ եղած է...:

Ս Ա.-Չեմ գիտեր, սոսկալի անձրեւ կու գայ եղեր... չեմ կարծեր, ատիկա անկարելի է:

Մ Ծ.-Տիկին Աւետիսեան, քիչ առաջ ըսիք որ ամէնէն ճիշդը Շուապէքըրը գրած է, կ'ուզէ՞ք այդ մասին խօսինք:

Ս Ա.-Ես չեմ կրնար ըսել... այդ գիրքը կուզե՞ս բերեմ... (Աղջիկը՝ Վարսիկը գնաց գիրքը բերաւ ու սեղանին դրաւ):

Մ Ծ.-Այն ատեն, երբ Կորքիի գործերը փոխադրող օդանաւը ինկաւ, դուն գիտե՞ս թէ քանի գեղանկար կորսուեցան:

Ս Ա.-Ոչ, չեմ գիտեր. կարծեմ 6 հատ էին:

Մ Ծ.-Կ'ըսէն թէ ամբողջ հաւաքածոն անհետացած է:

Ս Ա.-Չեմ գիտեր... միայն գիտեմ որ շատ աժան գնով առեր էին զանոնք:

Մ Ծ.-Իսկ թուղթի վրայ գծուած նկարներ ունի՞ք:

Ս Ա.-Ուրիշ նկարներ ունինք, Վարսիկը՝ աղջիկս հատ մը ունի... իւղաներկ է: Մենք այդ նկարները փոխ տուինք Պոսթընի Գեղարուեստից թանգարանին:

(Վարձով տուած էին, որուն եկամուտով կ'ապրէին մայր ու աղջիկ):

Մ Ծ.-Կը յիշե՞ս իր «Նկարիչը եւ Մայրը» կտաւը, որ հիմա կախուած է Նիւ Եորքի «Ուիթնի»ի արդի կերպարուեստի թանգարանը: Ե՞րբ սկսաւ նկարել զայն:

Ս Ա.-Անշուշտ, ատիկա միակն է, ուրիշ չէ նկարած: Մենք գացինք տեսանք, մեզ պատմեր է այդ նկարի մասին: Ես միշտ հիւանդ եմ եղել, ինձմէ ամէն ինչ կը պահէին: «Մեղք է, Սաթենիկին չըսենք, թող չիմանայ» կ'ըսէին: Ոչ մէկ բան ինծի չէին ըսեր, գործողութիւն եղաւ (եղբայրս), ամէն ինչ... Ես բնաւ լուր չունեցայ:

(Իրականութեան մէջ յիշեալ «Նկարիչը եւ մայրը» գեղանկարը ունի երկու տարբերակ, երկրորդը կը գտնուի Ուաշինկթընի Ժամանակակից Արուեստի Թանգարանին մէջ):

Մ Ծ.-Բնաւ փորձա՞ծ էք նկարել:

Ս Ա.-Ոչ, Վարսիկը՝ աղջիկս կը նկարէ:

Մ Ծ.-Այս գիրքին (ցոյց տալէ ետք սեղանին վրայ դրուած Շուապէքըրի գիրքը) մէջ յիշուած հաւկիթներն ո՞ւր են հիմա:

Ս Ա.-Օ՛, այդ հաւկիթները եթէ պահէինք: Ամբողջ 10-15 տարի պահած էի պահարանին մէջ: Այնչափ փոխադրուեցայ, ասդին անդին որ հաւկիթները կորսուեցան: Տեսնէիր... Աղթամարայ գմբեթը վրան կար...

Մ Ծ.-Հաւկիթին վրա՞յ նկարեր էր:

Ս Ա.-Այո, բոլոր հաւկիթներուն վրայ կը նկարէր... իսկապէս կը հիանայիր... ամբողջ վանքեր. Ոստանայ Ս. Նշանը, որ մայրիկիս Վանն էր, անոր գմբեթը... եւ գրուած վրան: Այդ հաւկիթները գիտե՞ս ինչ էին... հաւկիթներ... նկարները հայկական էին, Հայաստանի վանքերն էին... Միայն Հայաստանի վանքեր եւ Վանը... Ամբողջ Վանի նկարներն էին հաւկիթներուն վրայ...

(Պահ մը լռելէ ետք... աւելի լրջացաւ եւ շարունակեց):

Ս Ա.-...Մայրս երեք աղջիկ ունեցեր է եւ մանչ զաւակ չէ ունեցած: Ան ուխտ ըրեր է, ծունկերով... Ան Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ Վանքը գացեր է եւ ծունկերով այդ 100 աստիճանները վեր ելեր, մատաղ է ըրեր որպէսզի մանչ զաւակ ունենայ: Եւ այն ատեն իր ուխտը կատարուեր է ու ծնուեր է Ոստանիկը:

(Որովհետեւ այս հարցազրոյցը բաւականին երկար է, առ այժմ բաւարարուինք այսքանով: Հաւանաբար այլ առիթով մը ամբողջութեամբ արտագրեմ եւ հրապարակեմ զայն):

***

Այնուամենայնիւ, ո՞վ է այս քանքարը, որուն ստեղծագործական կեանքը լաւագոյնս կրնայ դրսեւորել, յետ Եղեռնի սերունդի ոգեղէն հայրենիք «որոնելու» տագնապներն ու անոնց անդրադարձն ազգային ու մարդկային խնդիրներու շուրջ:

Ոստանիկ Ադոյեան ծնած է Վանայ լիճի մօտ՝ Խորգոմ գիւղը, 1904-ին (ըստ իր քրոջ՝ Սաթենիկին 1902-ին): 1915-ին կը մասնակցի Վանի ապրիլեան ինքնապաշտպանական կռիւներուն, իբրեւ մարտիկներու օգնական եւ ըստ ոմանց վկայութեան, նաեւ իբրեւ դիպուկահար: Այգեստանի անկումէն ետք, ընտանիքով արտագաղթի ընթացքին Իգդիրի մօտերքը կը հանդիպին խումբ մը ֆէտայիներու, որոնք զիրենք ապահով կը հասցնեն Էջմիածին: Քանի մը շաբաթ հոն մնալէ ետք, կ'երթան ու կը տեղաւորուին Երեւանի թշուառագոյն թաղամասը՝ Կոնդ, ուր մայրը կը մահանայ «պատուհան»ին վրայ... անօթութեան հետեւանքով: 1919-ին քրոջը հետ կ'անցնին Թիֆլիս, ապա Պաթում, Պոլիս եւ Յունաստանի վրայով 1920-ին կը հասնին ԱՄՆ: Նախ՝ կը բնակի Պոսթըն քրոջը՝ Սաթենիկի մօտ, ապա կը տեղափոխուի Նիւ Եորք, ուր լուրջ դժուարութիւններու կը հանդիպի: Իր արուեստի հասունացման ու ծաղկման շրջանին վերջ կու տայ իր կեանքին՝ ինքնասպանութեամբ:

Իսկ ո՞ւր է անոր արուեստին գեղարուեստական արժէքն ու, արուեստի պատմութեան մէջ ներդրած անոր նորութիւնը ու՞րկէ կու գար...

«Յիշողութիւնը արուեստագէտին սերմն է» կ'ըսէ Արշիլ Կորքի:

Յիշողութիւնը իսկապէս «սերմի» դեր կատարեց ոչ միայն իր, այլև առհասարակ սփիւռքահայ բազմաթիւ կերպարուեստագէտներու ստեղծագործական կեանքին մէջ: Իսկ Արշիլ Կորքիի արուեստը վերլուծելու եւ մեկնաբանելու համար անհրաժեշտ բանալի մը կարելի է համարել «Յիշողութիւնը», որու մասին կը վկայեն նաեւ ուրիշներ: Ինչպէս ամերիկացի գեղանկարիչ Ճէքըպ Քէյնըն կ'ըսէ. «...աւելի ուշ, երեսնական թուականներուն, ես ըմբռնեցի, թէ ան կ'ուզէր վարպետներու կառուցուածքային անխուսափելիու-

թիւնը պահպանել եւ միաժամանակ, աւելի ու աւելի յանձնուիլ իր ազգային յիշողութիւններուն եւ չարչարուած անգիտակցականին»:

Եւ այսպէս. Կորքիի տագնապահար յոյզերու մշտնջենական հուզումն ու հոգեկան ահագնացող տուայտանքները, թրծուելէ ետք իր հոգեմտաւոր քուրային մէջ, կը յայտնակերպուին իբրեւ գիծ, գունեռանգ եւ ընդոծին լոյս: Իսկ իր անվերջանալի տարածականութիւններու չմիջնորդուած ապրումները, ինքնաբուխ մաքրութեամբ ի յայտ կու գան իր ստեղծագործութիւններուն մէջ, որոնք ոեւէ կաշկանդում չեն հանդուրժեր: Ձեւազեղծուած կերպարներն ու առհասարակ կերպերը, բեղմնաւորուելէ ետք խոր անցեալին մէջ, կը շրջանցեն ներկան... փթթելու եւ ծաղկելու համար անպարփակելի ապագային վրայ: Ահաւասիկ թէ ինչու Կորքի ոչ միայն կը յանձնուէր «*իր ազգային յիշողութիւններուն եւ չարչարուած անգիտակցականին*», այլ նաեւ կը պեղէր սեփական ներաշխարհի ցեղային ակունքներն իսկ, վերապրելու եւ դրսեւորելու համար զանոնք, ամերիկեան միջավայրի եւ իր ժամանակի լպրծուն կեանքի վրայ... Այս բոլորը թէեւ կը բխին իր ծննդավայրի առասպելականացած յիշողութիւններէն, սակայն անոնք բեկուելէ ետք ամերիկեան եռեւեփող կեանքէն տաղուած, ու կարօտախտէ բռնուած վտարանդիի մը հոգեմտաւոր պրիսմակին վրայ, իբրեւ տեսիլքի վերածուած յոյզ, իբրեւ յիշողութեան սերմ... սրբազան ծիածանի մը հանգոյն կը ծոցուորուին կոյս կտաւներու վրայ: Ահաւասիկ թէ ինչու Կորքիի արուեստը թաթաւուն է ծիսականութեամբ, եւ ակնդիրը դժուար թէ անտարբերութեամբ անցնի անոր առջեւէն: Իսկ ցոյց տալու համար Արշիլ Կորքիի տեղն ու դերը արուեստի պատմութեան մէջ, կրկնենք Անտրէ Պրէթոնի վկայութիւնը. «*Կորքին Միացեալ Նահանգներու արուեստի պատմութեան մէջ երբեւիցէ եղած գեղանկարիչներուն ամենամեծն է եւ իրապայտուկը*»: Իսկ իր նամակներէն մէկուն մէջ Կորքին կը խոստովանի. «*...Այս բոլորին համար ես պարտական եմ մեր հայ արուեստին*»:

Կորքին նոր երեւոյթ էր, եւ այդ պատճառով ալ Ամերիկայի արուեստաբանները չկրցան տեղաւորել զինք որեւէ իզմ-ի մէջ: Պարպարա Ռոզ կը գրէ. «*Դեռեւս չէ ճշդուած այն հարցը թէ Արշիլ Կորքի վերջին գերիրապաշտն (Surrealism) է, թէ առաջին վերացական-արտայայտչապաշտը (Abstract-Expressionist)*:

Բացի վերոյիշեալներէն, ամերիկացի արուեստաբաններէն շատեր, ինչպէս՝ **Ճոն Կրահամ, Հարրի Ռանտ, Ժիլլըն Լէյվին** եւ տասնեակէ մը աւելի ուրիշներ, բարձր կը գնահատէին անոր արուեստը, սակայն էապէս չէին կրնար հասկնալ զինք, որովհետեւ ան կու գար իրենց համար անծանօթ տարբեր աշխարհէ մը, եւ օժտուած էր տարբեր անհատականութեամբ ու գեղագիտական ուրոյն համոզումներով: Կորքի արդարօրէն կ'առարկէ. «*Անոնք մօրս աչքերը Փիքասոյական կը համարեն, իսկ Հայոց թախիծը՝ բիզանդական կամ ռուսական. երբ կ'ուղղեմ անոնց սխալները, անոնք կը պատասխանեն թէ այդ ուղղումները, փոքր ազգերու յատուկ չափազանցուած ազգայնամոլութիւն են: Այս մէկը կը կատղեցնէ զիս...: Արուեստը ազգայնամոլութենէ վեր է եւ կը ներկայացնէ համընդհանուր մարդկային աչքը*»: Ուրիշ տեղ մը ան կը շեշտէ. «*Իմ արուեստը մեր դժբախտ ժողովուրդի ինքնարտայայտութիւնն է*»:

Այո՛, Հայ կայացած կերպարուեստագէտներէն շատերու (Երուանդ Քոչարի, Ժանսեմի, Փոլ Կիրակոսեանի, Պերճ Զաքէճեանի, Եուրոզի... Գէորգ Եղիազարեանի, Տիգրան Ձիթողցեանի եւ ուրիշներու) արուեստը կը տարբերի միւսներէն, եւ դժուար կը տեղաւորուի ոեւէ իզմ-ի մէջ, որովհետեւ անոնք էութեամբ **ոգեպաշտ** (hylozoist) են: Թէեւ ոգեպաշտութիւնը հին աշխարհի մէջ հայութեան մենաշնորհը չէ, սակայն ան խորապէս անթեղուած է հայ ազգային մշակոյթի հազարամեակներու խորքն ու հասած մինչեւ մեր օրերը: Հակառակ անոր որ տիրող կարծիքը այն է թէ Կորքին **«Վերացապաշտ-արտայայտչապաշտ** (Abstract-**Expressionist**) դպրոցի հիմնադիրն է (կամ հիմնադիրներէն մէկը), իրականութեան մէջ ան ընդոծին **Ոգեպաշտ (hylozoist)** մըն էր: Կորքիի համար ապրող բոյսերէն, քարերէն ու ոսկորներէն աւելի կենսական նշանակութիւն ունէր «**Ապրող Երազներ**»ու բնորոշումը, որոնք յիշողութեան ճամբով կը բացուէին իր արուեստին վրայ իբրեւ ոգեղէն տեսիլք, իբրեւ անցեալի երփներանգ վերապրում: Կորքի կ'ըսէ. «*Մենք կորսնցուցինք մեր գեղեցիկ Հայաստանը եւ ես պէտք է վերականգնեմ զայն իմ ստեղծագործութիւններուս մէջ*»: Ահաւասիկ թէ ուրկէ՞ կը բխի Ոգեղէն Հայրենիք կերտելու անոր անխուսափելի ցանկութիւնը...

Կորքիի ակնարկութիւնն առաւելաբար Արեւմտահայաստանին կ'երթար, որովհետեւ ան ոչ միայն կ'ընդունէր Խորհրդային Հայաստանը, այլեւ կը ցանկար այցելել զայն: Այո՛, սփիւռքահայ արուեստագէտին համար մխիթարանք (ոմանց համար նոյնիսկ հպարտանք) էր Խորհրդային Հայաստանի իրողութիւնը, թէեւ մեծամասնութիւնը կը նախընտրէր Ազատ Անկախ Հայաստան մը՝... Կորքին նոյնպէս:

Կորքին ամենայն համոզուածութեամբ կը պնդէր. «*Մենք կարճ ժամանակի ընթացքին հարկադրաբար շատ բան տեսանք ու ապրեցանք: Տեսանք թուրքերու ոճրագործութիւնները, կոտորածն ու Եղեռնը, մեր գաղթը, մեր երկրի կործանումը: Ես կը յիշեմ այս բոլորը: Մենք՝ ողջ մնացածներս չենք կրնար այս բոլորին չհակադարձել հնարաւորին չափ մեծ ուժգնութեամբ*»:

Այսպիսով՝ Կորքի ոչ միայն ինքզինք, այլ նաեւ յետ Եղեռնի ողջ սերունդը յանձնառութեան տակ կը դնէր, հակադարձելու **հնարաւորին չափ մեծ ուժգնութեամբ**: Սակայն խօսքը «*Ակն ընդ ական*» վրէժխնդրութեան մասին չէ, այլ գեղարուեստական հզօրութեան, ինքնահաստատման եւ յատկապէս ինքնատիպ ու բարձրորակ մշակոյթի մը պաշտպանութեան եւ նորի ստեղծման ի խնդիր: Հակառակ անոր որ Կորքիի ստեղծագործական կեանքի եւ անոր արուեստի մասին գրուած ու հրատարակուած են բազմաթիւ գիրքեր, մենագրութիւններ ու յօդուածներ. եւ հակառակ անոր որ ժամանակակից գրեթէ բոլոր հեղինակաւոր պատկերասրահներն ու թանգարանները հպարտութեամբ կը ցուցադրեն անոր արուեստի նմոյշներէն, այնուամենայնիւ անոր արուեստը դեռեւս չէ ուսումնասիրուած ու գնահատուած յատկապէս հայ մշակութային աւանդներու տեսանկիւնէն...

# Ինքնամերժման խորքային վտանգները

**Մանվել Մկրտչյան**
**Հրապարակախոս**



Այս հրապարակումը սկսենք մի արյունոտ վիճակագրությամբ. **1877 թ. Բայազետ՝ 1400 հայ, 1879 թ. Ալաշկերտ՝ 1250 հայ, 1894 թ. Սասուն՝ 12 000 հայ, 1895 թ. Արևմտյան Հայաստան՝ 300 000 հայ, 1896 թ. Վան՝ 8000 հայ, 1904 թ. Սասուն՝ 5650 հայ, 1909 թ. Ադանա՝ 30 000 հայ, 1915 թ. Արևմտյան Հայաստանի և Օմանյան կայսրության այլ տարածքներ՝ 1 500 000 հայ, 1918 թ. Կարս՝ 100 000 հայ, 1920 թ. Կիլիկիա՝ 50 000 հայ, 1920 թ. Շուշի՝ 20 000 հայ, իսկ հետո կրկին՝ Սումգայիթ, Բաքու, Մարաղա... Արցախ...** Այսքանից հետո այդ ո՞ր տկարամիտը կարող էր հավատալ, որ թուրքերի հետ կարող է խաղաղություն լինել: Ու ողորմելի, մորթապաշտ ու ծախու մարդկանց մի խումբ Հայաստանում որոշել է, որ դա հնարավոր է: Պարզ է նաև, որ բուն խնդիրն իրենց ողորմելի իշխանությունը պահպանելն է: Գինը՝ կարևոր չի... Բաց աչքերով նայում են արյունոռշտ գազանին ու իրենք իրենց համոզում, թե այս անգամ կստացվի: Ո՞նց մոռանանք Հովհաննես Շիրազի հոգու ճիչը՝ «**Հայոց եղեռնը ով մտքից հանի, նա է թշնամին նոր Հայաստանի»:** Բայց արի ու տես, Ցեղասպանությունն ուրացողը քիչ է գոյություն ունի, մի բան էլ բազմել է կառավարության ղեկավարի աթոռին: Բազմել ու վեհացնում է իր պապերին ու տատերին մորթողին: Սա այն է, ինչի մասին խոսում էր Գարեգին Նժդեհը՝ «**Ապերախտ ժողովուրդ, դու ուզեցիր այն, ինչ ուզում է թշնամին»:** Իսկ թշնամու ուզածն էլ այն է, որ մենք չունենանք նորմալ առաջնորդ, իսկ եթե ունենանք առաջնորդ լինի նիկոլ անունով մի բան, որն ընդունակ է ցանկացած հակազգային ու հակապետական քայլի: Հիրավի, Հայաստանում թուրքի երազանքների իշխանություն... Կենդանաբաններն ասում են, որ «**գազանների և մարդկանց միջև եղած տարբերությունն այն է, որ գազանները երբեք թույլ չեն տալիս, որ իրենց առաջնորդի ամենաանկարողը:** Մեր հանրությանը «հաջողվեց» հենց հակառակն անել. որպեսզի աշխարհին անհատականություններ և երևելի գործիչներ տված ազգը դեմ առնի մի չնչին պատնեշի և չկարողանա վերացնել այն, ապահովել իր վաղվա վստահելի օրը: Չկարողանա, որովհետև իրենից ոչինչ չներկայացնող պատնեշի ետևում կանգնած են այս երկրի ճակատագիրն այլ շահերի զոհաբերել ցանկացող ուժեր: Եվ կրկին արդիական են դառնում Ռաֆֆու խոսքերը. «**Ամեն մի հայ, առանձին վերցրած, առյուծ է, ինչպես և խելքով ու դատողությամբ՝ հսկա: Բայց ընկերական ոգու բացակայությունը խմբովին գործելիս ջլատում է նրա ուժերը: Զգե՛ք մենակ հային վտանգների փոթորկի մեջ, նա արժանավորապես կպաշտպանի յուր գլուխը: Բայց խմբե՛ք մի քանի հայեր միասին, և նրանք, պաշտպանվելու կամ հարձակվելու փոխարեն, կսկսեն խորհել, մտածել, հակաճառել և, վերջապես, թշնամուն թողած՝ միմյանց միսն ուտել»:** Սա պարադոքս չէ՝ ի՞նչ է... Ահա այս հարցերն են, որ չստանալով իրենց պատասխանները, մեր ժողովրդին դրդում են խրվել ինքնաքննադատության և ինքնամերժման ծանծաղուտները: Մտաբերենք, թե՛ բանավեճերում, թե՛ մտերմիկ զրույցներում և թե՛ հատկապես հանրային վայրերում սկիզբ առած բողոքներում մարդիկ ինչպես են արտահայտվում ազգի ու պետության վիճակի, հայ մարդու նկարագրի և առանձին որակների մասին: Ահա նրանց «ցնցող» եզրահանգումը. «**Դե ազգ չենք, էլի, հո զոռով չի...»:** Եվ ի՞նչն է տարօրինակ. տվյալ պրոբլեմը չափազանց կոնկրետ է, մի օղակ կամ մարդ իրեն դրսևորում է հակաօրինական, անբարո ձևերով, խախտում է կարգը, անարդար բաներ է անում, իրեն պահում է անդաստիարակ ձևով և այլն, բայց թիրախավորվում է ողջ ազգը: Ասես, բոլորին ձեռք է տալիս, որ մեղավոր լինի ոչ թե կոնկրետ անձը, այլ հանրությունն ամբողջությամբ: Սա պատասխանատվությունից խուսափելու ճարպիկ հնարք է, ոչ ավելին: Հայտնի բան է, այլոց քննադատողը չի կարող ներել նաև իրեն, և այսպես մարդիկ վարժվում են ինքնաքննադատությանը և ինքնամերժմանը: Հոգեբանական առումով՝ այլոց դատապարտելը ինչ որ առումով ենթագիտակցորեն իշխանության ծարավ է, կիրք, տենչ, որովհետև, երբ ինչ որ մեկին ասում ես՝ «ոչ», կամ «դու

սխալ ես», ասողը զգում է իր նշանակալից լինելը: Այլոց դատելը մնում, կերակրում է մարդու «էգոն», արդյունքում՝ դատում են քեզ, դու էլ դատում ես մյուսներին: Պայմանավորված պատմական ու քաղաքական հանգամանքներով, այս ինքնամերժման ցեցը մեզ ուղեկցում է արդեն մի քանի հարյուր տարի: Դա տեսնում ենք Ռաֆֆու, Թումանյանի, Դեմիրճյանի, Նժդեհի և մյուս մեծերի խոհերում և գրվածքներում: **Նժդեհի ազգային նիհիլիզմի** թեման առանձին խոսակցություն է: Եթե մի քիչ էլ հեռուն գնանք, դրա հետքերը կգտնենք Նարեկացու «Մատյան ողբերգության» հանճարեղ պոեմում: Հանրային գիտակցության մեջ ինքնամերժումն ու ինքնաքննադատությունը, ասես, սահման չեն ճանաչում: Բանն այն է, որ մարդ արարածը դժբախտ է և միշտ պատասխան է փնտրում այն հարցին, թե ինչու է այդպես: Եվ հասարակությունը մարդուն առաջարկում է այսպիսի ելք՝ **ԴԱՏԵԼ,** դատիր անխնա, դատիր ինքդ քեզ, դատիր թշնամուդ և մերձավորներիդ, բոլորին, անխտիր… Երբ մարդը դատում է, նշանակում է նա չի հասկացել, չի գիտակցել իրականությունը. «**Ես կատարյալ չեմ, կատարյալ չեն նաև մյուսները**» մտքի և վարքի կոդը դառնում է կանխորոշիչ՝ բոլոր տիպի թե՛ միջանձնային և թե՛ հասարակական հարաբերություններում: Սա հիմնարար հարց է ողջ մարդկության համար, սա միայն մեր խնդիրը չէ: Մի տարօրինակ բան էլ կա՝ ցավ ենք պատճառում մարդկանց, բայց, չգիտես ինչու, ուզում ենք, որ նրանք սիրեն ու հարգեն մեզ: Եթե չես սիրում, չես հարգում և չես վստահում ինքդ քեզ, չունես այդ զգացումները հոգուդ մեջ, ապա ինչպե՞ս կարող ես դրանք բաժանել այլոց: Հայ հասարկության մեջ սա տարածված և ուժեղ արտահայտված երևույթ է: Պատահական չէ, որ «**Ինչո՞ւ հայերն իրար չեն սիրում**» հարցը այդպես էլ դուրս չի գալիս մեր խոհերի օրակարգից: Մարդիկ չափից ավելի շատ բան են պայմանավորել «**միմյանց սիրել-չսիրելու**» հանգամանքով: Սա սխալ մոտեցում չէ, սակայն կիսատ ընկալում է: Առիթներ եմ ունեցել այս թեմաներով զրուցելու օտարների հետ, բայց նրանցից և ոչ մեկն այդքան ճակատագրական չի համարել այս հարցը իրենց ազգի դեպքում: Ասեմ ավելին, նրանց խոսքում չեմ լսել սեփական էթնոտեսակի մասին անհանդուրժող քննադատություն: Երևի նրանք ավելի լավ են հասկանում, որ ինքնախարազանումը խլում, ոչնչացնում է մարդու կենսական էներգիան: Ճապոնական սամուրայն ասում էր՝ «**Վատ մի խոսիր ինքդ քո մասին, ներսումդ ապրող ռազմիկը լսում ու տկարանում է»:** Տարիներ առաջ Մատենադարանի աստիճանների վրա զրույցի բռնվեցի մի նորվեգիացի հետազոտողի հետ, որը նաև հայագետ էր: Անուշ մարդ էր, լավ գիտեր մեր մշակույթը, պատմությունը, տիրապետում էր ռուսերենին և մասամբ՝ հայերենին: Երբ հասանք միջնադար և Նարեկացուն, ես մի անասելի խանդավառությամբ սկսեցի ներկայացնել Նարեկացու մասին իմ դիտարկումները: Նա գիտեր մեր տիտանին: Ուշադիր լսում էր, չէր ընդհատում: Վերջում ասաց. «**Ձեր դիտարկումների մեծ մասի հետ համամիտ եմ, բայց մի բան կա, որ այդպես էլ չեմ կարողանում հասկանալ, ի վերջո, ինչո՞ւ պետք է մարդը տառապի, այն էլ այդքան անողոքաբար, խստորեն դատապարտի ինքն իրեն: Մարդ էակի իրական կոչումը երջանիկ լինելն է, այլ ոչ թե տառապելը: Ենթադրում եմ, որ Ցեղասպանությունը ձեզ շատ է խեղճացրել, և դուք մի տեսակ չեք տեսնում այսօրվա իրական աշխարհը: Մխրճվել եք ձեր ցավի ու կորուստների մեջ և չեք կարողանում դուրս պրծնել այդ վտանգավոր ծուղակից»:** Սա միանգամայն այլ ընկալում էր, օտարի ընկալում, և ես լռեցի: Բայց մի հարցում անկարելի էր չհամաձայնել նրա հետ: Իրոք, մենք լավ չենք տեսնում այս աշխարհը, պետությունների շահերը, երկրների գիշատչական ձգտումները: Իրականում՝ մեր աշխարհը գիտակցությունից զուրկ, ասես, քնած կամ կուրացած մարդկանց աշխարհ է: Այստեղից էլ այսքան թյուրըմբռնումներ, հակամարտություններ, վեճեր, քաոս… Աշխարհի կշիռ ունեցող երկրները ապրում են իշխելու, այլ երկրներից մի բան խլելու, ուրիշների ռեսուրսներին տիրանալու աշխարհակարգում… Քնածների, կուրացածների և արթնացածների, գիտակից մարդկանց միջև կա մի խիստ էական տարբերություն, որը պետք է նկատի ունենալ: Անգիտակիցը կամ իշխելու տենդի մեջ ապրող մարդը չգիտի, թե ով է ինքը, ուստի նա անընդհատ ձգտում է փաստել, թե ինչ է իրենից ներկայացնում, և դա անում է ողջ կյանքի ընթացքում: Նա ձգտում է դա հաստատել հազարավոր ձևերով: Հաճախ, որպեսզի հայտարարի՝ «**ես այս եմ, ես այն եմ»,** նա բարձրանում է քաղաքական կարիերայի աստիճաններով: Կառուցում է ահռելի տուն, ստեղծում ֆանտաստիկ բիզնես համակարգեր, ցուցադրում է իր հարստությունը, զավթում հարևանների հողերը՝ ցուցադրելով իր ուժը: Իրականում, բոլոր ջանքերն ուղղված են նրան, որ նա պարզի, թե ինքն ով է: Աչքիս առջև Իհլամ Ալիևն է ու ամպերին հասած նրա էկզոտիկ քիթը… Իսկ եթե առավել պարզեցված ձևով ասելու լինենք, աշխարհի ժամանակակից պատկերը կլինի այսպիսին. «**Եթե քո ձեռքին ատրճանակ կա, և ես նույնպես ատրճանակ ունեմ, ապա մենք կարող ենք խոսել օրենքի մասին: Եթե քո ձեռքում դանակ է, իմ ձեռքում՝ նույնպես, մենք արդեն կխոսենք կանոնների մասին: Եթե դու եկել ես դատարկ ձեռքով, և ես նույնպես, ապա մենք կխոսենք բանականության մասին: Իսկ եթե քո ձեռքինը ատրճանակ է, իսկ իմ ձեռքինը՝ դանակ, այդժամ ճիշտը դու ես: Բայց ահա, երբ դու ունես ատրճանակ, իսկ ես ոչինչ, ապա դա նշանակում է քո ձեռքում ոչ միայն ատրճանակ է, այլև իմ ԿՅԱՆՔԸ: Օրենքների, կանոնների և բարոյականության հասկացություններն իմաստ ունեն, *եթե հիմնված են հավասարակշռության վրա*: Այս աշխարհի դառը ճշմարտությունն այն է, որ երբ խոսում են փողերն ու զենքերը, ճշմարտությունը լռում է: Իսկ երբ խոսում է ուժը, ապա նույնիսկ փողերն են մի քանի քայլ հետ նահանջում: Նրանք, ովքեր կանոններ են ստեղծում, հաճախ իրենք էլ խախտում են դրանք: Կանոնները շղթաներ են թույլերի համար և գործիքներ՝ ուժեղների ձեռքին: Այս աշխարհում ամեն լավ բանի համար պետք է պայքարել:**

**Խաղի «վարպետները» կատաղի պայքար են մղում ռեսուրսների համար, այն դեպքում, երբ թույլերը նստած են անգործ և սպասում են իրենց բաժին փշրանքներին: Այնպես որ, քանի դեռ դու անգործության ես մատնվել, քո փոխարեն որոշում են ուրիշները և ոչ մի լավ բան մի սպասիր նրանց որոշումներից: Բայց եթե քաջություն կցուցաբերես և ի տես կդնես քո ուժը, ապա քեզ հետ հաշվի կնստեն»:** Այսքան պարզ ու մատչելի ձևով արված ձևակերպումն արդեն 135 տարի այլ բառերով ու ձևակերպումներով ասում է ՀՅ Դաշնակցությունը: Հավանաբար, նաև նորվեգացի իմ զրուցակիցը հենց այս ամենը նկատի ուներ, երբ ասում էր աշխարհից գլուխ չեք հանում: Շատ երկրներ ունեն բոլորովին այլ մոտեցում պրոբլեմների հանդեպ: Նրանք, ի տարբերություն մեզ, ինքնամերժմամբ և ինքնաքննադատություններով, ինչպես ասացինք վերևում, չեն մսխում իրենց դրական էներգիան՝ չեն փոշիացնում: Օրինակ, երբ ինչ որ տեղ ջրատարը վթարվել է, կամ ճանապարհն անանցանելի է, մարդիկ չեն ասում. **«Երկիրը երկիր չի, ազգային գիտակցություն չունենք, պետական մտածողությունից զուրկ ենք և այլն»:** Նրանք գնահատում են իրավիճակը, ճշգրտորեն ձևակերպում հիմնախնդիրը, պատճառները: Արագ գալիս է կառավարման համակարգի համապատասխան օղակը և տալիս իր մասնագիտական եզրակացությունը, ինչ տարբերակով այն պետք է լուծվի, ինչքան փող է պետք, ով է լինելու կատարման պատասխանատուն, և ինչ ժամկետներում գործը պետք է արվի: Վերջ: Այս դեպքում նույնիսկ գործը մամուլին չի հասնում, համակարգն ավտոմատ է անում այս ամենը: Սա մի ճիշտ համակարգ է անգամ ամենաբարդ հարցերը հաղթահարելու համար: Լինի դա սոցիալ-տնտեսական խնդիր, երկրի ղեկավարի փոփոխություն, անվտանգային հարցեր ու արտաքին հարաբերություններում ճշգրտումներ կամ մեկ այլ բան: Սա բխում է, այսպես ասած, որպես «**Արդի պետություն**» գործելու տրամաբանությունից: Պատմում են, որ տարիներ առաջ, երբ Գերմանիայի ֆուտբոլի հավաքականը պարտվեց աշխարհի խաղերի եզրափակիչում, պետական ամենաբարձր մակարդակով՝ Բունդեսթագում հատուկ նիստ հրավիրվեց, պարտության պատճառները հասկանալու և վիճակը արմատապես շտկելու համար: Պատկերացո՞ւմ եք, սա նույնիսկ ֆուտբոլի պես անկանխատեսելի սպորտաձևում: Ասել է թե՝ «**եթե որոշել էինք, որ պետք է հաղթենք, ապա այդպիսի արդյունք չպետք է լիներ, ոչինչ չպետք է շեղեր մեզ մեր նպատակից»:** Կասեք, դա կազմակերպված ու զարգացած Գերմանիան է, մենք շատ հեռու ենք նման որակներից: Հարցն էլ հենց դա է՝ ինչպե՞ս են ազգերը հասնում զարգացման այդ մակարդակին: Իսկ նրանք այդ ամենին հասնում են իրենց առողջ և պրակտիկ մտածողության և վարքագծի շնորհիվ: Մեր պարագայում՝ վիճակը տրամագծորեն հակառակն է. գտնել վերացական մեղավորների ու զբաղվել նույնպիսի վերացական ինքնաքննադատությամբ և... բավարարվել այդքանով: Իսկ վերացական մեղավորը և անթիրախ քննադատությունը, ինչպես գիտենք, սկզբից ևեթ մեռյալ են:

Հիմա ավելի կոնկրետ. օրինակ, գիտենք չէ՞, որ պետության ղեկին հայտնված մարդն ակնհայտորեն թշնամու դրածո է, մորթապաշտ ու բարոյազուրկ մի սրիկա, երկիրը գլորում է դեպի անդունդ: Հետևաբար, ինչո՞ւ տեղի չի ունենում այնպիսի մի հանրային ընդվզում, որը դրածոյին դեն կշպրտեր իր աթոռից: Կա հստակ խնդիր, բայց չկա որևէ հստակ գործողություն: Այստեղ է, որ ծույլ ու թանձրամիտ զանգվածին օգնության է հասնում ֆեյսբուքյան «**հերոսական պայքարը**» դավաճանների դեմ: Անձնական անպատասխանատվությունը վերածվում է հանրային անպատասխանատվության: Սա արդեն իսկական նվեր է դրածոյին և նրան սատարող դրսի և ներսի ուժերին: Ու շատերից լսում ենք՝ **«Նիկոլը գնացող չի»**: Հիմա հարց. **«Իսկ ի՞նչ ես արել, որ նա գնա»:** Պարզ է, կոնկրետ ոչինչ, կամ քիչ բան: Պրոբլեմը հիմնականում ձևակերպվել է, բայց դրան չեն հաջորդել հետևողական ջանքեր, կոնկրետ քայլեր: Սա դեմագոգիա է՝ ոչինչ չանել, բայց ակնկալել դրական արդյունքներ: Այ, սրա համար ենք ասում, որ անպատասխանատու ինքնամերժումն իսկական ծուղակ է, ոչինչ չանելու շատ հարմար պլատֆորմ: Սրտացավ և կարգին հայի մեջ «**Ազգ չենք էլի, հո զոռով չի**» բառերը, նույնը նաև՝ «**նախկինները**» զառանցանքը, միայն զզվանք են առաջացնում, որովհետև կարծես ասվում է՝ **«Ես չեմ փոխվելու, թող փոխվի մեկ ուրիշը, փոխվի ու ինձ համար ապահովի անվտանգ տուն, որտեղ ես իմ բաժին երջանկությունը կարող եմ հանգիստ որոճալ»:** Ասողն անգիտակից է ու չի հասկանում, որ սա օտարի տուն չէ, հետո ինչ, որ տունն օրեցօր ճաքեր է տալիս ու փլվում: Ու եթե այդպես է, ապա մենք այդ տունն այդպես էլ չենք ունենա, քանի դեռ այն չենք գտել մեր մեջ: Նայենք Հայաստանի այսօրվա քարտեզին, քարտեզն ավելին է պատմում, քան հազարավոր խոսքերը միասին վերցրած, իսկ արյունոտ վիճակագրությունը, որը ներկայացրինք հրապարակման սկզբում, արդեն նոր աղետների ահազանգն է: ■

# Հայոց ցեղասպանության հուշահամալիրի կառուցումը սերունդների ծանր պայքարի արդյունքն էր...

**Արմեն Կարապետյան**
**Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հրապարակագիր**

Մեր ժողովրդի համար սրբազնորեն նվիրական վայր է դարձել Ծիծեռնակաբերդի բարձունքում վեր խոյացող Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը, որը նաև բարձր արվեստի եզակի ստեղծագործություն է: Այս հուշահամալիրը մեր ժողովրդի հոգու ճիչն է, նրա ոգեղեն բողոքն ու ցասումը՝ ուղղված ցեղասպան ոճրագործների և անարդար լիրբ աշխարհի դեմ: Այն համայն հայության պատմական հիշողության մարմնացումն է:

Ծանրագույն, համառ ու դժնդակ պայքարի շնորհիվ է ձեռք բերվել այս հաղթանակը՝ ընդդեմ հայրենիքի ուրացման և պատմական հիշողության ոչնչացման:

Մինչև 1960-ական թվականները, Հայաստանում արգելանքի տակ էր ցեղասպանության և կորուսյալ հայրենիքի հետ կապված ամեն ինչ, ամեն մի մասունք և հիշողության պատառիկ: Թուրքերը դա կարողանում էին վերահսկել Մոսկովյան Կրեմլի միջոցով: Եվ բավական երկար ժամանակ դա նրանց հաջողվում էր:

### Լռության պատնեշի խորտակումը

Հայ ժողովրդի մեծ ողբերգության՝ ցեղասպանության կեսդարյա տարելիցը լրանում էր 1965 թվականի գարնանը: Սփյուռքահայությունն ամեն ջանք գործադրում էր, որ այն արձագանք գտնի ողջ աշխարհում: Եվ ավելին՝ որպեսզի ոճրագործությունը դատապարտվի մարդկության կողմից, ոտքի կանգնեց նաև Խորհրդային Հայաստանի հայությունը, որքան էլ որ դա անհնարին էր թվում: Հայաստանի մտավորականությունը, նրա ամենանվիրյալ և համարձակ հատվածը գործում էր առավելապես գաղտնաբար՝ ընդհատակյա կարգով թեև արդեն բարձր ձայներ էին լսվում: Գրողներ, նկարիչներ, հրապարակախոսներ, այլ մտավորականներ էին ասպարեզ գալիս, որոնք այլևս մտադիր չէին հոգեկան անտանելի ցավն իրենց ներսում լռեցնելու: Այդ ամենի արտահայտությունը եղավ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ծնունդը, որը զորեղ հարված էր լռության պատին: Այս ցավի մասին էին աղաղակում Հովհաննես Շիրազի պոեզիան և բազում այլ գրողների, արվեստագետների ստեղծագործությունները: Մեր ժողովրդի հիշողությունը հուշարձան դարձավ ոչ միայն գրական գործերում, այլև մարդկանց հոգիներում: 1965 թվականին, երբ Սփյուռքի ջանքերով աշխարհում, այնուամենայնիվ, մեծ թե փոքր մասշտաբներով նշվեց Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը, Խորհրդային Հայաստանում ևս վերափոխություն տեղի ունեցավ հանրային գիտակցության և հոգեբանության մեջ: Ի վերջո Երևանը ընդվզեց, և լռության պատնեշը խորտակվեց այդ թվականի ապրիլքսանչորսյան հուժկու պոռթկումով, որը ցնցող տպավորություն թողեց Խորհրդային Միությունում: Ահա՜ այդպես տապալվեց դարի դավադրությունը, որը ծրագրել և հյուսել էին մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությունն իրագործած թուրք ոճրագործները: Թեև կես դար ուշացումով աշխարհն իմացավ հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգության մասին:

### Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցումը

Գուցե ոմանց զարմանալի թվա, բայց իրական փաստ է, որ խորհրդային Հայաստանի իշխանությունները նախօրյակին արդեն մտորել և նախանշել էին Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի կապակցությամբ կատարվելիք աշխատանքների սցենարը: Դրան նպաստել էին նաև երկրում պետական մի շարք բարձր պաշտոններ զբաղեցնող հայրենանվեր մտավորականների նախաձեռնություններն ու միջնորդությունները: Դեռևս 1964 թ. հուլիսի 16-ին պատմաբան Ծատուր Աղայանի (Մարքսիզմ-լենինիզմի հայկական մասնաճյուղի տնօրեն), Հակոբ Ինճիկյանի (ԳԱ արևելագիտության ինստիտուտի սեկտորի վարիչ), Ջոն Կիրակոսյանի (ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ) նախաձեռնությամբ և ստորագրությամբ գաղտնի նամակ է հղվում Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախագահությանը՝ Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցը պատշաճ կերպով ոգեկոչելու հարցով: Այդ ժամանակ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում էր Յակով Զարուբյանը,

որն արմատներով սերում էր հինավուրց Արդվին քաղաքից: Ջարուբյանը վերոնշյալի կապակցությամբ 1964 թ. դեկտեմբերի 13-ին դիմում է հղում Մոսկվա՝ ԽՄԿԿ կենտկոմին: Դիմումում նշվում և հիմնավորվում էր առաջին համաշխարհային պատերազմի նահատակների հիշատակին Երևանում հուշարձան կառուցելու անհրաժեշտությունը: Մոսկովյան ղեկավարների բարյացակամությունը ստանալու նպատակով չէր գործածվում «Մեծ եղեռն» բնորոշումը: ԽՍՀՄ ղեկավարության որոշման վրա, թերևս, ազդեցություն է ունենում ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի նկատմամբ Լենինի ժամանակներից հաստատված քաղաքականությունը խմբագրելու տրամադրությունը: Հայկական կողմը պահը ճիշտ էր ընտրել: Այդ «դաբրոն» ստանալուց հետո Երևանում ավելի վճռական են գործում: 1965 թ. մարտի 16-ին Խորհրդային Հայաստանի մինիստրների խորհուրդը որոշում է Հայոց եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու համար Երևանում հուշահամալիր կառուցել: Ի սկզբանե հուշահամալիրի կառուցման գաղափարը ձեռք է բերում համաժողովրդական ու համազգային բնույթ և նշանակություն: Խորհրդային Հայաստանի բնակչությունն ու սփյուռքահայությունը քաջ գիտակցում էին, որ նման հուշահամալիրի գոյությամբ հայությունը ճեղքելու է Հայոց ցեղասպանության շուրջ հյուսված դավադիր լռությունը:

Հուշահամալիրի կառուցման գործընթացն իրականանում է առանց էական խոչընդոտների և միջադեպերի: Շատերն էին ցանկանում անվճար աշխատել այդ կառույցի շինարարությունում: Աշխատանքներն սկսվում են 1966 թ. սկզբից և տևում մինչև հաջորդ տարվա՝ 1967 թվականի աշուն: Կառույցի հեղինակներն էին երիտասարդ տաղանդավոր ճարտարապետներ Արթուր Թարխանյանը, Սաշուր Քալաշյանը՝ քանդակագործ Վան Խաչատուրը: Հուշահամալիրի պաշտոնական բացումը տեղի է ունենում 1967 թ. նոյեմբերի 29-ին՝ ՀԿԿ Կենտկոմի ողջ շքախմբի մասնակցությամբ:

Ծաղկեպսակներ տեղադրելու արարողությունից հետո տեղի է ունենում միտինգ, որից հետո հանրապետության թիվ 1 պաշտոնյան՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը բոցավառում է հուշարձանի անմար կրակը:

Հուշահամալիրը զբաղեցնում է 4500 քմ տարածք: Ձախ կողմից ձգվում է 100 մետր երկարությամբ հուապատը: Կենտրոնում գտնվում է 30 մետր տրամագծով հավերժության տաճարը՝ դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե մույթերով: Ճշմարիտ է դիտարկված, որ այցելուներին դեպի տաճարի սրահն ու հավերժության անմար կրակն են առաջնորդում հարթակից իջնող անսովոր կտրուկ թեքության աստիճանները, որոնք կարծես պարտադրում են խոնարհվել Մեծ եղեռնի զոհերի հիշատակի առջև: Հավերժության տաճարից աջ վեր է խոյանում 40 մետր բարձրությամբ «Վերածնվող Հայաստան» հուշասյունը, որը թրի նման հառնում է դեպի երկինք:

### Հուշահամալիրը սրբազա՞ն ուխտատեղի

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը ոչ միայն մայրաքաղաքի տեսարժան վայրերից է, այլև ուխտատեղի է դարձել հարյուր հազարավոր հայերի համար: Բացի ապրիլի 24-ից, երբ զանգվածային երթ է տեղի ունենում դեպի հուշահամալիր՝ վաղ առավոտից մինչև ուշ երեկո, այստեղ երբեք այցելուների պակաս չի լինում ողջ տարվա ընթացքում՝ անկախ եղանակային պայմաններից: Եղել են տարիներ, երբ ապրիլի 24-ին ժողովուրդը նույն հոծ ու անսերեր շարքերով բարձրացել է Ծիծեռնակաբերդի սրբազան բարձունքը հորդառատ անձրևի կամ ձյան պայմաններում:

Աշխարհի որևէ վայրում այնքան ծաղիկ, ծաղկեփնջեր ու ծաղկեպսակներ չեն զետեղվում, որքան այստեղ՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակի շուրջը: Աշխարհի ողջ հայության, նրա համախոհների և բարեկամների հայացքը մշտապես ուղղված է սրբացած համալիրին: Այն բացառիկ ուխտատեղի է մի ողջ ազգի համար: Եվ, թերևս, Հայաստանի Հանրապետության ներկա տարածքի միայն այս կետից նայելիս է դիմացդ վեհորեն հառնում խրոխտ Արարատը շրջակայքով, ինչպես և … ողջ Արևմտյան Հայաստանը՝ մինչև Եփրատ, Ճորոխ ու Տիգրիս: Ողջ հայությունը հենց այստեղ է սկսում մտորել իր ապագայի և գալիք ժամանակների մասին…

# Մեզի համար՝ Հայաստան միշտ ամեն բանէ վեր

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
**Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր**

Երբ մեր առաջին քայլերը կ՚առնէինք ՀՅԴ շունչին ներքեւ, Պատանեկանի մեր «ժողովները» կ՚աւարտէինք բոլորս միաբերան գոչելով **«Հայաստան ամեն բանէ վեր»**: Շաբաթէ շաբաթ, տարուէ տարի:

Այդպէս դաստիարակուեցանք: Այդպէս ներշնչեցին մեզ մեր վարիչները:

Հայաստանի Հանրապետութիւնը այդ տարիներուն, անկէ առաջ ու անկէ ետք երկար ատեն խորհրդայնացած Հայաստանն էր, կոտորակը մեր երազած Հայաստանին, մանաւանդ անկախ պետականութիւն ունեցող Հայաստանին, ենթարկուած հակազգային, խորթ ու վտանգաւոր վարժակարգի մը, սակայն մենք կը շարունակէինք գոռալ ի լուր աշխարհին՝ **«Հայաստան ամեն բանէ վեր»:**

Մենք հասակ առինք Հայաստանով առինքնուած, ապրեցանք անոր երգ ու պարով, անոր գիր ու գրականութեամբ, անոր նուազագոյն նուաճումներով խանդավառ, յարատեւ տագնապներով՝ տառապող, եւ գործեցինք անոր համար, անոր Դատին համար: Նոյն ոգիով ալ մեծցուցինք մեր զաւակները: Ապա՝ մեր թոռները՝ բախտաւորները, որոնք ծնան վերանկախացած Հայաստանի մը առկայութեան ու միշտ հաւատացին, որ Հայաստան վեր է ամեն բանէ:

Եւ ահա յամի Տեառն 2025-ին, Հայ յեղափոխական դաշնակցութեան 35-րդ Ընդհանուր ժողովը իր յայտարարութեամբ եկաւ հաստատեց, վերահաստատեց, որ իր ռազմավարական առաջնահերթութիւններու վեց կէտերէն առաջինն է Հայոց անկախ պետականութեան հզօրացումը, տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան վերականգնումը, ժողովրդավարական, իրաւական, սոցիալական պետութեան կերտումը՝ Անկախութեան հռչակագրի տառին եւ ոգիին համապատասխան: Ինչ որ աներկբայօրէն ցոյց կու տայ, թէ Հայաստան է մեզի համար ամեն բանէ վեր, վեր՝ ինչ ալ ըլլայ այնտեղ տիրող իշխանութիւնը: Այստեղ կ՚ուզեմ կանգ առնել պահ մը այս խորհրդաւոր բառին վրայ՝ «Հայաստան»:

Ինչ կը նշանակէ այդ անունը մեզի համար: Ան չի սահմանափակուիր պետական մշտափոփոխ սահմաններով, չի մեծնար կամ փոքրանար իր նուաճած յաղթանակներով կամ կրած պարտութիւններով: Ան կը խորհրդանշէ մեր արմատները, մեր ժառանգած ամբողջ պատմութիւնը, մշակոյթը, լեզուն, եւ անոնց տէր կանգնելու մեր պարտաւորութիւնը: Առանց այդ բոլորին, ան իմաստ ունենալէ կը դադրի, կը վերածուի լոկ այսօր ՀՀ հողային տարածքին վրայ ապրողներու բնակավայրին: Մինչդեռ ան Հայրենիք է, գլխագրուած Հայրենիք, որ կ՚ընդգրկէ անկէ աւելին, բռնագրաւուած հողերն ու աշխարհացրիւ բովանդակ հայութիւնը: Հայաշխարհը: Այդ իսկ պատճառաւ է ամեն բանէ վեր: Այսօր ամեն ջանք կը թափուի մեր թշնամիներուն կողմէ, որ խախտի մեր այս հաւատքը: Որ դադրինք հաւատարիմ մնալէ մեր տեսլականին՝ Ազատ, անկախ ու միացեալ Հայաստանին, մոռնանք երազը, եւ ոչ միայն երազը, այլ ներկայ վերապրած փոքրիկ կոտորակն անգամ, անտեսենք անոր կարիքները, դադրինք անոր օգնելէ իսկ, մենք մեր խնդիրներով զբաղինք միայն, Սփիւռքով զբաղինք:

Այո, նոյնիսկ մեր անմիջական շրջանակներուն մէջ, անգամ մեր շարքերուն մէջ կը խմորուին այնպիսի տրամադրութիւններ, թէ ալ կը բաւէ ինչքան զոհողութիւն ըրինք Հայաստանի համար, Սփիւռքը զօրացնենք...

Շատ էր մեր տուածը իբր հայ՝ հազիւ վերանկախացած մեր երկրին օգնելու համար. այլեւ պաշարման ու յարձակումի ենթարկուած մեր երկրի մէկ մասին՝ Արցախի ալ անկախութիւնը փրկելու համար: Հազար տարիէ աւելի ժամանակաշրջանի մը մէջ հազիւ երկուքուկէս տարի իբր անկախ երկիր գոյութիւն ունեցած: Շատ էր, թէ՛ չափազանց քիչ...

Սփիւռքը զօրացնենք, այո, բայց ինչո՞ւ զօրացնենք: Պարզապէս ինքն իր համար:

Ահա իր առաջնահերթութիւններու սահմանումին մէջ Ընդհանուր ժողովը կը նշէ՝ Սփիւռքի կազմակերպական հզօրացում, համահայկական օրակարգերու շուրջ ազգային եւ քաղաքական համախմբում:

Այդ համահայկական օրակարգերն ալ կը նշուին առաջնահերթութիւններու միւս կէտերով՝

- Արցախի ազատագրման օրակարգի շուրջ համազգային համախմբում, միջազգային իրաւաքաղաքական երաշխիքներու գործադրումով՝ արցախահայության հաւաքական վերադարձի եւ հիմնարար միւս իրաւունքներու իրացում,
- Հայոց բանակի, պաշտպանութեան և անվտանգութեան համակարգերու ամրապնդում,
- Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ հատուցման իրաւունքի հետապնդում,
- Ազգային եւ պետական շահերու վրայ կառուցուած, անվտանգային սպառնալիքները յաղթահարող արտաքին քաղաքականութեան որդեգրում:

Այս հարցերու շուրջ համահայկական մօտեցումն է, որ քանդելու, կամ նոյնիսկ գոյութիւն առնելու արգելք հանդիսանալու համար կ՚ենթարկուինք ամեն տեսակի ճնշումներու: Որպէսզի գիծ քաշուի մեր վրայէն թէ՛ իբր կազմակերպութիւն եւ թէ՛ իբր ժողովուրդ: Այո, զօրաւոր Սփիւռք՝ դիմակայելու համար այդ ճնշումներուն, պահելու համար մեր ինքնութիւնը, շարունակել կարենալու համար մեր գոյամարտը ցկատարածս աշխարհի: Ասոր համար ընելիք ունինք թէ՛ իբր պետութիւն, թէ՛ իբր հայութիւն՝ աշխարհի վրայ ամենուրեք, իւրաքանչիւր շրջան, իւրաքանչիւր ազգային, իւրաքանչիւր ընկեր:

Այո՛, Հայաստան միշտ ամեն բանէ վեր: Բոլորիս համար: ■

## Հովհաննես Թումանյան

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փլռված ու ցրված հազար հազարով…

Ու կրրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասիսն ու Արան, Սիփանն ու Սրրմանց, Նեմրութ, Թանդուրեք,
Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,
Անհաս, աննրվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գրլխի վերև…

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նրման,
Կանչեցի թրշվառ էն հոգիներին՝ ցրրված հավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:
- Հանգեք, իմ որբեր… իզուր են հուզմունք, իզուր և անշահ…
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կրմնա…

Աջիցրս Եփրատ, ձախիցրս Տիգրիս՝ ահեղ ձեներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գրնացին խոր-խոր ձորերով,
Ամպերն էլ ելան Ձիրավի ձորից, հրսկա բուրվառից,
Ճանապարհ ընկան ծաղկանց սարերից, Հայկական պարից,
Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու,
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խրնկելու
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ…
- Հանգեք, իմ որբեր… իզուր են հուզմունք, իզուր և անշահ…
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կրմնա…

1915 թ.

*Ջահերով երթ. Երևան, 23-ը ապրիլի, 2025 թ.*

# ԴՐՕՇԱԿ